ԳՈՀԱՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# ԳԱՆՁԱԿ-ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2003

ԸՆԹԵՐՑԱՐԸՆ
ДУБЛЕТ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՀԱՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# ԳԱՆՁԱԿ-ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ (ՄԱՐԶ, ՆԱԽԱՆԳ) ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ

Հանձնում եմ
Սարգսյանի
Ինստիտուտ
Գրադ-ուղարկում
24/III 2004 թ.

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

А II 88902

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ա 706

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր պատմական գիտությունների դոկտոր Ա.Ա.Մելքոնյան
Գրախոս պատմական գիտությունների դոկտոր Է.Ա.Կոստանդյան

Ա 706 Առաքելյան Գ. Գանձակ-Ելիզավետպոլի (մարզ, նահանգ) բնակչությունը XIX դ.

*Աշխատությունը նվիրված է Գանձակ-Ելիզավետպոլի* նահանգի բնակչության բազմաբնույթ հարցերի լուսաբանմանը:

*Այս տարածքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում* եղել և մնում է *հայ ժողովրդի* մի ստվար հատվածի մշտական հայրենիք-բնօրրանը և «Հայոց արևելից կողմանց» անբաժանելի երկրամասը:

*XVIII – XIX դ.դ. տեղի ունեցած* թուրք-*պարսկական* արշավանքների և ռուս-*պարսկական*, ռուս-թուրքական պատերազմների ընթացքում Արևելյան Հայաստանի Գանձակ, Ղարաբաղ, Զանգեզուր և այլ տարածքները հայտնվում էին պատերազմական գործողությունների թատերաբեմում, որի հետևանքով այնտեղ *կատարվեցին* բնակչության մեծ տեղաշարժեր, որոնք ազդեցին նաև ազգաբնակչության կազմի և նրա թվաքանակի վրա:

Գիրքը հասցեագրվում է ընթերցող լայն հասարակայնությանը:

Ա $\frac{0503020913}{703(02)-2003}$ 2003 ԳՄԴ 63 6 (2Հ)

ISBN 5-8080-0548-5

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2003 թ.

# Երկու խոսք

Սույն աշխատությունը նվիրված է Գանձակի նահանգի (մասամբ նաև Անդրկովկասի) XIXդ. ազգաբնակչության կազմին, տարբեր ազգերի կյանքին, կենցաղին, կրոնական դավանանքին և նրանց փոխհարաբերություններին, որոնք հիմնականում հատկանշական էին նաև ողջ XX դարի ընթացքում:

Գանձակ-Ելիզավետպոլի տարածքը (նախկինում՝ Աղվանք, Առան և այլն) եղել և մնում է հայ ժողովրդի մի հատվածի մշտական հայրենիք-բնօրրանը և պատմական Հայաստանի այն երկրամասը, որը տարբեր ժամանակաշրջաններում նշանակալից դեր է խաղացել հայ ժողովրդի գոյության ողջ ընթացքում: Արցախ-Ղարաբաղը մշտապես եղել է Հայաստանի «Արևելից կողմանց» հենարան-ամրոցը, որն՝ իր վրա վերցնելով արտաքին թշնամիների հարվածները, պաշտպանել է հայկական Արարատյան պետականությունը:

Նշված նահանգի հին ու նոր ժամանակների տեղաբնիկներն են եղել հայերը և ուտիները. այդ են վկայում հնագույն գրավոր աղբյուրներն ու պահպանված բազմաթիվ հուշարձանները: Աշխատության մեջ նշված մյուս ազգություններն ու ժողովուրդները եկվորներ էին, որոնք այս տարածքներում հայտնվել էին ուշ միջնադարից, իսկ գերմանացիներն ու ռուսները՝ XIX դ. 20-30-ական թվականներից սկսած:

«Հայոց արևելից կողմանց»՝ Արցախ-Ղարաբաղ, Ուտիք-Գարդմանք-Գանձակ, Սյունիք և հարակից այլ տարածքների, տարբեր դարաշրջանների պատմության համակողմանի ուսումնասիրությունը մշտապես եղել է և մնում է պատմաբանների և այլ մասնագետների ուշադրության կենտրոնում: Խորհրդային իշխանության տարիներին հիշյալ տարածքների մեծ մասը հանիրավորեն գտնվում էր Խորհրդային Ադրբեջանի կազմում և այդ շրջանի պատմագրության մեջ արգելված էր նշել դրանց՝ Հայաստանի մասը կազմելու,մասին:

Բոլշևիկ-կոմունիստների վարած ազգային սխալ քաղաքականությունը ոտնահարում էր ազգերի ինքնությունը, մշակութային, տնտեսական և այլ շահերը, ինչպես նաև անտեսվում ու կամայականորեն գծվում էին նրանց ունեցած պատմական տարածքների քարտեզները: Այդ բոլորն ի վերջո հանգեցնում էր ժողովուրդների դժգոհությանը և պոռթկուն պայքարին, որի ցայտուն արտահայտությունը եղավ 1988-90-ական թվականներին բռնկած Ղարաբաղյան շարժումը, որը ժողովրդավարության առկա պայմաններում դեռևս մնում է լարված վիճակում և սպասում է իր արդարացի լուծմանը:

## Գանձակը (գավառ, նահանգ) Անդրկովկասի վարչատարածքային համակարգում (XIXդ.)

XIX դ. առաջին երեսնամյակի ընթացքում՝ ռուս-պարսկական և ռուս-թուրքական երկարատև պատերազմներից հետո, Անդրկովկասը միացվեց Ռուսաստանին:

Պավել I-ի, 1801թ. հունվարի 18-ի հրովարտակով Վրաստանն անցավ Ռուսաստանի հովանավորության, իսկ նույն թվականի սեպտեմբերի 12-ի՝ Ալեքսանդր I-ի հրովարտակով, պաշտոնապես արձանագրվեց Ռուսաստանին՝ Վրաստանի միացման իրողությունը:[1] Այդ ժամանակ Արևելյան Հայաստանի հիմնական տարածքն ընդգրկված էր Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի (Արցախ), Գյանջայի (Գանձակ) պարսկահպատակ խանությունների մեջ, իսկ հյուսիսային շրջանները՝ Լոռին, Փամբակը, Բորչալուն ու Շամշադինը մտնում էին Արևելյան Վրաստանի թագավորության մեջ և նրա՝ Ռուսաստանին միացման ժամանակ էլ անցան վերջինիս տիրապետության տակ: 1804թ. հունվարին գեն. Պ. Ցիցիանովը գրոհով վերցրեց Գանձակի բերդը, ապա և նույնանուն խանությունը, որը վերանվանվելով «Ելիզավետպոլի մարզ» Ելիզավետպոլ կենտրոնով, միացվեց Վրաստանին և ընդգրկվեց Ռուսաստանի կառավարման ոլորտի մեջ:[2] Այդ ընթացքում մարզը զբաղեցնում էր 5000 քառ. մղոն տարածք և ուներ մոտ 18000 բնակչություն:[3]

1805թ. մայիսի 14-ին Քյուրակ-չայ գետի ափին, գեն. Ցիցիանովի և Իբրահիմ խանի միջև կնքված պայմանագրով, Ղարաբաղի խանությունն ընդունեց ռուսական հպատակություն. և վերջապես 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի հաշտության պայմանագրով 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, Ռուսաստանի կողմից գրավված տարածքները՝ Դաղստանը, ինչպես նաև Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունները և Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի և Շորագյալի գավառներն անցան Ռուսաստանի տիրապետության տակ: Խանություններում առժամանակ պահպանվեցին խանական կարգերը. օրինակ Ղարաբաղում այն գոյատևեց մինչև 1822թ., երբ Մեհտի-Կուլի խանը՝ դրժելով իր հավատարմությունը

---

[1] Присоединение Восточной Армении к России. Собрание документов (այսուհետ՝ Присоединение), т. I (1800-1813), Ереван, 1972, ст. 44, 60.
[2] Նույն տեղում, էջ 192:
[3] Иваненко В., Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, ст. 47.

Ռուսաստանին, փախավ Պարսկաստան: Գեն. Երմոլովը (նաև Կովկասի կառավարիչ) հրովարտակով դիմեց տեղի բնակչությանը. «1822թ. նոյեմբեր ամսից կասեցվում և վերացվում է խանական իշխանությունը Ղարաբաղում»[1] և, տեղի բնակիչները լիովին կարող են հենվել Ռուսական իշխանության վրա, ապավինելով նրա հովանավորությանը:[2] 1822-1823թթ. տվյալներով՝ Ղարաբաղը զբաղեցնում էր 13000 քառ. մղոն տարածք, 18500 ծուխ՝ մոտ 90000 երկսեռ բնակչությամբ:[3] Խանության վերացումից հետո՝ 1822-1840թթ. ընթացքում այստեղ ստեղծվել էր «Երկրամասային ինքնավար վարչություն», որը ենթարկվում էր զինվորական տեղամասի պետին:[4]

Անդրկովկասի մնացած՝ չգրավված, տարածքների համար, պայքարը հետագայում շարունակվեց: 1826-1828թթ. ռուս-պարսկական հերթական պատերազմում, Ռուսաստանի հաղթանակից հետո՝ 1828թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի նշանավոր պայմանագրով Երևանի ու Նախիջևանի խանությունները միացան Ռուսաստանին: Եվ 1828թ. մարտի 20-ին Նիկոլայ I-ի կողմից այդ պայմանագիրը վավերացնելիս, նա ստորագրեց ևս մեկ այլ հրամանագիր. «....հրամայում եմ, Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանություններն այսուհետ բոլոր գործերում անվանել «Հայկական մարզ», և այն ներառնել մեր տիտղոսի մեջ...»[5]. փաստորեն ստեղծվեց «Հայկական մարզ» վարչամիավորը:

1828-1829թթ. տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմը նույնպես ավարտվեց ռուսների հաղթանակով. 1829թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրով սև-ծովյան մի քանի նավահանգիստների հետ մեկտեղ Ռուսաստանի տիրապետության տակ անցավ Ախալցխայի փաշայության մի մասը՝ Ախալքալաք, Ախալցխա բերդաքաղաքներով: Օսմանյան կայսրությունը այդ պայմանագրով փաստորեն ճանաչեց նաև Գյուլիստանի ու Թուրքմենչայի պայմանագրերը: Այսպիսով ավարտվեց Անդրկովկասի Ռուսաստանին միացման գործընթացը: Նշված նշանակալից իրադարձությունները բախտորոշ եղան երկրամասի բոլոր ժողովուրդների, մասնավորապես քրիստոնյաների համար, որոնք նախկինում տուժում էին ոչ միայն տնտեսական շահագործումից, այլև ենթարկվում էին ազգային, բարոյակրոնական հալածանքների ու հետապնդումների: Արևելահայության համար ստեղծվեցին, բարենպաստ պայմաններ՝ քաղաքական,

---

[1] Ղարաբաղի խանությունը ստեղծվել էր 1747 թ.:

[2] Акты собранные Кавказской Археографической коммиссию... (այսուհետ՝ АКАК), т. VI, Тифлис, 1875, ч.I, док. V1299.

[3] Иваненко В., Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, ст. 146.

[4] Туман В., Карабахский конфликт, Ереван, 1999, ст. 6.

[5] "Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа", т. I, Москва, 1833, ст. 278.

տնտեսական ու մշակութային զարգացման համար. տեղին է այստեղ վկայակոչել Ֆ. Էնգելսի հայտնի այն դրույթը, որ «Ռուսաստանն իրոք խաղում էր առաջադիմական դեր Արևելքի երկրների կյանքում»:[1]

Գրավված հիշյալ տարածքներին Ռուսական կառավարությունը, ի սկզբանե, վերաբերվում էր որպես գաղութի: Այնպես որ «Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ցարիզմի շահագրգռվածությունն ամենևին էլ չի բխել տեղի ժողովուրդների նկատմամբ ռուսական ցարերի .... «մարդասիրությունից» և «ողորմածությունից», ինչպես փորձել են ներկայացնել ցարական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները (Ն.Սուխոտին, Վ.Պոտտո, Ն.Դուբրովին, Վ.Բուտկով, Ա.Շչերբակով և այլոք)... ցարիզմի բուն նպատակն է եղել ընդարձակել կայսրության սահմանները և Անդրկովկասը ծառայեցնել իր գաղութատիրական շահերին»:[2] Ինչպես նկատել է պրոֆ. Վ. Պարսամյանը. «Անդրկովկասի գաղութացումը ցարիզմին ամենից առաջ անհրաժեշտ էր՝ նրա բացառիկ կարևորություն ներկայացնող ռազմա-ստրատեգիական նշանակության, ջրային (Սև ու Կասպից ծովեր) և ցամաքային ճանապարհով դեպի Թուրքիա, Իրան և ապա Հնդկաստան հասնելու համար: Այն որպես շուկա և հումքի առատ բազա օգտագործելու համար և վերջապես, Անդրկովկասի գաղութացումը ցարիզմին անհրաժեշտ էր իր ամենազորեղ մրցակիցների Անգլիայի ու Ֆրանսիայի քաղաքական-տնտեսական ուժեղ ազդեցությունն Արևելքի երկրներում թուլացնելու և իր ազդեցությունն այդ երկրներում տարածելու համար»:[3]

Դեռևս 1827թ. ապրիլ ամսին, Ռուսաստանի ֆինանսների մինիստր կոմս Կանկրինը, կառավարությանը ներկայացրել էր իր կողմից մշակված օրենքների մի նախագիծ Անդրկովկասի վերակառուցման մասին: Նշվում էր, որ երկրամասն, առաջին հերթին, պետք է բաժանվեր վարչատնտեսական համապատասխան գոտիների: Այն ընդգրկում էր Վրաստանի (Կախեթիա, Քարթլի) և նրան հարակից Բորչալուի, Ղազախի, Շամշադինի, Փամբակ-Շորագյալի մահմեդական ուղեմասերը (դիստանցիա) և Ելիզավետպոլի մարզը:[4] Այս նախագծի սկզբում Կանկրինը նշել է. «Վերջին երեք տասնամյակներում (1800-1830) Ռուսաստանն Անդրկովկասում գործել է ոչ միայն որպես բարերար հարևան երկիր, այլ նաև իշխող տիրակալ և նվաճված տիրույթների լիիրավ տեր ու տնօրեն...»:[5] Սա

---

[1] К.Маркс,Ф.Энгельс, Сочинения, т.21,Москва, 1955, ст.211.
[2] Հայ ժողովրդի պատմություն, հ.5, էջ 114:
[3] Պարսամյան Վ. Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940, էջ 25-26:
[4] Обозрение российских владений Закавказьем, ч.I, СПБ, 1836, ст.88.
[5] Նույնի առաջաբանը, էջ 5-6:

գալիս է լրացնելու վերը նշված ցարիզմի գաղութային քաղաքականության մասին եղած դատողությունները:

Ցարիզմին, հիմնականում, մտահոգում էր ողջ Անդրկովկասում միանման, միասնական վարչակարգ ստեղծելը, որով պետական ընդհանուր օրենքներով դյուրին կլիներ երկրամասի կառավարման գործընթացները: Այդ նպատակով 1833թ. ստեղծվեց «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտե», որը պետք է զբաղվեր սույն տարածաշրջանի բարեփոխումների ծրագրեր մշակելով և իրականացնելով:[1] Դրանցում որպես կանոն անտեսվում էին երկրամասի բազմազան բնակչության ազգային առանձնահատկությունները, որոնց որևէ մեկի դրսևորման ու կիրառման անհրաժեշտության դեպքում «... մեր հասարակական և պետական միտքն ու կարծիքը հանդիպում էին անհաղթահարելի խոչընդոտների: Եվ այդ ուղղությամբ գործադրած բոլոր ջանքերը մշտապես նյարդայնացրել են իշխանություններին և հուզել ու ըմբոստացրել հասարակայնությանը»:[2] 1837թ. երկրամաս գործուղվեց պետական հատուկ հանձնաժողով՝ սենատոր Գանի գլխավորությամբ:[3] Շատ չանցած՝ 1838թ. փետրվարին, այս հանձնաժողովի կազմած զեկուցագիրը ներկայացվեց կառավարության քննարկմանը: 1840թ. ապրիլի 10-ին այն վավերացվեց կայսեր կողմից և օրենքի ուժ ստացավ:

Հիշյալ ազգային առանձնահատկություններն անտեսված էին նաև վարչա-տարածքային քաղաքականության օրենսդրությունը կիրառելիս: Անդրկովկասի, այդ թվում նաև Արևելյան Հայաստանի տիրույթները տնօրինվում էին կամայականորեն: Վարչական միավորները կազմավորելիս, անտեսվում էին տվյալ վայրում ապրող ժողովրդի ազգային պատկանելության, նրա ունեցած պատմական հայրենիքի տարածքները և այլ գործոններ: Ուստի պատահական չէր, որ Հայաստանի և տվյալ ժամանակահատվածի հայկական շրջանները զետեղվում էին մերթ այս, մերթ այլ վարչական միավորի մեջ, որն իր բացասական ազդեցությունն էր ունենում հայ ժողովրդի համախմբման ընթացքի վրա: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար, պետք է նշել, որ Անդրկովկասի պարագայում, հատկապես, վարչական միավորները ձևավորելիս, շատ դժվար էր բնակչության միայն ազգային պատկանելությամբ առաջնորդվել, քանի որ ժողովուրդները հավաք չէին բնակվում, օրինակ՝ հայերը ցրված էին ողջ երկրամասի մեջ: Այդ տեսակետից տիպական էր Ելիզավետպոլի մարզը: 1804թ. հունվարի 4-ին Գյանջայի խանության գրավումից հետո, մահմեդական բնակչության մի ստվար

---

[1] Иваненко В., նշվ. աշխ., էջ 341:
[2] Шахатунян А. Административный передел Закавказского края, Тифлис, 1918, ст. 4.
[3] Иваненко В., նշվ. աշխ., էջ 343:

զանգված անցավ Պարսկաստան, որից և մեծացավ մարզի հայ ազգաբնակչության թվաքանակը. այն համալրվեց նաև Երևանի խանությունից և Կարսի փաշայությունից այստեղ տարագրված հայերով:[1] 1810-ական թվականներին Ելիսավետպոլ քաղաքի և նույնանուն գավառի ազգաբնակչությունը կազմում էր 2044 հայ ընտանիք 9884 մարդ:[2] Որոշ ժամանակ անց, այստեղ արդեն նկատելի էին թուրք-թաթարները: Նման իրավիճակներում, բնական է, ցանկության դեպքում անգամ, իշխանություններին դժվար կլիներ ճիշտ կողմնորոշվելը: Սակայն, ցավոք, դրանք մերժվում և անտեսվում էին նաև բուն Հայաստանի (արևելյան հատված), այն ժամանակվա վարչական սահմանները որոշելիս: 1840թ. համապատասխան օրենքով Անդրկովկասում կազմավորվեցին Վրացա-Իմերեթական նահանգը Թիֆլիս, և Կասպիական մարզը Շամախի կենտրոններով: Առաջինի մեջ ներառվում էին Արևելյան Հայաստանի՝ Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Գանձակ-Ելիզավետպոլի գավառները, իսկ Կասպիական մարզի մեջ՝ Ղարաբաղը[3] և հայաշատ այլ վայրեր: Այդ ժամանակ էլ վերացվեց «Հայկական մարզը», որը «գալիս էր խորտակելու հայկական ինքնավարության պատրանքները և ցույց տալու, որ ցարիզմն արդեն անցնում է գաղութային անսքող քաղաքականության: Դրա ապացույցն էր նաև երկրամասի նոր վարչական բաժանման փաստը, որով դարձյալ անտեսվում էին ազգային առանձնահատկությունները»:[4]

Այդ իմաստով հատկապես ակնառու էր Ալեքսանդրապոլ գավառի կարգավիճակը. այսպես՝ 1840թ. Փամբակ-Շորագյալի դիստանցիան, Ախալքալաքի (Ջավախք) հետ միասին կազմեց այդ գավառը, որն ընդգրկվեց Վրացա-Իմերեթական, իսկ 1846 թվից՝ Թիֆլիսի նահանգների մեջ:[5] Իսկ երբ կազմավորվեց Երևանի նահանգը, նրա մեջ մտնող Ալեքսանդրապոլի գավառից անջատվեց հայաբնակ, պատմական Ջավախքը, իսկ 1862թ., մեկ այլ որոշմամբ, նաև Լոռին (անցան Թիֆլիսի նահանգին), որոնց բնակիչները հիմնականում հայեր էին, օրինակ, Լոռիում, 1850-1860-ական թվականներին, հայկական ծխերի թիվը 4877 էր, իսկ բնակչությունը 39922 մարդ: Եղած 74 գյուղերից, 53-ը զուտ հայկական էին, իսկ 21-ը՝ խառն (հայ, վրացի, հույն, թաթար և այլն)

---

[1] Սատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 37, վավերագիր 360:
[2] Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 139:
[3] Иваненко В., նշվ. աշխ., էջ 342:
[4] Հայ ժողովրդի պատմություն, հ.5, էջ 209:
[5] Обзор Эриванской губернии за 1886 год, Эривань, 1887, ст.1-2.

ազգաբնակչությամբ:[1] «1831թ. Ախալքալաքի հայության թիվն անցավ 30 հազարից, որոնցից 1716 ընտանիք, մոտավորապես 10-13 հազար մարդ, տեղաբնիկներ էին»:[2]

1840թ. օրենքի վարչատարածքային բաժանման հիմքում ընկած էր, դեռևս 19-րդ դարի սկզբին, Պարսկաստանի վարչամիավորումների՝ խանությունների տարածքային սահմանները. օրինակ, նոր կազմավորված Ելիզավետպոլի գավառն իր մեջ ներառնում էր երբեմնի Գյանջայի խանության ողջ տարածքը և հարակից Շամշադինի ու Ղազախի ուղեմասերը: Նախկին մյուս խանություններից, համապատասխանաբար, ձևավորվեցին՝ Շիրվանի խանությունից՝ Շամախու, Ղարաբաղից Շուշիի, Շաքիից Նուխիի և Անդրկովկասի այլ գավառներ ևս: Անդրկովկասի գլխավոր վարչության խորհրդի որոշմամբ և նախաձեռնությամբ, հիշյալ գավառները բաժանվեցին տեղամասերի, որոնց մեծ մասը, աշխարհագրական դիրքով և սահմաններով, դարձյալ համընկնում էին պարսկական նախկին մահալների տարածքներին: [3]

Տեղամասերը ղեկավարվում էին նշանակովի, այսպես կոչված, ատենակալների[4] կողմից: Վերջինս ուներ իր տեղակալ-օգնականը, որն ընտրվում էր տեղացի արտոնյալ դասերից՝ ազնվականներից, խաներից, բեգերից. նստավայրն ընտրվում էր տվյալ տեղամասի մարդաշատ գյուղերից մեկը: Ատենակալի իրավունքները և պարտականությունները որոշվում և սահմանվում էր զեմստվոյի (տեղական ինքնավարություն) ոստիկանության կողմից: Տեղամասի ատենակալը ոչ միայն ոստիկանության աստիճանավոր էր, այլ նաև հաշտարար միջնորդ, դատական քննիչ և հաշտարար դատավոր: Նրանք իրավունք ունեին վարելու դատական գործերը, լսելու և հարթելու ոչ կարևոր, աննշան վեճերը, բողոքները և այլն: Այս ծառայությունների համար բնակչությունից գանձվում էին որոշակի գումարներ՝ 15-25 ռուբլու չափով: 1840թ. օրենքի կիրառմամբ, տեղական կառավարումը Կովկասում, Անդրկովկասում դարձավ եռաստիճան՝ տեղամասային, գավառային և նահանգային՝ դրանց համապատասխան պաշտոններով (տեղամասի ատենակալ, գավառապետ, նահանգապետ):[5] Երկրամասի բնակչությունը և տեղական իշխանությունները դեռ չէին հասցրել յուրացնել ու հարմարվել հիշյալ իրավիճակին, երբ այն 1846թ. դեկտեմբերի 14-ի օրենքով, ենթարկվեց վարչական նոր բաժանման, ըստ որի՝ Անդրկովկասում կազմավորվեց չորս նահանգ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենդի: Այս

---

[1] "Район Тифлиско-Карско-Эриванский железной дороги в экономическом и коммерческом отношениях" (А.М.Аргутинский Долгорукий,Борчалинский уезд),СПБ, 1897, ст.45.
[2] Մելքոնյան Ա.Զավախք, Երևան, 1999, էջ 16: Տես՝ ՀՀ ՊԿՊԱ,Ֆ.114, ց 2, գ 3,թ. 132:
[3] Евангулов Г.Г. Местная реформа на Кавказе, СПБ, 1914, ст.10.
[4] Այդպես էին կոչվում տեղամասերի նշանակված պետական պաշտոնյաները:
[5] Евангулов Г.Г., նշվ. աշխ. , էջ 11:

անգամ ևս Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Ելիզավետպոլի գավառներն անցան Թիֆլիսի նահանգի մեջ. Ելիզավետպոլինը, դեռ դարասկզբից ենթարկվում էր Թիֆլիսին. նրա ազգաբնակչության հիմնական բնակիչները մնում էին հայերը, հետո թուրք-թաթարները, ռուսները, գերմանացիները և այլն: 1859թ. «Գանձակի գավառում կար 28335 հայ, 88316 թաթար, 5509 ռուս և 958 գերմանացի, ընդամենը 123118 մարդ (երկսեռ)[1], Ի. Սերեբրյակովի հիշյալ տվյալները, հատկապես թաթարների 88316-ը, անհամոզեցուցիչ են. ստացվում է, որ 1859-1860թթ. Ելիզավետպոլի մարզում (քաղաքի հետ միասին) ավելի շատ բնակիչ կար, քան 1873թ. (100050)[2] և անգամ 1886-1887թթ. (122888):[3]

Հիմնականում հայերով բնակեցված պատմական Արցախ-Ղարաբաղը մտավ Կասպիական կոչված մարզի մեջ: 1849թ. հունիսի 9-ին կազմավորվեց Երևանի նահանգը, որի մեջ մտնում էին Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի ու Օրդուբադի գավառները:

1867թ. դեկտեմբերի 9-ին, հերթական անգամ կատարվեց վարչական նոր բաժանում, ըստ որի ձևավորվեցին՝ Քութայիսի, Թիֆլիսի, Բաքվի, Երևանի և Ելիզավետպոլի նահանգներ: Ելիզավետպոլինը կազմավորվեց հարևան՝ Թիֆլիսի, Բաքվի, Երևանի նահանգների տարածքների հաշվին, միայն «Էրիվանի նահանգը կրճատվեց 1519 մղոնով, որովհետև Մեղրիի շրջանը միացավ Ելիզավետպոլի նոր նահանգին»:[4] Անդրկովկասի նշված հինգ նահանգներում գավառների թիվը 18-ից հասավ 29-ի, որից 8-ը (Ելիզավետպոլ, Արեշ, Ղազախ, Շուշի, Նուխի, Զանգեզուր, Զեբրաիլ, Ջհանշիր անուններով) մտնում էին Ելիզավետպոլի նահանգի մեջ, Ելիզավետպոլ կենտրոնով, որի անվանափոխումների մասին Մ. Թաղիադյանը գրում է. «Գյանջա, որ ի հնումն Գանձակ, երբեմն հայոց և երբեմն Աղուանից կարգացեալ շահաստան. սակս ստեպ փոփոխելոյ դարձադարձ իշխանութեանն ի նմա ... յաւուրս Էլիսաւետ կայսրուհւոյ առին Ռուսք, և անուն կարգեցին նմա

[1] Серебряков И., сельское хозяйство в Елисаветпольском уезде, Тифлис, 1862, ст. 68.
[2] Свод. стат. данных извлеченных из посемейных списков населения Кавказа, Тифлис, 1888, ст.1.
[3] Նույն տեղում: Տես նաև "Сборник сведений о Кавказе", т.IV, Тиф., 1878, т.VII, Тиф.., 1880.
[4] ЦГИА РФ, Ф.1268, оп.14, д. 153, л.156.

էլիսաւէտուպօլ»:[1] Գեներալ Ցիցիանովի կողմից անգամ սահմանվել էր 1 ռուբլու չափով տուգանք, նրանց՝ ովքեր քաղաքը կկոչեին նախկին անունով:[2]

1815թ. տվյալներով Ելիսավետպոլ քաղաքի բնակչության թիվը 6500 էր,[3] իսկ 1824 թվին՝ 7000 մարդ, 1500 ծուխ: Ի տարբերություն գյուղական շրջանների, քաղաքում համեմատաբար մեծամասնություն էին կազմում հայերը:[4] Նահանգի կազմավորման նախօրյակին, 1865թ. տվյալներով քաղաքում կար 15081 մարդ (9734 արական, 5347 իգական): Ըստ ազգության հայեր՝ 7948 (4215 արակ., 3733 իգ.) և թաթարներ՝ 7133 (5519 ար. և 1614 իգ.):[5] Վերջիններիս մոտ 3,5 անգամ կանանց թիվը պակաս էր տղամարդկանց թվից, որը տարակուսանք է առաջացնում: Քիչ քանակությամբ կային նաև այլազգիներ (ռուսներ, վրացիներ, գերմանացիներ և այլն): Նույն 1865թ. Ելիզավետպոլի գավառում կար 60017 մարդ (42132 ար. և 17885 իգ.), քաղաքի հետ միասին՝ (60017+15081) 75098 մարդ:[6]

Պետական խորհրդի կողմից հաստատված 1888թ. մայիսի 10-ի օրենքով, Անդրկովկասի հիշյալ հինգ նահանգների կազմում եղած՝ 29-ից գավառների թիվը դարձավ 37, որոնք իրենց հերթին բաժանվում էին 125 ոստիկանական տեղամասերի: Նշված հրահանգի 3-րդ կետով տվյալ նահանգի նահանգապետի հայեցողությանն էր թողնվում, թե գավառներից որը քանի տեղամասի կբաժանվի: Ըստ այդ վճռի՝

---

[1] Ճանապարհորդություն Սեսրովբայ Դ.Թաղիադեանց Վ.Ա. սարգավակի սրբոյ էջմիածնի ի հայս, հ.Առաջին, Կալկուտա, 1847, էջ 305

«Ելիսավետպոլ-նախկինում Գանձակ. Գյանջան եղել է մեծ քաղաք, որն ունեցել է 22 գերեզմանատուն: Այդ անվանն առաջին անգամ հանդիպում ենք XI դ.՝1088թ., երբ նրան տիրեց թուրք էմիրը՝ Բուղան: Այդ ժամանակ Գանձակը գտնվում էր Արցախի երկրամասում: Իսկ այժմյան նույնանուն քաղաքը կառուցվել է Շահ Աբասի կողմից, որը գտնվում է հին քաղաքից 7 մղոն հեռավորության վրա: Մինչև 1804թ. այն եղել է խանների քաղաք, իսկ հատկապես 1813թ. Գյուլիստանի պայմանագրից հետո դարձավ՝ Ռուսական: Իսկ Գյանջայի նշանավոր բերդը կառուցվել է 1712-1724թթ.՝ թուրքերի տիրապետության շրջանում:

Տես, Отдельный оттиск из "Всенародная история Российского Государства", раздел "История городов", т.II, Москва, 1866, ст. 768-769.

XVII դ. թուրք ճանապարհորդ և պատմագիր էվլիյա Չելեբին նշում է հետևյալը. «Ներկայումս (1640-50-ական թվ.) Գենջեն աջեմների (պարսիկներ Ա.Գ.) ծեռքումն է և մեծ քաղաք է. այն ունի 6000 տուն, այգիներ, պարտեզներ ջամի խան, բարեգործական շինություններ, բաղնիք, բեդիստան և բարեշեն ու հարուստ շուկա... Այս քաղաքն իշխանության կենտրոնն է. ունի 3000 նեռբեր, քարտուղար, բալանքար, դարուղու, կադի և դատավորներ... Քաղաքը գտնվում է այգիներով ու պարտեզներով հարուստ դաշտում, իսկ հարավից լեռներ են... Քաղաքը չորս կողմից շրջապատված է 7 նահիյեի (գյուղախումբ, համայնք) գյուղերով... Գենջեի բրի մետաքսը հայտնի է ամենուր...»: Տես՝ թուրքական աղբյուրները, հ.Գ., էվլիյա Չելեբի /թարգմանությունը Ա.Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 86: Այս և այլ նյութերի մանրամասները տես նաև՝ Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, ս.Ղազար, 1903-1905,, էջ 455-457:

[2] АКАК, т. II, Тифлис, 1868, ст. 597.

[3] Թաղիադեանց Մ., նշվ. աշխ., էջ 304-305:

[4] Иваненко В., նշվ. աշխ., էջ 125, տե՛ս АКАК, т. VI, ч. I, док. N 1356-1359.

[5] Сборник статистических сведений о Кавказе, т.I, Тифлис, 1869, от IV, ст. 22.

[6] Նույնի, էջ 74-75:

Ելիզավետպոլի 8 գավառները բաժանվեցին ոստիկանական 29 տեղամասերի. նրա համաձայնությամբ պիտի նշանակվեին սույն տեղամասերի պետերը պրիստավները և որոշեին վերջիններիս պաշտոնական նստելավայրերը և այլն: Սույն տեղամասերում ընդգրկված համայնքները՝ իրենց ծխերով ու բնակչությամբ, ենթարկվում էին տվյալ տեղամասի գյուղապետ-պրիստավին:[1]

[1] Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа, Тифлис, 1888, заключение, ст. 50-53.

# Գանձակ-Ելիզավետպոլի պատմա-աշխարհագրական դիրքը

Գանձակ-Ելիզավետպոլի նահանգը եղել է Հայաստանի հայտնի երկրամասերից մեկը և նշանակալից (նաև իր պատմա-աշխարհագրական դիրքով) դեր է խաղացել հայ ժողովրդի տարեգրության ողջ ընթացքում. «Ղարաբաղի անտառապատ լեռներն, անդնդախոր ձորերն, ահարկու կիրճերն, սեպաձև ժայռերն, անմատչելի քարայրերն, բաւախիտ անտառներն, անառիկ բերդերն ու բնութենաստեղծ ամրոցներն սոսկալի երկիւղ ազդելով արտաքին թշնամաց վերայ՝ անձեռնամխելի պահած են մեր սուրբ Հայրենիքը, Ղարաբաղը, նոցա բոլոր հարձակումներից»:[1]

Ելիզավետպոլի նահանգն իր տարածքով ամենաընդարձակն էր Անդրկովկասում. այն զբաղեցնում էր 37969,73 քառ. վերստ (մղոն) մակերես, որը տոկոսային հարաբերությամբ, կազմում էր երկրամասի տարածքի (221438 քառ. մղոն) 17,6 %-ը: Այն զբաղեցնում էր Կուր և Արաքս գետերի ավազանը և ձգվում մինչև Փոքր Կովկասի լեռները. հյուսիս-արևելքից հասնում էր մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթան, որով հյուսիսից սահմանակից էր Դաղստանի մարզին, արևելքից՝ Բաքվի նահանգին, արևմուտքից՝ նույն նահանգի Զաքաթալայի օկրուգին: Այս հատվածում առաջացած անկյունային տարածքում գտնվում էին նահանգի երկու՝ Նուխի և Արեշ գավառները: Հարավ-արևմուտքից անցնում էր Թիֆլիս և Երևան նահանգների սահմանագիծը, որի աջակողմյան տարածքներում ձևավորվել էին Ելիզավետպոլ նահանգի մյուս վեց գավառները՝ Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Ջեբրաիլի, Շուշիի և Զանգեզուրի:[2] Նահանգի հարավում, Արաքս գետով և Զանգեզուրի գավառով, անցնում էր երկու մեծ տերությունների՝ Ռուսաստանի և Պարսկաստանի պետական սահմանը, որով և կարևորվում էր նրա ռազմա-քաղաքական նշանակությունը: Այն նաև կարևոր էր Արևելքի խոշոր պետությունների հետ առևտրական և տնտեսական փոխշահավետ կապեր հաստատելու համար:[3] Սահմանի վրա բարձրացող անմատչելի լեռնաշղթաները նպաստավոր էին անգամ արևելյան երկրներից դեպի հյուսիս թափանցող վարակիչ հիվանդությունների,

---

[1] Գաղտնիք Ղարաբաղի, հեղինակութիւն Ապրեսի Բէկնազարեանց, Սանկտ Պետերբուրգ, 1886, էջ 71:
[2] Обзор Елисаветпольской губернии за 1897г., Тифлис, 1898, ст. 1-2.
[3] Присоединение ..., т. II, ст. 451-454, ("Договоры...", ст. 223-227).

համաճարակների կանխման հարցում. դրանք կարանտինի բնական պատնեշներ էին:[1] Նահանգի սահմանագծի երկարությունը 1255 մղոն էր, որից 765-ն անցնում էր բնականորեն անմատչելի լեռնային վայրերով և ուներ պաշտպանական ռազմական նշանակություն, մնացած 490 մղոնը կազմում էր Հյուսիս-արևմուտքի միջնահանգային պայմանական սահմանագիծը, որը հաղթահարելու համար առանձին դժվարություններ չկային:[2] Ընդհանուր առմամբ բնակլիմայական պայմանները բազմատեսակ էին. նահանգի մակերևույթը կազմված էր տափաստաններից, նախալեռնային ու բարձրադիր լեռնային շրջաններից. լեռնագագաթների բարձրությունը (ծովի մակերեսից բարձր) հասնում էր 12-13000 ֆուտի:[3] Այս իմաստով հատկապես աչքի էր ընկնում Զանգեզուրի գավառը, որն ամբողջությամբ մխրճված էր Փոքր Կովկասի լեռնաճյուղավորումների մեջ. երեք կողմերից շրջապատված էր լեռնային բարձր պատնեշներով, որոնց լեռնագագաթները ծովի մակերևույթից բարձր էին ավելի քան 7000 ֆուտով: Լեռնաշղթաների ճյուղավորումներով գավառի ողջ տարածքը կտրտվում էր անդնդախոր ձորերով, զառիթափ հովիտներով:[4] Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը շատ պատկերավոր է նկարագրում իր հայրենիք Արցախի բնաշխարհը. «Արցախի լեռնաշղթան, որ սկսուած է Երասխի ձախ ափից, անցած Արցախի, Գանձակի, Գարդմանի գլուխներով և Միացած Գեղարքունեաց. Կայենի և Կանգարի լեռներին: Լեռնաշղթայիս բարձրագոյն գագաթներն են Մռաւ և Արութիւն՝ Գանձակից վերև, Քիրս՝ Շուշուց վերև, Դիզափայտ՝ Գտիչ վանուց վերև, լեռնաշղթաս արձակած է դեպի հիւսիս, Արցախի և Գանձակի և Գարդմանի դաշտի կողմերն հարիւրաւոր, բազմաճղի լեռնագօտիներ, սարաւանդներ և լեռնաբազուկներ, որք աղխաղելով միմեանց կազմում են ուրեք-ուրեք անդնդախոր ձորեր և ահարկու վիհեր, սարսափելի կիրճեր և զարհուրելի նեղուցներ, օձապտույտ ձորակներ և լերկ ապառաժներ, վիմահերձ քերծեր, խոխոմներ և խրամներ և միանգամայն սագաձև, ձկնաձև, թամբաձև և լիսեռնաձև լեռնակներ, բլուրներ, թումբեր և սեռեր»:[5]

Եվ պատահական չէ, որ նշանավոր եվրոպացի Խ. Ֆ.Բ. Լինչը, տպավորված գրել է. «... աշխարհի ոչ մի անկյունում բնությունը ճարտարապետի իր դերով չի կերտել ու ստեղծել այնպիսի հսկայական չափերի գործեր, ինչպես

---

[1] Обозрение российских владений за Кавказом, ч.I, СПБ, 1836, ст. 88-89.
[2] Науменко Е., Елисаветпольская губерния (Военно-стратегическое опис-ие)., Тифлис 1903, ст. 3-5.
[3] ֆուտ – ոտնաչափ =30,5 սմ, 12000 ֆուտը՝ մոտ 4000 մետր:
[4] Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края ( МИЭБГКЗК),т.IV, Тифлис, 1886, ч.I, ст. 5.
[5] Բարխուդարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 48:

Հայաստանում»:[1] Իհարկե, նա նկատի չուներ միայն բնաշխարհը, այլ նաև երկիրն ու ժողովուրդը՝ Հայաստանն ամբողջությամբ:

Նահանգի մակերևույթի մեծ մասը կազմում էին տափաստանները, որոնք ձգվում էին Կուր գետի երկու կողմերով, իր մեջ ներառնելով նահանգի գավառների հարթավայրային տարածքները, բացառությամբ՝ Զանգեզուրի: Շնորհիվ Կուր գետի և նրա բազմաթիվ վտակների առկայությանը ու նրանցից առաջացած խոնավությանը, շրջակա տարածքները ծածկվում էին հարուստ բուսականությամբ: «Արցախում արևմուտքից արևելք դեպի Կուր գետն են հոսում, ոռոգելով Ուտիքի դաշտը, որտեղ ամենազորը ամենահյուսիսայինն է՝ Թարթարը կամ Թերթերը. ըստ մեծի նախնիների՝ Տրտուն, որը բխելով վայոց ձորում և Զանգեզուրի լեռների թիկունքից անցնելով Խաչենի ձորով, դուրս է գալիս Ուտիքի Առանձնակ դաշտը, անցնելով Պարտավ քաղաքի մոտով»:[2] Եվ այստեղ Թարթառ գետն ունի նույն նշանակությունը, ինչ Նեղոսը՝ Եգիպտոսի, առանց որի շրջակա տափաստաններն ու դաշտերը կվերածվեին անապատի. «Թարթառը դուրս գալով լեռնային կիրճերից, ազատվելով իրեն նեղող ժայռերից, և երբ լռում է գահավիժող ջրվեժների աղմուկը, սկիզբ է առնում 170-ի հասնող՝ մեծ ու փոքր, ջրատար-կանալների մեծ ցանցը... Գետը հարուստ է «սազան», «կարմրախայտ» և այլ ձկնատեսակներով. այն զբաղեցնում է մոտ 15000 դես. տարածություն»:[3]

Նահանգի բազմառելիեֆ բնույթից էլ գավառների մեծ մասը կազմված էր հարթավայրերից, նախալեռնային և բարձրադիր լեռնային շրջաններից. օրինակ Ջևանշիր (Զրաբերդ) գավառը, Ելիզավետպոլի գավառից անջատվում էր Մռավ լեռով և իր մեջ, փաստորեն, ներգրավում էր նշված երեք գոտիները: Շուշի և Ջեբրաիլ (Դիզակ) գավառները միմյանցից բաժանվում էին բնական՝ լեռնային սահմանով. դրանցից յուրաքանչյուրի տարածքի մոտ 1/3-ը լեռներ էին, 1/4-ը՝ նախալեռներ, իսկ մնացածը՝ հարթավայրեր ու տափաստաններ:[4] Մակերևույթի նման բարդ կառուցվածքի պատճառով, նահանգի գավառները հայտնվում էին բնակլիմայական տարբեր պայմաններում, որոնք մի տեղ դրական, մյուսում՝ բացասական դեր էին խաղում ազգաբնակչության կյանքի տարբեր ոլորտների՝ զբաղմունքի, նյութական ապահովության, կենցաղի, առողջապահության և այլ հանգամանքների վրա:

---

[1] Лынч Х.Ф.Б., Армения. Путевые очерки и этюды, т.I, Тифлис, 1910, предисловие, ст. 1.
[2] Գևոնդ Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 5 (բարգմանությունը՝ գրաբարից, Գ. Թոռունյանի):
[3] СМОМПК, вып. XVII, от I, ст. 119-120.
[4] Свод материалов по изучению быта государственных крестьян Закавказского края (այսուհետ՝ Свод ЭБГКЗК), т. IV, Тифлис, 1888, ч.I, гл. IV, ст. 39.

Հիշյալ 8 գավառներն ըստ տարածքի մեծության հետևյալներն էին:[1]

| Հ/հ | Գավառը | Զբաղեցրած մակերեսը /քառ. մղոն/ | Ողջ տարածքի մասը /տոկոս %/ |
|---|---|---|---|
| 1 | Ելիզավետպոլ | 8348.99 | 21.94 |
| 2 | Զանգեզուր | 6878.07 | 18.10 |
| 3 | Ղազախ | 5365.65 | 14.11 |
| 4 | Շուշի | 4573.13 | 12.03 |
| 5 | Ջևանշիր | 4497.58 | 11.73 |
| 6 | Նուխի | 3162.33 | 8.56 |
| 7 | Ջեբրաիլ | 2787.98 | 7.34 |
| 8 | Արեշ | 2356.00 | 6.19 |
| | Ընդամենը 8 գավառ | 37969.73 | 100 % |

[1] Обзор Елисаветпольской губернии за 1894 г., Тифлис, 1895, ст. 5.

A II 88902



Կովկասն ու Անդրկովկասը, դեռևս վաղ ժամանակներից աչքի էին ընկնում իրենց ազգաբնակչության քանակով, ազգային կազմի խայտաբղետությամբ՝ բազմաթիվ լեզուների, կրոնական հավատամքների, տարբեր սովորությունների ու կենցաղի փաստական առկայությամբ: Դեռևս 10-րդ դարում, արաբ ճանապարհորդ-աշխարհագրագետ Ալ Իսթախրին, Պարտավ քաղաքի մասին խոսելիս նշել է. «...այն բնակեցված և շրջապատված է տարբեր ազգությունների պատկանող բազմալեզու, միմյանց նկատմամբ թշնամանքով լցված, բազմաքանակ մարդկանցով, որոնց ազգային տեսակն անցնում է 70-ից»:[1]

19-րդ դարում, երկրամասի սահմանափակ տարածքի վրա բնակվում էին 30-ից ավել ազգեր ու ազգություններ, ցեղեր և «Դժվար կգտնվի մի այլ երկիր, որն իր լեզվաբանական ուսումնասիրության իմաստով, կարողանա այնպիսի մեծ հետաքրքրություն առաջացնել, ինչպիսին Կովկասն է, որտեղ, համեմատաբար ոչ շատ մեծ տարածքի վրա, կարողանային տեղավորվել, ամենատարբեր լեզուներով խոսող բազմաթիվ ժողովուրդներ»[2], որոնք միմյանցից տարբերվում էին նաև ծագումով ու քաղաքակրթության զարգացման աստիճանով: Ա. Շահխաթունյանը նշում է, որ «Եթե մենք ձեռնարկենք Անդրկովկասի ազգագրության ուսումնասիրությունը, մենք կհայտնաբերենք այնպիսի հակադրություններ և արտառոց փաստեր...»:[3]

Անդրկովկասի հնագույն բնակիչներն էին հայերը, վրացիները, օսերը, թալիշները, որոնցից հետո գալիս են՝ թաթերը և քրդերը: Ուշ միջնադարից սկսած, հյուսիս և հարավ-արևելքից Կովկաս ներթափանցեցին թուրք-թաթարական խառնիճաղանչ քոչվոր թափառական ցեղախմբեր: «Դրանք զինուորական արշաւանքներ չէին, այլ ազգերի տեղափոխություններ: Ձնջուող, դուրս վռնտուող բնիկ ազգաբնակչութեան տեղ հաստատուում էին այդ նոր եկուորները՝ ընտրելով իրանց բնաւորութեան և պարապմունքին հարմար տեղեր»:[4]

---

[1] Ալ-Իսթախրի, Թագավորությունների ճանապարհների մասին, տես Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետ СМОМПК), вып XXIX, Тифлис, 1901, ч.I, ст. 14-15 .
[2] Загурский Л., Замѣтка объ исследовании Кавказских языков, Москва, 1880, ст. 1.
[3] Шахатунян А., նշվ. աշխ. էջ 57:
[4] Լեո,Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թէմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս՝ 1914, էջ 52:

Նրանց այստեղ երևան գալու մասին առաջին հիշատակությունը վերաբերվում է 10-րդ դ. առաջին քառորդին, իսկ 11-12-րդ դարերում, հայերից հետո, համեմատաբար մեծ թիվ էին կազմում,[1] և «հնարավոր է, որ թուրքերի էթնիկական ձևավորման գործընթացը տեղի է ունեցել ուշ միջնադարում 12-15-րդ դդ»:[2]

Այս տարածաշրջանի բազմազգ լինելուն նպաստել էր երկրամասի աշխարհագրական դիրքը. «Բնակիչներ – ոչ մի երկիր այնքան խճողված չէ եղել բազմատեսակ ցեղերով և այլազան բարբառներով, ինչպես Աղուանից երկիրն: Պատճառն այն է, որ նախ՝ բարեբեր է երկիրս և առատաջուր և սննդատու, երկրորդ միակ կարճ և յարմար անցքն է հարաւից հիւսիս և հիւսիսից հարաւ կամ թե Ասիայից Եւրոպա և Եւրոպայից Ասիա ազատ անց ու դարձ անելու ճանապարհին»:[3] Եվ այդ ցեղերից շատերը «դեռևս հեռավոր ժամանակներից վարել են այնտեղ պատերազմներ, հիմնել են իրենց տիրապետությունը և, հանգրվանել»:[4] Պատահական չէ, որ «Թաթարները, որպես տիրապետող ազգ, զբաղեցրել են Ելիզավետպոլի նահանգի լավագույն տեղանքը. թաթար բեգերը զավթել են հսկա քանակությամբ վարելահողեր, խոտառատ մարգագետիններ ու արոտավայրեր, անտառներ, ջրեր և այլն»:[5]

Թաթար-մոնղոլական և թուրքական ցեղերի սերունդները պատկանում էին դեղին ռասսային. դրանք իրենց սովորություններով, կենցաղով ու լեզվով քիչ էին տարբերվում միմյանցից: 17-րդ դ. թուրք ճանապարհորդ, պատմիչ Էվլիյա Չելեբին, Պարսկաստանում, Ղարաբաղում եղած ժամանակ, իր գրառումներից մեկում, այստեղ ապրող մոնղոլ ցեղի մի ճյուղի մասին նշում է հետևյալը. «...սրանք բնիկ Սահանի (Իրանի Կերման էյալեթի մի գյուղաքաղաքի անուն է) երկրից են, եկած մոնղոլներ են, թուրքեր են, բայց խոսում են մոնղոլերեն. մոնղոլերեն նշանակում է թուրքերեն»:[6] Եվ պատահական չէ, որ միջնադարյան պատմիչ-մատենագիրները և ճանապարհորդ ուսումնասիրողներն իրենց հուշագրություններում և աշխատություններում այդ ցեղերին՝ ու ժողովուրդներին անվանում էին մեկ ընդհանուր՝ «թաթար» անունով: Այդպես էլ շարունակվեց հետագայում՝ Ռուսաստանի տիրապետության շրջանում:

---

[1] Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1966, էջ 171 /Տես՝ Ստ. Օրբելիան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 195-196/:

[2] Еремеев Д., Этногенез турок, Москва, 1971, ст. 128.

[3] Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, Ա հատոր, Թիֆլիս, 1901, էջ 15:

[4] Сборник газеты "Кавказ", первое полугодие 1848 г., Тифлис, 1848, ст. 3 (Из заметок полковника Абас-Кули).

[5] Обзор Елисаветпольской губернии за 1908 г., ст. 3.

[6] Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ.Գ., Էվլիյա Չելեբի /թարգմանությունը Ա.Սաֆրաստյանի/, Երևան, 1967, էջ 90:

Ուսումնասիրվող տարածքի՝ Ելիզավետպոլի տնտեսական, ժողովրդագրական, ազգամիջյան հարաբերությունների և հարակից այլ հարցեր ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար, անհրաժեշտ է անդրադառնալ այստեղ ապրող ազգերին և ազգություններին, նրանց վարած կյանքին, կենցաղին, զբաղմունքներին և այլն, առանձին-առանձին:

Տեղի հնագույն բնակիչներն էին հայերն ու ուտիները. հատկապես հայերն, դարերից ի վեր, եղել և մնում էին այս տարածաշրջանի մեծաթիվ ազգությունը: Անհամեմատ փոքրաթիվ էին ուտիները, ռուսները, գերմանացիները, հրեաները, թաթերը, թալիշները և այլն: Մահմեդական բնակչության մեջ, թաթարներից հետո, մեծ թիվ էին կազմում քրդերը:

Հայությունը Ելիզավետպոլի նահանգի տեղաբնիկ, հնագույն ազգությունն էր. այստեղ նրա հիմնական բնօրրաններն էին պատմական Հայաստանի Սյունիք, Արցախ, Ուտիք-Գարդմանք, Ծար-Զանգեզուր և այլ հնագույն տարածքներ, որոնցում հայերի և նրանց պատմության մասին պահպանվել են մեծ քանակությամբ փաստեր ու վկայություններ: Դրանք վերաբերվում են մեր թվարկությունից առաջ և հետո եղած ժամանակաշրջաններին, որոնք պահպանվել են հունա-հռոմեական և այլազգի մյուս հեղինակների, ինչպես նաև հայոց պատմիչ-մատենագիրների և այլոց թողած գրական, աղբյուրագիտական ժառանգության մեջ: Խոսուն վկաներ են դարերի խորքից եկած ու մեզ հասած հուշարձանների, ճարտարապետական կառույցների մնացորդները, որոնց որմերին դաճված ու փորագրված են բազմաբնույթ բովանդակություն ունեցող արձանագրություններ: Ըստ հնագույն այդ աղբյուրների, դեռևս մ.թ.ա. Երվանդունիների, հետո նաև Արտաշեսյան հայկական թագավորական տների իշխանությունների ժամանակաշրջաններում, Մեծ Հայքի թագավորությունն անկախ պետական միավոր էր. նրա կազմում ընդգրկված 15 աշխարհներից (նահանգ, երկրամաս) երկուսը՝ Ուտիքն ու Արցախն էին: «Արցախ» տեղանվանն առաջին անգամ հանդիպում ենք բիայնական սեպագիր, ժայռափոր արձանագրության մեջ, ուր պատմվում է Արգիշտի որդի Սարդուր Երկրորդի (764-734 մ.թ.ա.) նվաճումների մասին: Այստեղ հիշատակված «Արցախ» անունը նշված է «Ուրտեխե» ձևով: Սևանա լճի հարավային ափերը նվաճելուց հետո, նա անցել է դեպի Արևելք, որի մասին արձանագրում է. «ճեղքեցի մինչև Ուրտեխական աշխարհ»: Սևանի ափի՝ Ծովինար ամրոցի մեկ այլ արձանագրությունում նշված է, որ Սարդուրը նվաճել է 23 թագավորություններ և դրանցից երկուսը Ուրտեխե և Էտիունի աշխարհներն էին,[1] «որոնք հետագայում պետք է ենթարկվեին լեզվական աննշան փոփոխության և կոչվեին՝ Արցախ և Ուտիք»:[2]

Մ.թ.ա. V դարի հույն պատմաբան Հերոդոտոսի վկայությամբ Պարսկաստանի հարկատու նահանգների ցուցակում, Ուտիքը եղել է 14-րդը: Իսկ մեկ այլ առիթով

[1] Ալիբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (5-7-րդ դդ) Երևան, 1981, էջ 5. Տես նաև Գր.Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան 1940, էջ 186, Г.А.Меликишвили, Урартские Клинообразные надписи, Москва, 1960, ст. 310, արձ.161.
[2] Նույն տեղում, էջ 6:

նշում է, որ մի շարք ցեղերի (մյուկեր, պարիկանիներ) հետ միասին ուտիները ծառայում էին Դարեհ արքայի որդու՝ Արսեմենեսի զորագնդում:[1]

Ղևոնդ Ալիշանը մանրամասն անդրադարձել է «Արցախ» բառի առաջացման հարցին և հենվելով հայ մատենագիրների՝ Եղիշեի, Մովսես Կաղանկատվացու և այլոց հաղորդած տվյալների վրա, եզրակացնում է. «Թերևս կարելի է կարծել ծառերի ու թփերի ցախ անունից ծագած, ըստ երկրի անտառախիտ բնույթի և տեղանքի կարծր, ամուր լինելուց. այն մեծ նախորդները գրում են նաև «ձ» (Արձախ), ինչպես նաև հոգնակիով՝ Արցախք, Արցախունյաց գավառ ... »[2] և այլն:

Աշխարհագրական առումով դրանց մասին վկայող առաջին օտար հեղինակը հույն աշխարհագետ-պատմաբան Ստրաբոնն է, որն ապրել է մ.թ.ա. և մ.թ. 1-ին դարերում: Նա առաջին անգամ ամենայն ճշգրտությամբ գծում է պատմական Հայաստանի սահմանները, հյուսիսային սահմանագիծը տանելով Կուր գետի երկարությամբ մինչև Արաքս գետի հետ միախառնվելու վայրը. արևելքից՝ մինչև Կասպերի երկիրը, հարավից՝ Տավրոսի լեռները:[3] Ըստ նրա վկայակոչված քարտեզի, Հայաստանի մասն էին կազմում նաև Արցախ և Ուտիք նահանգները: Ստրաբոնի մոտ Ուտիքը կոչվում էր Շակաշեն-Սակասեն, սակ ցեղի անունով. «...սակերը կատարեցին զանազան արշավանքներ ... նվաճեցին Հայաստանի ամենալավ գավառը, որ և պահելով իր վրա նրանց մականունը՝ կոչվեց Սակասեն (-Շակաշեն) ... սահմանակից Աղվանքին և Կուր գետին»:[4] Իսկ Օրխիստինա (Որքիստենե), այսինքն՝ Արցախը, սահմանային տարածք չէր, գտնվում էր Հայաստան երկրի ներսում՝ խորքում: Ստրաբոն նշում է նաև այն մասին, որ «Հայաստանն աճեց Արտաշեսի և Զարեհի ձեռքով (օրոք) ... շրջակա ազգերից գրավելով զանազան գավառներ. Մարերից (Մարաստանից)՝ Կասպիանեն, Փավնիտես...» և շատ ուրիշ տարածքներ, որոնց բնակիչները «բոլորը միալեզու եղան»[5], այսինքն, դեռևս մ.թ.ա. 1-ին դարում, նշված երկրների ցեղերը և ժողովուրդները հայացել էին, խոսում էին հայերեն: Ստրաբոնի մոտ գծված է նաև պատմական Աղվանքի սահմանները. «Աղվանքը գտնվում է Վրաստանի և Կասպից ծովի միջև. արևելքից հասնում է ծովին, իսկ արևմուտքից սահմանակից է

---

[1] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1986, գիրք III, էջ 19, Գ VII, էջ 408:
[2] Ալիշան Ղ., Արցախ (Պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն, գրաբարից թարգմանությունը Գ.Բ.Թոսունյանի), Երևան, 1993, էջ 90: Նշված մատենագիրներից Եղիշեի Վարդանանց պատմությունը, Երևան, 1946, էջ 196 /...ամուր վայրեր Արցախի խիտ անտառներում/: Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1963, էջ 121. «Արցախ անառիկ գավառների լեռների ծորառատ ապառաժները» կամ «վիմահատակ լեռների ապառաժներ», և այլն:
[3] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 6: Տես՝ Ստրաբոն, Գիրք 11, գլ. 1, էջ 5:
[4] Օտար աղբյուրները հայերի մասին. թիվ 1. Հունական աղբյուրներ-Ստրաբոն – քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, ԵրՊՀ, Երևան, 1940, էջ 37, 55:
[5] Նույնի, էջ 57:

Վրաստանին ... հյուսիսը պաշտպանված է Կովկասյան լեռներով, իսկ հարավային սահմանի ամբողջ երկարությամբ տարածված է Հայաստանը...»:[1]

Բացի աշխարհագրական տեղեկություններից, Ստրաբոնն անդրադառնում է նաև այդ երկրների Հայաստանի ու Աղվանքի, պատմության տարաբնույթ այլ հարցերին. օրինակ, որ Հայաստանը ուժեղ ու մարտունակ բանակ ուներ, հայոց թագավորը Մարաստան արշավելու նախօրյակին, 6000 զրահապատ ձիավորների զորահանդես ցուցադրեց, որը պատկառելի ազդեցություն ունեցավ: Նշում է նաև, որ այդպիսի ձիեր և հեծելազոր ուներ նաև Աղվանքը, հատկապես, Օրխիստինա (Արցախ) նահանգը, որը և արտահանում էր մարտական ձիեր[2] և այլն:

Օտար աղբյուրներից Ստրաբոնը միակը չէր. Մեծ հայքի արևելյան մասի և Աղվանքի սահմանների, ներքին ու արտաքին կյանքի և այլ հարցերի մասին բազմաբնույթ տեղեկություններ են հաղորդել նաև այլ հեղինակներ Պլուտարքոսը, Կլավդիոս Պտղոմեոսը, Դիոն Կասիոսը, Պլինիոս Ավագը, Ստեփան Բյուզանդացին և ուրիշներ: Այս և չնշված ուրիշ այլ սկզբնաղբյուրների պատմագիտական մանրամասն վերլուծությունը կատարել է Բ. Ուլուբաբյանը,[3] Ա. Հակոբյանը[4] և ուրիշներ:

Կապված հայկական գրերի գյուտի հետ, 5-րդ դարից (մ.թ.) սկսած մինչև ուշ միջնադար, անգնահատելի սկզբնաղբյուրներ են հայ մատենագիր-պատմիչները, որոնք օգտվելով հունա-հռոմեական և այլ անտիկ հեղինակների թողած գրականությունից, արձանագրություններից, տեղեկություններ են հաղորդում սկսած հայ ժողովրդի ծագման ու կազմավորման պատմությունից, վերջացրած իրենց ապրած ժամանակաշրջանի դեպքերով ու անցքերով: Հայ առաջին հեղինակն Ագաթանգեղոսն է[5], որը մանրամասն տեղեկություններ է հաղորդում 4-5-րդ դարերի Հայաստանի, նրա սահմանների և, հատկապես, քրիստոնեության տարածման մասին, նաև Աղվանքում: Ուրույն կարծիքներ ու դեպքեր են հաղորդում 5-րդ դարի հայ պատմիչները՝ Փավստոս Բյուզանդը, Կորյունը, Ղազար Փարպեցին և ուրիշներ. սակայն, դիմենք Մովսես Խորենացուն. նրա «Պատմություն Հայոց»-ին[6] հին Հայաստանի հանրագիտարանին, ուր Աղվանքի և նրա հայկական պետականության ստեղծման պատմությանը հատկացված բաժնում նշված է «Յետ սորա (Վաղարշակը- Ա.Գ.) մեծ և անուանի և բազմաբիւր զարևելից հիւսիսոյ կողմանն

---

[1] Նույնի, էջ 31:
[2] Աճառյան Հ.,նշվ. աշխ.,էջ 61 (Տես՝ Ստրաբոն, գիրք 11, գլ.1, էջ 5):
[3] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 5-22:
[4] Акопян А, Алвания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.
[5] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:
[6] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: ... զի զցեղս զայս մեծ և անուանի ... զգունդն որ ի Սիսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ[1] ... Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ: Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտեացւոց և Գարդմանցւոց[2] և Ծաւդէացւոց[3] և Գարգարացւոց[4] իշխանութիւնսն»[5]:

Նույն փաստերի կրկնությունն է վկայակոչված 7-րդ դ. պատմիչ Մովսես Կաղանկատվացու մատենագրության մեջ. նրա հանրահայտ պատմության հ. I գլուխ Դ-ն վերնագրված է. «Կարգելն Վաղարշակայ զնախագահութիւնն Աղուանից». ուր նշված է «... ի Սիսական տոհմէ Յաբեթական ծննդոցն կարգի հրամանաւ Վաղարշակայ, Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից ... :[6]

Տարբեր դարերի հայ պատմիչ-մատենագիրների մոտ այնքան պարզ ու հավաստի է տրված վերոհիշյալ կուսակալության հիմնադրումը, իր սահմաններով և իշխան Առանով, որ մեկնաբանելու կարիք չի զգացվում: Կաղանկատվացին նշում է նաև Առանի հաջորդների՝ Վաչագան քաջի, Վաչագան բարեպաշտի, Վաչագան Եռանշահիկի[7] և մյուսների մասին, որոնք հաջորդելով միմյանց, Աղվանքը մարզպանությունից վերածեցին անկախ թագավորության և «Հայոց արևելից կողմանց (Արցախ և Ուտիք) տարածքի վրա 5-րդ դարի վերջում Վաչագան բարեպաշտի կողմից ստեղծված Առանշահիկ թագավորությունը, որն ուրիշ բան չէր, քան հինավուրց հայոց թագավորության՝ Կովկասում երբեմնի գոյություն ունեցած, խոշոր պետության մի բեկոր»:[8]

Վաչե բարեպաշտ արքան «Պարսկաստանի Պերոզ արքայի հրամանով շինեց Պերոզապատ մեծ քաղաքը, որ այժմ Պարտավ է կոչվում». այն Աղվանքի

---

[1] Հնակերտ կամ Հունարակերտ ամրոց-քաղաքը գտնվում էր Մեծ Հայքի Վիրքի ու Ալբանիա-Աղվանքի սահմանների հարևան կետում՝ Խրամի գետաբերանի մոտ (Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 272, ծանոթ. նո. 64):
[2] Գարդմանցիներ. Գարդմանը Ուտիքի 6-րդ գավառն էր, հետագայում այն համընկնում էր Ղազախի գավառին /Տե՛ս նույնի, էջ 21,70, ծան. 181:
[3] Ծավդեացիներ - Ագաթանգեղոսի նշվ. աշխ., էջ 404-ում, Արցախը հիշատակվում է «Ծաւդեք կամԾաւդէից իշխանութիւն» անունով, իր իշխանանիստ կենտրոն «Ծաւդի» /այժմ՝ Զոդ/ պատճառով /Տե՛ս Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 7-8/:
[4] Գարգարացիներ- Ալ. Մակեդոնացու ժամանակներից բնակեցվել են Կովկասի մեծ լեռան շուրջը: Նրանց բնակավայրը եղել է պատմական Գուգարքը: /Տե՛ս Մ.Կաղանկատվացի, նշվ. աշխ., Երևան, 1969, էջ 21, ծանոթ. նո. 83:
[5] Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 113:
[6] Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, հ.I, Երևան, 1983, էջ 8:
[7] Նույնի, հ I, գլ. ԺԱ, ԺԶ, ԺԷ, էջ 41-46:
[8] Ուլուբաբյան Բ.,նշվ. աշխ., էջ 128:

Մայրաքաղաքն էր սկսած 462 թվականից և գտնվում էր Մեծ Հայքի Ուտիք նահանգում:[1] Հետագայում քաղաքը մեծ զարգացում ու նշանակություն ձեռք բերեց տարածաշրջանում: 10-րդ դ. արաբ ճանապարհորդ, ուսումնասիրող Ալ-Իսթախրին իր «Թագավորությունների ճանապարհների մասին» գրքում նշում է նաև «Առան» (Աղվանք) պետության մասին. «... իսլամական պետությունների սահմաններին մոտ, ծովի եզերքին կա «Առան» կոչված երկիր...»: Խոսելով Հայաստանի մայրաքաղաք Դվինի մասին, նա զուգահեռ է անցկացնում, նշելով. «... նրա (Դվինի) մեջ էր գտնվում Հայոց թագավորի պալատը, այնպես, ինչպես Առանի տիրոջ (տիրակալի) կենտրոնը Բերդայում»[2] ... հին Առան անունը արևելյան թագավորների շրջանում և մինչև վերջերս պարսից արքունիքում Արցախ աշխարհն այդ անունով է ճանաչվում, որը կազմում էր ամբողջ նահանգի, կամ Առան երկրի միջին մասը, Սյունիքից մինչև Կուր, որն այժմ Ղարաբաղ է կոչվում»:[3]

Միջնադարյան հայ մատենագիրները տարբեր առիթներով գրել են նաև Արցախի և Ուտիքի պատմությունը: Կուր և Արաքս գետերի միջև ընկած այս երկու նահանգները հայերը կոչում էին «Հայոց արևելից կողմունք», «Երկիրն արևելից», «Աղվանից աշխարհ» նկատի ունենալով հայկական Աղվանքը: Բացի այս փաստական նյութերից, նրանց ուշադրությունից չեն վրիպել երկրի բնակչության սոցիալ-տնտեսական, կուլտուր-կենցաղային բարոյա-հոգեբանական հարցերը. այն, որ Աղվանքում ապրողները արյունակից հայեր էին, որոնց թագավորներն ու իշխանները խոսում էին հայերեն:[4] Մեր թվ. 5-7-րդ դարերում Պարսկական պետության մարզպանության շրջանում, այդ նահանգները Արցախը և Ուտիքը, անջատվել էին Հայաստանից և մասն էին կազմում նորաստեղծ Աղվանքի մարզպանության (վարչական միավոր): Չնայած դրան, հիշյալ տարածքները, նախկինի նման, ունեին հայ առաքելական եկեղեցի, մաշտոցյան հայ գիր ու գրականություն, դպրություն, մշակույթ և ճարտարապետություն. պաշտոնական լեզուն մնում էր հայերենը՝ յուրահատուկ բարբառով. «Ղարաբաղի (Արցախ) բարբառը լինելով հայերենի հնդեվրոպական լեզուներից մեկի տարածքային տարբերակը, բազմաթիվ բառեր ժառանգել է գրաբարից ... որոնք բացահայտում են Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերի յուրահատկությունները»:[5]

---

[1] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 138, ծանոթ.N168: Տես նաև Հյուբշման, «Հին հայոց տեղվո անունները», Վիեննա, 1907, էջ 110:

[2] Ալ-Իսթախրի, Թագավորությունների ճանապարհների մասին գիրք. Տես՝ СМОМПК, вып XXIX, Тифлис, 1901, от. I, ст.14-19.

[3] Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 12-13:

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր.,1961, Առաջաբանի էջ Ը:

[5] Էրաբեր հասարակական գիտությունների, 2000, թիվ 1, էջ 116 /Հովհաննիսյան Լ.Շ. Ղարաբաղի բարբառի հնագույն շերտերը/:

Աղվանքի պատմությանն անդրադարձել են նաև հետագայում. մատենագիր-պատմիչների ու պատմաբանների և նրանց թողած բազմաբնույթ աշխատությունների ցանկը կարելի է շարունակել մինչև ուշ միջնադար, սակայն բավարարվենք այսքանով: Մեզ ժառանգություն հասած մեծաքանակ, բազմաբովանդակ սկզբնաղբյուրների հենքի վրա, հետագայում ուսումնասիրվեցին ու գրվեցին պատմագիտական արժեքավոր ուսումնասիրություններ, մենագրություններ, բազմահատոր պատմություններ ու դասագրքեր, հայ ժողովրդի ու նրա բնօրրաններ՝ Հայաստանի ու Աղվանքի մասին, սկսած վաղնջական ժամանակներից, մինչև մեր օրերը: Այս տարողունակ հարցի պատմագիտությունը շատ ծանրակշիռ է, և բնական է, առանձին ուսումնասիրության թեմա է, որով զբաղվել են հայ և այլազգի պատմաբաններ, պատմագետներ. այն մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է, ուստի ավելին չենք ծավալվում:

Պատմագիտական գրականության մեջ Աղվանքին վերաբերող հարցերի շուրջը եղել են վիճահարույց տարբեր կարծիքներ, տեսություններ, սակայն, փաստերի վերլուծությունը ցույց է տվել այն անհերքելի փաստը, որ Աղվանքը եղել ու մնում է հայ ժողովրդի մի հատվածի մշտական հայրենիք-բնօրրանը, որի պատմության անցած ուղու մասին հակիրճ, բայց դիպուկ ասված է հետևյալը. «Աղուանից երկրում, որի արևմտեան մասն է Ղարաբաղն՝ հայկական իշխանութիւնն տևեց Սիսական Առանից մինչև Մելիքներ: Եթե մեռաւ Աղուանից թագաւորութիւնն իսկոյն ծնաւ Նախարարութիւն. եթե մեռաւ այս Նախարարութիւնն՝ անմիջապես յարութիւն առաւ կրկին Թագաւորութիւն, երբ այս ևս վախճանեցաւ՝ նոյն ժամայն ծնաւ Իշխանութիւն, որից յետո Մելիքութիւնն: Ի վերայ այսր ամենայնի բնաւ Ղարաբաղից չպակսեցաւ ինչպես քաղաքական իշխանութիւնն, նոյնպես և կաթողիկոսութիւնն ... Գրիգորիս կաթողիկոսից սկսած մինչև Ջալալեան Սարգիս կաթողիկոսը»:[1] Եվ Հայաստանի պատմության մեջ Ղարաբաղը մշտապես եղել է նրա «Արևելյան կողմանց» հենարան-ամրոցը, պաշտպանելով Արարատյան դաշտի հայկական պետականության սիրտը:[2] Այդ են ապացուցում նաև հնուց կառուցված ու մեզ հասած հուշարձանները՝ վանքերն ու եկեղեցիները, մատուռները, խաչքարերը և գերեզմանաքարերը, որոնք խոսուն վկաներն են հայ քրիստոնյա ժողովրդի մի հատվածի պատմության, արվեստի ու ճարտարապետության:

19-րդ դ. ճանապարհորդ Ֆ.Հակստհաուզենը վկայում է. «Բեզովդալի լեռնաշղթայի երկարությամբ, ինչպես նաև Շամախու լեռնային շրջաններում տարածված էին հայկական բնակավայրերը: Շեքի (Շաքի) երկրամասում՝ Նուխիից

---

[1] Գաղտնիք Ղարաբաղի, էջ 72:
[2] Тунян В., Карабахский конфликт, Ереван, 1999, ст. 3.

մինչև Խաչմազ (Չատմազ) ամենուր ճանապարհորդը հանդիպում է քանդված ու կիսաքանդ քրիստոնեական եկեղեցիների ու վանքերի մնացորդներին, որոնք նախկինում և այժմ պատկանել ու պատկանում են հայերին»:[1]

Արցախում, Ամարասի նշանավոր վանքը հիմնադրվել է Գրիգոր Լուսավորիչի կողմից (4-րդ դ. սկ.), իսկ կառույցը ավարտել է նրա թոռը՝ Գրիգորիս եպիսկոպոսը, որը Հայաստանից Աղվանք գալով, կրոնական քարոզչություն էր ծավալել և 338թ. մազկութների Սանատրուկ թագավորի հրամանով նահատակվել ու թաղվել էր հիշյալ Ամարաս ավանի վանքում. «Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի փոքր Սիւնիս,[2] թաղեցին յԱմարաս աւանի»:[3] Քրիստոնեության տարածման այս բուռն շրջանում կառուցվել են նաև Դադի կամ Խութավանքը, Հուրեկը. Խաչեն գավառում Կատարո վանքն, ու Գտիչը՝ Դիզակում: Ըստ տեղեկությունների, Վաչագան բարեպաշտ թագավորը Արցախ-Ուտիքում կառուցել է տվել տարվա օրերի թվով վանքեր ու եկեղեցիներ (գուցե չափազանցված է), որոնցից մեզ է հասել Ամարասում, Գրիգորիս եպիսկոպոսի գերեզմանի վրա կառուցված մատուռը:[4] Միջնադարյան հայկական ճարտարապետության վառ նմուշներ են Տաթևի (9-րդ դ.)[5] և Գանձասարի (13-14-րդ դ.դ.) վանքերը. «Այս կոթողային կառույցները ստեղծելիս, - նշում է հայ արվեստի ու ճարտարապետության գիտակներից մեկը, ռուս արվեստաբան Ա. Յակոբսոնը,- օգտագործել են դարերով կուտակված տեխնիկական ու գեղարվեստական, ճարտարապետական ու դեկորատիվ միջոցների հսկայական գինանոցը, որոնց կատարելապես տիրապետել են Գանձասարի վանքի կերտողները, որը և լիիրավ կերպով կարող է համարվել 13-րդ դ. հայկական ճարտարապետության հանրագիտարանը»:[6] Գանձասարը և մյուս հուշարձաններն ունեն նաև աղբյուրագիտական նշանակություն. նրանց որմերին փորագրված և գրված են բազմաթիվ վիմական արձանագրություններ, որոնք լույս են սփռում Արցախ-Ուտիքի և առհասարակ ողջ Հայաստանի պատմության (տարբեր բնագավառների) վրա: Դրանց հավաքման և սիստեմավորման գործով, առաջինը զբաղվել է Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանցը, որի հավաքածուն հետագայում զետեղվեց Հովհաննես վարդապետ Շահխաթունյանցի և Սարգիս

---

[1] Фон Гакстгаузен А., նշվ. աշխ., էջ 208:
[2] Ըստ Խորենացու և այլ աղբյուրների, Արցախը կոչվել է նաև Փոքր Սյունիք:
[3] Մովսես Խորենացի, նշվ. աշխ., գիրք III, գլ. 9. էջ 260:
[4] Ուլուբաբյան Բ., Դադի վանք, Եր. 1994, էջ 4: Դադի վանքը կառուցվել է մ.թ. 1-ին դ. 2-րդ կեսին, քրիստոնեական քարոզչության համար նահատակված Թադևոս առաքյալի աշակերտներից, Դադի կամ Դադոյի անունով: 5-րդ դարից այն հիշատակվում է որպես եպիսկոպոսանիստ: Դադի վանքը Առանձահիկ-Վախտանգյան իշխանական տան տոհմական տապանատունն է: Բազմիցս այն ավերվել ու թալանվել է, սակայն նորից ու նորից կառուցվել ու մեզ է հասել մի հսկա համալիր: /Տես՝ նույնի, էջ 1/:
[5] Դիվան հայ վիմագրության, պրակ 2, Եր.1960, էջ 11:
[6] Յակոբսոն Ա., Գանձասար, Երևան, «Սովետական գրող», 1987, էջ 14:

արքեպիսկոպոս Ջալալյանցի[1] աշխատության մեջ (2 հատորով): Արևելյան Հայաստանում կատարած իր ճանապարհորդության ժամանակ նա եղել է Արցախի համարյա բոլոր բնակավայրերում, նկարագրել պատմական աղբյուրներում հիշատակված ավանները, վանքերն ու եկեղեցիները, հավաքել, դեռևս պահպանված արձանագրությունների մեծ մասը: Այս գործում իր վաստակն ունի Հովսեփ Օրբելին:[2] 1909թ. նա լինում է Խաչենում և ընդամենը 17 օրվա ընթացքում հասցնում է գրի առնել շուրջ 270 արձանագրություն, տարբեր վայրերից (Գանձասար, Վաճառ, Խաշխութ, Ծմկահող, Հավապտուկ և այլն): Արձանագրությունների հավաքմամբ և մեկնաբանմամբ զբաղվել է մեծավաստակ գիտնական կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը[3] (ծննդով՝ Ղարաբաղի Մարաղա գյուղից): Հետագայում՝ 1940-1960-ական թվականներին, ակադեմիական հրատարակությամբ լույս տեսան «Դիվան հայ վիմագրության» պրակները՝ ըստ տարածքային շրջանների:[4]

Խոսելով այս տարածքի հայկական հուշարձան - կոթողների, սրբավայրերի, խաչքարերի, տապանաքարերի առկայության մասին, հանգում ենք այն եզրակացության, որ նախկինում՝ Աղվանք, հետագայում Գանձակ-Ելիզավետպոլ նահանգի ողջ տարածքը միշտ, և ցայսօր, մեծ թանգարան է բաց երկնքի տակ, որի ցուցանմուշների ուսումնասիրությամբ զբաղվել են հայ և օտարազգի մեծաթիվ մասնագետներ՝ պատմաբաններ, ճարտարապետ տեսաբաններ, նկարիչ-արվեստագետներ և այլոք: Նրանց ջանքերով հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ, պատկերազարդ գրքեր, ալբոմներ[5] և այլն:

---

[1] Ջալալեանց Ս.,Հանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա., Տփղիս, 1842, մասն Բ, Տփղիս, 1858:

[2] Орбели И., Избранные труды, М., 1968, ст. 146-174:

[3] Հովսեփյան Գարեգին, Յիշատակարանք ձեռագրաց /Ե դարից մինչև ԺԸ դար/, 4 հատորով, Անթիլիաս, 1951:

[4] Դիվան հայ վիմագրության, պր.1-4, 6, Եր., 1960 /Հայկ. ՍՍՌ ԳԱ հնագիտական և ազգագրական ինստիտուտ, գլխ. խմբագիր Հ.Ա.Օրբելի/:

[5] 1/ Թորոսմանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Եր. 1942, հ.2, Եր.1948:

2/ Очерки истории зодчества Армении V-VII веков, Ленинград, 1950.

3/ Հայկական եկեղեցիները, Մայր Աթոռ ս. Էջմիածին, Լիսաբոն, 1970:

4/ Հայաստանի խաչքարերը, Մայր Աթոռ ս. Էջմիածին, Լիսաբոն, 1981:

5/ Степанян Н.,Чакмакчян А.,Декоративное искусство средневековой Армении, Ленинград., 1971.

6/ Памятники архитектуры в Советской Армении, Альбом, Ленинград, 1971.

7/ Պապուխյան Ն.,Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1972:

8/ Kunst des Miltelabters in Armenian, Berlin, 1981.

9/ Абиазян А. Памятники Армянской архитектуры Нахичеванской АССР, Ереван, 1981.

10/ Мкртчян Н., Историко-архитектурные памятники Нагорного Караваха, Ереван, 1988.

11/ Ուլուբաբյան Բ., Գանձասար, Եր., 1981:

12/ Ուլուբաբյան Բ.,Դադի վանք, Եր., 1994 և շատ ուրիշներ:

Հազարամյակների խորքից եկող նյութական ժառանգության նմուշները և մնացորդները, հեղինակների կողմից չափագրվել, լուսանկարվել և պատմական աղբյուրների օգնությամբ վերլուծության են ենթարկվել, տալով նրանց ծագման, կառուցման շարժառիթները, կապված պատմական տվյալ ժամանակի շրջադարձային երևույթների, դեպքերի, անհատ գործիչների և այլ հանգամանքների հետ, մասնագիտորեն տրված են դրանց ճարտարապետական, ոճական բացատրություններն ու մեկնաբանությունները:

Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով շրջագայել են բազմաթիվ օտար ճանապարհորդներ: Եվ «ահա, այս շրջանում էր (XIX դ. սկիզբ Ա.Գ.), որ անգլիական, ֆրանսիական և ռուսական դիվանագիտական առաքելությունները, քաղաքական գործակալները և Արևելքի «ուսումնասիրողները» հաջորդաբար այցելում էին Թուրքիա և Պարսկաստան, ընդհանրապես անցնելով Հայաստանից ու Անդրկովկասից»: Այդ ընթացքում էլ նրանք գրի էին առնում իրենց հուշերը, քաղաքական հարաբերություններն ու տարաբնույթ դեպքերը: Ոմանք նշված նյութերի հիմքի վրա գրում էին նաև հուշեր, ուսումնասիրություններ:[1] Նրանցից նշանավոր էին Ջեյմս Մորիերը (հուշեր I և II ճանապարհորդություններից՝ 1808-1816թթ.), Մորից ֆոն Կոցեպուն (1817), Ջոն-Ջոնսնը (1817-20թ.թ.) և այլոց գրառում–ուղեգրությունները, որոնք օտար ականատեսների անմիջական խոհերն ու տպավորություններն են նաև հայ ժողովրդի մասին:[2]

Ռուս ճանապարհորդներից հիշարժան են Մեվեսը[3], Սեգալը[4] և այլն, որոնք անդրադարձել են Գանձակ-Ելիզավետպոլի տեղադրության, ազգաբնակչության, տնտեսական և հարակից այլ հարցերին: Նշված ճանապարհորդների հաղորդած նյութերը շատ օգտակար են և մեր կողմից վկայակոչված են նրանց համապատասխան գրառումները:

Հայաստանը հաճախ է եղել օտար բռնակալների՝ «Պարսից, Հռովմայեցւոց, Յունաց, Օսմանցւոց, Թաթարաց, Ափխազցւոց, Վրացւոց և Տաղստանցւոց անընդհատ արշավանքներն, որք իրեանց անդիմադրելի զօրութիւններով անչափ վնասներ պատճառեցին Հայաստանի բոլոր մասերում բնակվող հայ ժողովրդեան կրօնական, քաղաքական և բարոյական համազգային կենաց՝ արտաքին գոլով,

[1] Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ, ԺԹ դարի առաջին 20-ամյակ (1800-1820), Երևան, 1934, էջ 9
[2] Նույնի էջ 253-394, 500-612, 613-675:
[3] "Кавказ", 1863-1865 гг.(Критика и библиография), ст.40-43.
[4] Сегаль И., Елисаветпольская губерния. Впечатления и воспоминания, Тифлис, 1902 (Из журнала "Кавказский Вестник" за 1902 г.).

համարեա թէ անկարող եղած են վնասել Մեծ և Փոքր Սիւնեաց և ոչ մի կեանքին»:[1] Ինչպես նշվեց, հայերը ենթարկվել են ազգային, կրոնական խտրականության ճնշման ու հալածանքների. «Ընդհանրապես նրանց մահմեդական դրացիները,- վկայում է անգլիացի զինվորական և ճանապարհորդ - հուշագիր Ջոն Ջոնսոնը,- շատ արհամարհանքով են նայում նրանց վրա, մինչ իրենք (մահմեդականներ) անարժեք են, ծույլ, մեծախոս, բայց ստորին ցեղ, նշանավոր իրենց խարդախությամբ և նախապաշարումով կապված իրենց ցեղին ու աղանդին: Նրանք կարծում են, թե գերազանց են բոլորից, տգիտությամբ ու նախապաշարումով ուռճացած իրենց հանձնապաստան ամբարտավանությամբ իրենց իրավունք են համարում շատ պարագաներում վիրավորելու քրիստոնյաներին, վստահում են իրենց հավատքի կատարելության՝ արդարացնելու կամ ավելի ճիշտը՝ քավելու համար իրենց սեփական զզվելի մոլությունները»:[2] Այդ մոլությունների ազդեցության տակ էլ նրանք հայերին և մյուս քրիստոնյաներին ստիպում էին դավանափոխ լինել, օրինակ Դերբենդ քաղաքում և նրա հարակից չորս գավառներում, կար մոտ 80000[3] բնակիչ, «որք մինչդեռ կանխաւ եղած են հայադաւան քրիստոնեայ, այժմ ամբողջապէս դարձած են Օմարի աղանդին: Այսու ամենայնիւ իսպառ անհետացած չեն Քրիստոնէութեան նշաններն. Պօղոս-բուլաղի ընդարձակ հանգստարանի նմանը կայ և Ղասմ-քեանդում, որոց սրբատաշ տապանաքարերն զարդարուած են հայերէն արձանագրութիւններով: Պակաս չեն աւերակ եկեղեցիներու գետնի հաւասարած հիմքեր, անարձանագիր հայածև հանգստարաններ և յարգուած սրբավայրեր»:[4] Իսկ կանգուն եկեղեցիները, պատմական հուշարձանները և նրանց վրա եղած արձանագրությունները ավերվում ու ոչնչացվում էին, մեծ մասամբ, մահմեդականների կողմից և պատահական չէր Մ. Բարխուտարեանցի մտահոգությունն ու անհանգստությունը. «Սակայն տեսնելով որ ժամանակի անողոք ճիրաններն լափում եւ եղծում են մեր թանգագին հայրենիքի-Արցախի ամենապատուական հնութիւնները եւ արձանագրութիւնները, տեսնելով որ տգէտ եւ թշնամի ձեռներ քանդում, աւերում եւ ոչնչացնում են հայրենի սրբազան աւանդները. տեսնելով որ ցեղերն կրծում եւ անյայտացնում են անգին ձեռագիրների յիշատակարաններում եղած պատմական մարգարիտները եւ խոնաւութիւնն ու անհոգութիւնն կլանում են պատմական ակունքները ... պարտք համարեցի սիրով կրել ամեն նեղութիւն ... եւ գոնէ կազմել մի ուղեցոյց՝ ապագայ հմուտ

---

[1] Գաղտնիք Ղարաբաղի, էջ 71
[2] Հակոբյան Հովհ. Ուղղագրություններ, հ. Զ.ԺԹ դար, Եր., 1934, էջ 635/ /Ուղեգրություն գնդապետ Ջոն Ջոնսընի /1817թ.//
[3] Այս թիվը Մ.Բարխուտարեանցի վկայությունն է. հնարավոր է, որ այն որոշ չափով չափազանցված լինի
[4] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր ու դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 124-125

մասնագէտների համար ... շրջելով գաւառից-գաւառ, գիւղից-գիւղ, աւերակից-աւերակ եւ սարից դաշտ կազմեցի «Արցախ»-ը»:[1]

Նշված հանգամանքներից և կյանքի անտանելի պայմանների հետևանքով, շատերը ստիպված թողնում էին իրենց հայրենի բնակավայրերը, չդիմանալով բարոյական ու տնտեսական ճնշումներին ու հալածանքներին: Այդպիսի տեղեկություններով հարուստ է մեր պատմագիտությունը. այս անգամ դիմենք ցարական կառավարության պաշտոնյա, պետական խորհրդական Ֆոն Գագեմեյստերին, Կովկասի գիտակներից մեկին. «Կասպիական մարզի արևմտյան մասում հնագույն (աբորիգեն) բնակիչներ են հայերը և ուտիները, իսկ մնացած առկա ցեղերը եկվորներ են, որոնք հաստատվելով այս տարածքներում, հիշյալ բնակիչների մի մասին ոչնչացրին, իսկ մյուսին՝ ստիպեցին թողնել իրենց բնակավայրերը և գաղթել: Նրանք ովքեր մնացին, ստիպողաբար հրաժարվեցին իրենց հարթավայրային տարածքներից ու ամրացան նախալեռնային ու լեռնային շրջաններում»:[2]

18-19-րդ դարերի պատմական դեպքերը և նրանցից բխող պատերազմները, շատ ծանր հետևանքներ ունեցան Ղարաբաղի համար: Դեռևս XVIII դ. սկզբին լեզգիների անընդմեջ ավարառու արշավանքներին գումարվեց 1720-ական թվականների օսմանյան բանակների ներխուժումը: Բազմաթիվ տեղաբնակ հայեր տեղահան եղան, «նրանց փոխարեն Կուր գետի աջ ափի դաշտավայրը և նրան հարող լեռնակողմը գրավեցին ու հաստատվեցին թուրքական խաշնարած ցեղերը»:[3] Դրանից անկայունացավ նաև երկրամասի ներքաղաքական կյանքը. ինչպես արդեն նշել ենք, հայ մելիքներից ոմանց անհեռատես վարմունքի ու գործունեության պատճառով, երկրում առաջացավ քաղաքական անկայուն իրավիճակ. «... գոյութիւն ստացաւ մեր երկրում ճրոխանութիւնն[4] և այս ճրոխանութիւնն ծնավ ճրո-մելիքութիւնը Ղարաբաղում՝ այն ժամանակ ծագեցաւ ներքին երկպառակութիւն, խռովութիւն և սարսափելի արիւնահեղութիւն և անվերջանալի պատերազմներ... Այս բոլոր ներքին անկարգություններն տկարացրին Ղարաբաղի հարազատ մելիքութեան ոյժը և վնասեցին մեր քաղաքական, բարոյական և նիւթական կենաց, բայց ոչ բոլորովին»:[5] Արտաքին ու ներքին թշնամիների ընդհարումների ու վարած կռիվների հետևանքով ողջ երկրամասը վերածվել էր ռազմական գործողությունների թատերաբեմի: 1794-1797թթ. տեղի

---

[1] Նույնի, Արցախ, Թիֆլիս, 1895, Յառաջաբանութիւն, էջ Ա:
[2] Гагемейстер Ю., Каспийская область, СПБ,1838, ст. 8-9.
[3] Լեո, նշվ. աշխ., էջ 89-90:
[4] Ղարաբաղի բարբառով այդ նշանակում է վայրի անպտուղ ծառ. ճրո խան կնշանակի ոչ օրինական, ձեռք բերովի իշխանություն խան: Տես Գաղտնիք Ղարաբաղի, էջ 70-72:
[5] Նույն տեղում:

ունեցան Պարսկաստանի Աղա-Մահմեդ խանի արշավանքները Անդրկովկաս. «Սոյն թուականում (1795) մայիսի ժե (15)-ին այս գոյժն բերանից բերան թռչելով տարածուեցաւ ամբողջ Ղարաբաղում.-Ախտայ-Շահն (Աղա Մամատ շահն ... ներքին եղած է: Այս է պատճառն, որ հասարակութիւնն «Ախտայ» է կոչում): Խուտափիրինի կամրջով անցաւ Երասխ գետից, անքիւ սարվազներով գալիս է Շուշին կործանելու և Ղարաբաղը կողոպտելու: Ամեն մարդ բոդ տեսնէ իւր գլխի ճարը»:[1] Այս բոլորն ուղեկցվում էին նաև հայության ազգային, կրոնական ու սոցիալական ճնշումներով, հալածանքներով, նաև բնական աղետներով: 1797 թվի սարսափելի երաշտը, որ «ցամաքացրեց բոլոր բուսականությունը, ցանքսերը իսպառ ոչնչացաց: Կարծես ինքը՝ բնությունը միաբանվել էր մարդկային գազանությունների հետ, Ղարաբաղը բոլորովին ամայի և անապատ դարձնելու համար. վրա հասած 1798թ. ժանտախտը, լրացրեց ժողովրդի դժբախտության պակասը: 60000 տուն հայ բնակիչներ ունեցող Ղարաբաղը համարյա դատարկվեցավ»:[2] Անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերը 1810-1816թթ. իր երկրորդ ճանապարհորդության ժամանակ լինելով Ղարաբաղում, գրում է. «Ղարաբաղի գավառը, որ հողի, ջրի ու կլիմայի տեսակետից հավանորեն աշխարհում ամենագեղեցիկներից մեկն է, բայց երկար ժամանակից ի վեր, պարսիկների մղած պատերազմի հետևանքով ամայացել է: Մենք չտեսանք և ոչ մի բնակիչ... վայրի այծերի ու եղջերուների հոտեր թափառում էին մեծ քանակությամբ»:[3]

Սկսված արտագաղթը մեծ չափեր ընդունեց: 1797-1798թթ. Ղարաբաղի և Գանձակի խանություններից դեպի Վրաստան և Անդրկովկասի այլ վայրեր գաղթեց 11000 ծուխ (հայ ընտանիք): Այդ կապակցությամբ հայտնի է Պավել 1-ի ուղերձ-գրությունը Գեորգի վրաց թագավորին, Ղարաբաղի հայ մելիքների և նրանց ենթակա 11000 ընտանիքներին տալ հնարավորություն բնակվելու Կովկասյան տարածքների ուղղությամբ.[4] այն ամրագրվեց նաև 1797թ. հոկտեմբերի 7-ի օրենքով,[5] ցարի անձնական հրամանով: Արտագաղթի գործընթացն աշխուժացավ, երբ 1801թ. Վրաստանը վերջնականապես անցավ Ռուսաստանի գերիշխանության տակ: Ցարական կառավարությունն իր հովանավորության տակ վերցրեց նաև վրացահայությանը և ձգտում էր, որ շարունակվի այլ վայրերում ապրող հայերի ներգաղթը Ռուսաստան, որպեսզի բնակեցվեր Վրաստանի և Ռուսաստանի մարդազուրկ, խոպան շրջանները. Դեռևս 1720-ական թվականներին, երբ

---

[1] Նույնի, էջ 17:
[2] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1959, էջ 291:
[3] Հակոբյան Հովհ., նշվ. աշխ., էջ 386:
[4] Собрание актов относящихся к обозрению истории армянского народа, ч. I, Москва, 1836, ст. 32-33.
[5] Նույնի, էջ 199-200, Տես՝ том законов XXIV, ст. 761 , N18189.

Ռուսաստանի օգնությամբ հայերի ազատագրումը Պարսկաստանի լծից չիրականացավ, Պետրոս Ի-ը, մինչև իր կյանքի վերջին օրերը ձգտում էր «թեթևացնել հայերի վիճակը, Ռուսաստանի դռները բացելով վերաբնակվել ցանկացող հայերի առջև»:[1] Եվ պատահական չէր, որ «սկսած 1723 թվից մինչև 1779 թիվը՝ 56 տարվա ընթացքում Ռուսաստանի բարձրագույն հովանավորության և բազմաթիվ հրավերների արդյունքում, Պարսկաստանից և Թուրքիայից հայերը զանգվածաբար վերաբնակեցվում էին Ռուսաստանի հարավային ազատ, խոպան, անբնակ վայրերում, որոնք աշխատասեր, գործունյա հայերի ջանքերով կյանքի էին կոչվում»:[2]

1804-1813թ.թ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, Երևանի խանությունից և Կարսի փաշայությունից մեծ թվով հայեր տարագրվեցին Վրաստան և Հայաստանի հյուսիսային շրջաններ, իսկ Գյանջայի և Ղարաբաղի խանություններից Կախեթիա, Սոմխեթիա և Քարթլի,[3] որոնք արդեն գտնվում էին Ռուսաստանի տիրապետության տակ:

Այդ ժամանակների մեծ գաղթի և կորուստների համար տառապած եպիսկոպոս Սակար Բարխուդարյանցը ցավով գրում է. « Ցրած եւ գերուած հայեր ... միլիոնաւոր (նկատի ունի շատ մեծ քանակությունը Ա.Գ.) հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած: Այո, դատարկուած են իւրեանց հայ եւ հայադաւան բնակիչներից Պիան, Մուղան, Վարդանակերտ, Արան-ռոտ, Տրի, Ռուցպատեան ... դատարկուած են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Ջաւէ, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդայ եւ Դիզակ (պատմական անուններն են Ա.Գ.) գաւառներն: Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչները: Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թվի սովին եւ ժանտախտին, մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Շաքի և Շամախի, մի մասն Կախեթ և Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Դարբենդ եւ Ռուսիա: *Տասնից մին հազիւ մնացած է այսօր*»:[4] Այս ընդգծված միտքը թվում է չափազանցված է, սակայն, ինչպես վերևում նշեցինք, տիրող անտանելի վիճակը պարտադրում էր ելք գտնել վերապրելու համար: Երկրից նաև դուրս էին գալիս հայ իշխանավորները, իրենց գերդաստաններով և նրանց ենթակա գյուղերի ու բնակավայրերի հայ բնակչությամբ: Այն ժամանակ (1800-ական թվ.) Վրաստանի կազմի մեջ մտնող Լոռի Փամբակի շրջան գաղթեցին Ղարաբաղի հայ մելիքները՝ Շահնազարյան Ջումշուտը, որը ստացավ Լոռիի գավառը և

---

[1] Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897, ст. 638, (Г.И.Канонов, Армяне в России).
[2] Собрание актов относящихся..., ч. II, Москва, 1838, ст. 296.
[3] МИЭБГКЗК, т. VII, Тифлис, 1887, ч. I, ст. 13.
[4] Եպիսկոպոս Սակար Բարխուտարեանց, Արցախ. Թիֆլիս, 1893, էջ Ը:

Բորչալուի մի մասը, Բեգլարյան Մելիք Ֆրիյդոնը ստացավ Բորչալուի մնացած մասը և Աղջակալան. իսկ Մելիք Աբովը (Ֆրիյդոնի հորեղբայրը)՝ Բոլնիսը իր սահմաններով:[1]

Իսկ Ղարաբաղը, որը հայտնի էր իր հարուստ, բերքատու հողերով, 1805-1813թթ., անընդմեջ, լինելով պարսկական հարձակումների թատերաբեմում, քայքայվել էր նրա տնտեսությունը և ժողովուրդը հատնվել էր ծայրահեղ կարիքի մեջ: Այս երկրամասը, երբ 1805թ. միացավ Ռուսաստանին, ուներ 10000 ընտանիք-բնակչություն. 1812թ. մարդահամարի արդյունքում այնտեղ կար 3080-ը՝ քայքայված, աղքատացած վիճակում, իսկ մնացածը՝ կամ գերի էր տարվել Պարսկաստան, կամ էլ ինքնակամ հեռացել էին այլ վայրեր, փրկելով իրենց կյանքը և մասամբ ունեցվածքը:[2]

30 տարվա (1783-1812) ընթացքում Ղարաբաղի հայերի թիվը պակասել էր մոտ 6 անգամ՝ 30000-ից մնացել էր 5000 ընտանիք:[3]

Նկարագրված հանգամանքների ու նրանցից բխած արտագաղթի մասին խորհելիս, գալիս ես այն եզրակացության, որ վերը նշված պայմաններում ելքը արտագաղթն էր, իսկ բարենպաստի դեպքում՝ լինում էր հակառակը՝ ներգաղթը: Օրինակ, «Ղազախի դիստանցիայի (ուղեմաս) ազգաբնակչությունը հաճախ կրել է բվական փոփոխություն. քոչվորության պատճառած վնասների, պարսիկների ու թուրքերի հաճախակի հարձակումների ու տեղի աղալարների շահագործումների պատճառներով, տեղի բնակիչները ստիպված թողել և հեռացել են: Բարենպաստ պայմանների դեպքում, նրանց թիվը այստեղ մեծանում էր: Տեղաշարժերը կատարվում էին ըստ իրավիճակի»:[4]

1805թ. երբ Ղարաբաղը գրավվեց Ռուսաստանի կողմից, երկրից հեռացած մելիքներից ոմանք վերադարձան և հիմնեցին նոր բնակավայրեր. Մեծ շեն, Սոխրաթաղ, Ենգիջա և այլն (Զրաբերդ գավառում):[5] Մելիք Ջումշուդ Շահնազարյանը, որը (ինչպես նշված է վերևում) դարավերջում, իր ընտանիքով ու գյուղացիներով, հաստատվել էր Լոռի գավառում, խնդրագրով դիմում էր. «...Ելիսավետպոլ վերադարձած իմ հայրենակից գյուղացիները չունեն բնակության հիմնական վայր-հանգրվան, ուստի խոնարհաբար խնդրում եմ թույլ տալ, Ելիսավետպոլի շրջակայքում եղած՝ ավերված գյուղերից մեկում, բնակության

---

[1] Присоединение... , т. I, ст. 9 (док. NN5-8՝ ЦГИА Груз. ССР, Ф. 2, оп.1, л. 12, л.161, 163, 167).

[2] Նույնի, т. II, ст. 34, տես ЦГИА Груз.ССР, Ф. 2, оп.1, д. 612, л. 35-38, АКАК, т. VI, ч.I, док. 1265.

[3] Тунян В, Карабахский конфликт, Ер. 1999, ст. 5.

[4] Обозрение российских владений за Кавказом, ч. II, ст. 223.

[5] МИЭБГКЗК, т. VI, ч. I, ст. 338.

իրավունք ստանալ: Ցանկալի է, որ այն լինի Ելիզավետպոլ քաղաքից՝ մոտ 15 մղոն հեռավորության վրա...»: 1805թ. հոկտեմբերի 7-ի գրությամբ Հովհաննես արքեպիսկոպոսը դիմում է գեն. Ցիցիանովին թույլ տալու ծնունդով Գանձակեցի 10 հայ ընտանիքի, Փամբակից վերադառնալու իրենց նախկին Յուղուբլու գյուղը[1], ու նման շատ ուրիշ փաստեր...

Ավան Յուզբաշին (հարյուրապետ) և նրա որդին Մելիք Վանին, սկսեցին զբաղվել հայկական հին շենների բնակեցմամբ և վերաբնակեցմամբ. օրինակ, Գանձակի Կասապետ կամ Կուսապետ (կույսերի մենաստանի անունից) գյուղը, որը հիմնադրվել էր Հասան Ջալալյան տոհմից ոմն Աթաբեկի նախաձեռնությամբ 18-րդ դ. սկզբին, ամբողջովին ավերվել և հայությունից դատարկվել էր:

1812-1814թթ. նա իր ընտանիքով ու ծառաներով տեղափոխվեց հիշյալ գյուղը և նրա ջանքերով վերջինս, կարճ ժամանակում ունեցավ 150 ծուխ. տեսնելով այս գյուղի հարությունը, Վանին թողեց այն և նույնպիսի զոհողությամբ ու նվիրվածությամբ հիմնադրեց նոր Ուլու-Կարաբեկ, Կիչիկ-Կարաբեկ, Մազավուզ, Լյուլասազ, Գյուլյազատ, Ջան-Յազատ գյուղերը:[2] Բացի նշվածներից, 1807թ. Պարսկաստանի Խոյ գավառից Գանձակ ու Ղարաբաղ գաղթեցին բավականաչափ պարսկահայեր և հիմնեցին իրենց համայնքները Գանձակում՝ Ղարադաղլի, Ղարաբաղում՝ Գետաշեն (Չայքենտ) և Ղազախում Գետաբեկ հայկական համայնքները, իրենց գյուղերով:[3]

«Դեռևս 16-րդ դարի II կեսին, պարսից շահերի հրամանով, Բորչալուի և Ղազախի գավառներում հաստատվեցին մոտ 35000 թուրքեր»:[4] Տեղացի հայերի մեծ մասը ստիպված թողեց իր պապենական վայրերը, իսկ փոքրաթիվ մասով կազմավորվեցին նոր հայկական գյուղեր, որոնք ընդգրկվեցին 19-րդ դ. սկզբներին ձևավորված Ղազախի, Շամշադինի, Բորչալուի, Փամբակի, Շորագյալի մահմեդական ուղեմասերում:[5] Ինչպես նշվեց, Ղարաբաղից, Գանձակից ու հարակից այլ շրջաններից գաղթած հայերի մի զգալի մասը վերադարձավ իր հայրենի վայրերը, սակայն գերակշիռ մասը բնակություն հաստատեց ռուսական կայսրության տարբեր տարածքներում, հատկապես Անդրկովկասում: Նման զանգվածային տեղաշարժեր եղել էին նաև նախկինում: Եվ օտար վայրերում, հների կողքին ձևավորվում էին հայկական նոր բնակավայրեր-գաղութներ, որոնցով աչքի էր ընկնում հարևան Վրաստանը. «Ախալքալաքում մոտավորապես կայ 300 տուն հայ, որոնք գաղթել են

---

[1] Присоединение..., т. I, ст. 387, 331, տես ЦГИА Груз. ССР, Ф.16, л. 320, л. 2, Ф.2, л. 90, л. 98.
[2] СМОМПК, вып. XIII, Тифлис, 1892, ст. 42-45.
[3] МИЭБГКЗК, т.VII, ч. I, ст.13.
[4] Լեո, Հայոց պատմություն, հ. III, գիրք I (Եժ, III հ.), Երևան, 1969, էջ 90-91:
[5] Նույն տեղում:

գլխաւորապէս Գանձակի Ոսկանապատ գիւղից», կամ նոյն՝ Ջավախքի Մցխեթի շրջանի Մուխտան, Լիս գյուղերի հայերի նախնիները նույնպես գարդմանահայեր էին[1] ... Գաղթական հայերի խմբերը հասել էին Դուշեթ: Վրաստանի Մեծ Շուլավեր գյուղում հանգրվանել էին Գանձակի Ղարամուրադ, Մելիք-գաղա և Շամխորի Չարդախլու և այլ գյուղերի հայ բնակիչները.[2] նրանցով բնակեցված էին նաև Կախեթի ու Քարթլիի շրջանները: Բացի գավառներից, հայերը հաստատվում էին Անդրկովկասի քաղաքներում: Ստացվում էր այնպես, որ Արևելյան Հայաստանն իր հասարակական-քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքով ավելի լայն հասկացություն էր. նրա սահմաններն առնչվում էին անդրկովկասյան և ռուսական կենտրոնների կյանքին, ինչպես նաև այնտեղ ապրող հայ հոծ զանգվածների հետ: Եվ ուր էլ որ լինեին, նրանք իրենց (կրոնական, ազգակցական, տնտեսական և այլն) կապերը, հարաբերությունները պահպանում էին նախկին բնակավայրերի (ծննդավայր) հետ, և երբեմն վերադառնում էին այնտեղ: Հայության ցրված նման իրավիճակը վատ էր անդրադառնում նրա ընդհանուր ճակատագրի վրա, քանի որ ազգային որևէ երևույթ, դեպք կամ փաստ (դրական թե բացասական) ազդում և տարածվում էր Անդրկովկասի ողջ հայության վրա: Դրա համար արևելահայության որևէ հատվածին վերաբերող հիմնահարցերին (քաղաքական, սոցիալ-տնտեսական, վարչա-ժողովրդագրական, մշակութային և այլն) անդրադառնալիս, երբեմն դրանք կրում են առնվազն, համաանդրկովկասյան բնույթ. (երկրամասի մյուս ազգություններն այսպիսի խնդիրներ չունեին. նրանք կենտրոնացած էին որոշակի տարածքներում. այլ վայրերում նրանց թիվն աննշան % էր կազմում):

Նման իրավիճակներից զերծ չէին նաև ժամանակի ուսումնասիրողները. օրինակ Ալ. Երիցյանցը անդրադառնալով 1800-1820 թվականների վիճակագրությանը նշում է. «Թէև այն ժամանակներում գրեթէ անկարելի էր ճիշտ վիճակագիր կազմելը, այնուամենայնիվ հետաքրքիր են վրաց և հայոց առաջնորդների թվանշանները ... <u>սկսած Գյանջայից և նրա շրջակայքից մինչև Իմերեթի սահմանը</u>, (ընդգծումը մերն է) 1821 թ. եղել է մոտ 34000 տուն քրիստոնյա, որոնք բնակվելիս են եղել վեց քաղաքներում և 975 գյուղերում»:[3]

---

[1] «Գարդմանը» ամսաթերթ, 1996, թիվ 1, էջ 7, թիվ 2, էջ 16 (Գարդմանահայ գաղթականությունը Վրաստանում), տես՝«ՊԿՊԱ, Ֆ27, ց.1, գ.46, թ.119, ֆ.56, ց.1, գործ 1052, թ.1, ֆ.53, ց.1, գ. 3330, թ.6:

[2] Նույնի տեղում, տես նաև «Մշակ» 1873, N2, էջ 2, «Մեղու Հայաստանի», 1873, N9, էջ 2, «Նոր դար», 1897, N103, էջ 1-2:

[3] Ալ.Երիցյանց, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա /1800-1832/, Թիֆլիս, էջ 139: Վրացիների և ռուսների վիճակագրությունը հեղինակը տվել է միասին՝ որպես ուղղափառների:

Ըստ դավանության և ազգության նրանց ընդհանուր
ծխերի թիվը՝
(Ելիզավետպոլի մարզ և Քարթլի)

| Քաղաքը | Վրացի, ռուս / ծուխ / | Հայ / ծուխ / | Ընդամենը / ծխերի թիվը / |
|---|---|---|---|
| Թիֆլիս | 417 | 2951 | 3368 |
| Գորի | 121 | 331 | 452 |
| Անանուր | 24 | 123 | 147 |
| Թելավ | 74 | 236 | 310 |
| Սղնախ | 12 | 377 | 389 |
| Ելիսավետպոլ | 28 | 828 | 856 |
| Ընդամենը 6 քաղ. | 676 | 4846 | 5522 |

իսկ վերը նշված նույնանուն գավառների և Օսեթիայի, Բուրչալուի, Փամբակի, Ղազախի ու Շամշադինի գյուղերում՝ թվով 975, վրացիների, ռուսների ծխերի թիվը կազմում էր 20486, իսկ հայերինը 7054 ծուխ, ընդամենը 27540 ծուխ: Նշված բոլոր բնակավայրերի տվյալներով, վրացի և ռուս ազգությունների ծխերի ընդհանուր քանակը 21162 (676+20486), հայերինը՝ 11900 (4846+7054), ընդամենը 33062 ծուխ:[1]

Ըստ բերված տվյալների, 1821թ. Վրաստանի քրիստոնյա բնակչության 1/3-ը հայեր էին, իսկ «վրացիք՝ պակաս քան երկու երրորդ մասը: Հայք վերոհիշյալ վեց քաղաքներում էլ ամենաբազմաթիւ տարրն էին, իսկ վրացիք ազնուականներից սկսած - գլխաւորապէս բնակվում էին գիւղերում, այնպէս որ, ընդհանուր հաշվով, ութը քաղաքացիներից 7-ը՝ հայ էր և մէկը՝ վրացի. իսկ չորս գիւղացիներից երեքը՝ վրացի էին, մէկը՝ հայ»: Հեղինակն այստեղ անդրադառնում է երկրի գյուղացիության և ազնվականության, մասամբ նաև հոգևոր դասերի սոցիալական կազմին ու վիճակին նշելով. «Գյուղական համայնքի մոտ 12000 ծուխ արքունի ստրուկներ էին (նկատի ուներ ճորտերին Ա.Գ.), մոտ 10000-ը կալվածատերերին կամ պարոններին էին պատկանում և 4000-ից ավելի համարվում էին եկեղեցեաց սեփականություն (որոնց մեջ մոտ 200 ծուխ ստրուկ էին էջմիածնի վանքի): Այդ ժամանակներում երկրիս ազնվական դասը տակավին չէր կենտրոնացած քաղաքներում և սիրով բնակվում էր գյուղերում, և ահա 730 ծուխ գյուղաբնակ

[1] Նույն տեղում:

ազնվականներից 611-ը՝ վրացիք էին և 119-ը հայք: Վրացիք երկրիս մեջ ունեին 317 եկեղեցի և 341 կղերական / /եկեղեցական, հոգևորական/, 1 եկեղեցում՝ մոտավոր, 1 հոգևորական՝ 1 : 1 հարաբերությամբ/ / , իսկ հայք՝ 140 եկեղեցի և 737 կղերական / 1 : 5 հարաբերությամբ /»:[1]

Նույն ժամանակաշրջանում՝ 1822-1823թ. տվյալներով Ղարաբաղի երկրամասում կար 18500 ընտանիք, մոտ 90000 երկսեռ մարդ, որի 1/3-ը հայ էին, 1/7-ը՝ քուրդ-թաթար:[2]

Սիա այսպիսին էին վրացահայության (որի մեջ էին մտնում նաև Ելիսավետպոլ, Ղազախ, Շամշադին գավառների բնակչությունը) և Ղարաբաղի երկրամասի վիճակագրության մոտավոր պատկերը 19-րդ դ. 20-ական թվականներին, 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին: Այն զգալի փոփոխության ենթարկվեց այս պատերազմի ընթացքում, և հետո, երբ 1828թ. փետրվարի 10-ին կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը, որի 15-րդ հոդվածով պարսկահայերին «շնորհվում է մի տարի ժամանակ ազատաբար անցնելու պարսից աշխարհներից (նահանգ) ռուսաց գավառները. նմանապես թույլ էր տրվում նոցա դուրս տանել կամ ծախել իրենց շարժական գույքը, իսկ անշարժ կալվածները ծախելու համար տրվում էր հինգ տարի ժամանակ»:[3] Հայերի ներգաղթի կազմակերպման ու ղեկավարման դժվարին գործը հանձնարարված էր գնդապետ Լազար (Եղիազար) Լազարյանին, որն արդեն ծառայության մեջ էր Կովկասում: Նա այդ գործը կատարեց մեծ պատասխանատվությամբ, հմտորեն. գեներալ Պասկևիչին ուղղված զեկուցագրում հայտնում էր, որ Անդրկովկաս են ներգաղթել 8249 պարսկահայ ընտանիք՝ շուրջ 45000 մարդ:[4]

Հայտնի է, որ հաղթական ելք ունեցավ նաև 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը: 1829թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրի թիվ 13 հոդվածով թույլատրվում էր, մեկուկես տարվա ընթացքում, երկկողմ բնակիչների տեղափոխությունը: 1830-1831 թթ. տվյալներով 12655,[5] ըստ մեկ այլ աղբյուրի՝ 14047 ընտանիք[6] մոտ 100000 մարդ, արևմտահայ գաղթեց Արևելյան Հայաստան և այլ վայրեր: Արևելահայ և արևմտահայ ողջ գաղթականությունը բաշխվեց, մոտավորապես, հետևյալ չափերով: Երիցյանի տվյալներով, պարսկահայերից 6946 ծուխ՝ 35560 մարդ հաստատվեց Հայկական մարզում և մի քանի հարյուր գերդաստան անցան Ղարաբաղի կողմը և ոմանք էլ ցրվեցին, հասան մինչև Թիֆլիս

---

[1] Երիցյան Ալ., նշվ. աշխ., էջ 140:
[2] АКАК, т. VI, Тифлис, 1874, N308, ст. 693.
[3] Երիցյան Ալ., նշվ. աշխ., էջ 322:
[4] Նկարագիր գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան, Մոսկվա, 1832, էջ 70-71:
[5] АКАК, т. VII, ст. 850-851.
[6] Երիցյան Ալ., նշվ. աշխ., էջ 441-442:

և այլ վայրեր:[1] Իսկ արևմտահայերից 21666 մարդ (3682 ընտանիք)[2] հաստատվեցին Հայկական մարզում, մնացածը Ղարաբաղում, Գանձակում, Ջավախքում և այլն: Արևելյան Հայաստանում հինգ-վեց տարվա ընթացքում (1827-1832թթ.) հայերի թիվն աճեց ավելի քան 147 տոկոսով:[3]

Գաղթած ժողովուրդը, բնական է, ունեցավ նյութական և բարոյական կորուստներ, զրկանքներ, դժվարություններ. «Տէրութեան կատարած այս մարդահամարը (1829-1831 թթ.) ցույց տվեց, որ կարճ միջոցում 8249 տնից մնացել էր 6946 տուն և պակասել էր 1303 գերդաստան. 45000-ից մնացել էր 35000 հոգի և պակասել մոտ 10000»: Այս տվյալները հաղորդող Երիցյանը, հատկապես մանրամասն կանգ է առնում Ղարաբաղի և նրա շրջակայքում գաղթած հայության վիճակին. «Ռուս աստիճանաւոր Չուբարով, որ պաշտօնով ուղարկուած էր Ղարաբաղ, 1830 թուին ապրիլի 20-ին, գրում է Պասկևիչին. « ... Պարսկաստանից գաղթած հայք նշանաւոր եւ օրինակելի աշխատասիրութեամբ . նոցա մեծ մասը արհեստաւոր են. այս օգտաւէտ ժողովուրդը չափից դուրս ճնշվում է Ղարաբաղում: Մի կողմը թողնելով բնիկ հայերին, որոնք կեղեքվում են թուրք բեկերից, կը յիշեմ միայն գաղթականների մասին ... հիմա նոքա չունին հաստատ բնակութիւն: Նոցա տուել են շատ անբերրի հողեր: Որպէս ապացոյց՝ թէ թշուառ դրութեան մէջ էին գաղթականները Ղարաբաղում, կը յիշեմ հետևեալը. Տեղական իշխանութեան կարգադրությամբ՝ Մարաղու հայք սկզբում բնակութիւն ստացան հին, այժմ աւերակ Բերդայ քաղաքում: Այս տեղը, որ մի դաշտ է Կուր գետի մօտ, ամառը սաստիկ շոգ է և անտառներում եղած զանազան թունաւոր սողունները դարձնում են այս տեղը մահուան բնակարան ... եւ նոցա իշխանությունները թոյլ չէին տալիս հաստատուելու հովասուն լեռնային վայրերը ... երեք ամսուայ մէջ նոցանից 1012 հոգիք մեռան: Բաւական չէր այդ, շրջակայ քոչող թուրքերը, օգուտ քաղելով նոցա հիւանդութիւնից, թալանեցին նոցա բոլոր գոյքը և տաւարը ... Առհասարակ գաղթական հայք այստեղ վերին աստիճանի նեղվում են, թէ իւրեանց թուրք նայիբներից և թէ տեղական իշխանութիւններից»:[4]

Այս բոլորով հանդերձ Պարսկահայքից ու Արևմտյան Հայաստանից հայերի զանգվածային գաղթն Արևելյան Հայաստան, խոշոր քայլ էր հայ ժողովրդի ազգահավաքման ճանապարհին: Եվ ընդհանրապես «Հայաստանի արևելյան հատվածի միացումը Ռուսաստանին բախտորոշ նշանակություն ունեցավ հայ

---

[1] Նույնի, էջ 337:
[2] Шопен И., Историческій памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к Россійской имперіи, СПБ, 1852, ст. 640.
[3] Համբարյան Ա., Մուրադյան Դ., Սիմոնյան Ա., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 11:
[4] Երիցյան Ալ..նշվ. աշխ., էջ 322-323:

ժողովրդի համար, ոչ միայն ֆիզիկական փրկության ու գոյատևման, այլ նաև, որ դրանով երկիրը դուրս եկավ դարավոր լճացումից ու քայքայումից և բռնեց քաղաքական - տնտեսական վերելքի ուղին, տիրապետող ֆեոդալական հետամնաց կացութաձևը պետք է աստիճանաբար փոխարինվեր կապիտալիստական առաջավոր հարաբերություններով»:[1] Հետագայում հայության ներգաղթը շարունակվեց նաև 1853-1856 թթ. և 1877-1878 թթ. տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմների ժամանակաշրջանում:

Վերը նշված համառոտ տեղեկությունից ու նկարագրությունից, ստացվում է այն, որ 18-19րդ դարերը հայ ժողովրդի համար եղել են մեծ տեղաշարժերի շրջան, որի ընթացքում հայերը հաստատվեցին ոչ միայն Արևելյան Հայաստանի (այդ թվում նաև Արցախի ու Գանձակի) գավառներում, քաղաքներում, այլ նաև սփռվեցին Ռուսաստանի տարածքով մեկ՝ հատկապես Կովկասում և Անդրկովկասում: 1831-1832 թթ. Վրաստանի (Կախեթիա, Քարթլի) և նրա կազմի մեջ մտնող, այսպես կոչված, մուսուլմանական 5 ուղեմասերում (դիստանցիա) բնակչության ընդհանուր թիվը հետևյալն էր:[2]

| | Քաղաքը և նույնանուն գավառը | Ծխերի թիվը | Արական սեռի մարդ |
|---|---|---|---|
| 1 | Թիֆլիս | 7020 | 19246 |
| 2 | Ելիսավետպոլ | 5818 | 12541 |
| 3 | Բորչալուի ուղեմաս | 3984 | 13549 |
| 4 | Ղազախի | 4960 | 17632 |
| 5 | Շամշադինի | 2561 | 10888 |
| 6 | Փամբակ-Շորագյալի | 4897 | 16628 |
| Ընդամենը | | 29240 | 90484 |

Նշված վայրերում, հատկապես քաղաքներում, համեմատաբար մեծ էր հայ ազգաբնակչության թիվը ... Այդ ժամանակ Անդրկովկասում հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 370000 մարդ,[3] իսկ 1850-ական թվականներին. «ողջ Ռուսաստանում (Արևելյան Հայաստան, Վրաստան, Կովկասի այլ վայրեր և

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Եր. 1974, էջ 192-193:
[2] Обозрение российских владений за Кавказом, ч. I, ст. 18.
[3] Евецкий О., Статистическое описание Закавказского края, СПБ, 1835, ст. 30.

եվրոպական Ռուսիա) նրանց՝ հայերի թիվը հասնում էր 1200000, որի ստվար մի մասը բնակվում էր Կովկասում և Անդրկովկասում:[1]

Արխիվում պահպանված «Այբբենական ցուցակ Կովկասի հայաբնակ քաղաքների և գիւղերի»[2] ( ներառյալ Երևանի նահանգը և Կարսի մարզը) վերնագրով գործում նշված բնակավայրերի թիվը, 1900-1908 թթ., կազմել է 1150,[3] որից 87-ը խառը (հայերը վրացիների, թաթարների, ռուսների և այլոց հետ) բնակչությամբ: Գուցե, ժամանակաշրջանի իմաստով այն դուրս է մեր ուսումնասիրության շրջանից՝ 19-րդ դարից, բայց պետք է նկատի ունենալ, որ նշված բնակավայրերը հիմնադրվել են ողջ 19-րդ դարի (և դրանից էլ առաջ) ընթացքում: Հայ ժողովրդի ցրված այս իրավիճակը շատ դժվարություններ ու բարդություններ էր ստեղծում. նախ, որ հայությունը համախմբված չէր իր բնօրրան հայրենիքում, որից և ջլատվում էր ժողովրդի ազգային միասնությունն ու պաշտպանունակությունը, փոշիանում էին ազգային ունեցվածքը և եկամուտները ... Սակայն նրանց առկայությունն այս կամ այն երկրի տարածքում, խրախուսվել ու հովանավորվել է, քանի որ հայ գործարար առևտրականների, արդյունաբերողների ու մասնագետների երկկողմանի շահավետ գործունեությունը ծեռնտու է եղել: Հայերը երևելի առևտրականներ էին, հատկապես պարսկահայ (այդ թվում նաև Ղարաբաղի Շուշվա և Գանձակի) և վրացահայ վաճառականները, որոնց գործունեությունը սկսվել էր վաղ ժամանակներից: Ակնառու էին հնդկահայ գաղութի առևտրականները. «Անգլիական վաճառականները 17-րդ դ. առաջին կեսին գալով Հնդկաստան, մեծ հիասթափությամբ տեսան, որ հայերը, Հնդկաստանում արտասահմանյան առևտրի պիոներները, հիանալի տեղավորվել են այդ երկրում և վարում են իրենց կարևոր և հատկապես շահավետ էքսպորտային առևտուրը Եգիպտոսի, Հաբեշստանի, Թուրքիայի և Միջերկրականի ծովային նավահանգիստների, գչխավորապես Վենետիկի և Լիվոռնոյի հետ: Արաբական առագաստներով նրանք կտրում էին

---

[1] "Кавказ", 1854, N80-91, г. Дюлорье-русский путешественник по Персии /նշված 11 համարներում նա տպել է «армяне» /հայերը/ վերնագրով իր նոթերը, ուր շատ նյութերի հետ միասին, հաղորդում է նաև նրանց բվական վիճալագրությունը, ըստ որի. 1/ Թուրքիայում /Արևմտյան Հայաստան/ և Փոքր Ասիայի հարավային և արևմտյան երկրներում՝ Սիրիա, Եգիպտոս, Ռումինիա,, Ղանուբյան իշխանություններ – 2,5 միլիոն, 2/ Ռուսաստանում /վերը նշված/ 1200000, 3/ Ավստրո-Հունգարիայում՝ 25000, 4/ Պարսկաստանում և Ադրբեջանում՝ 150000, 5/ Հնդկաստան և Ասիական արշիպելագում 25000: Բոլորը միասին կազմում է 3900000: Ըստ հեղինակի, հավանական է հաշվառումից դուրս է մնացել առնվազն 100000 հայ, ուստի երկիր մոլորակի Արևելյան կիսագնդում, ըստ Դյուլորեի, ապրում էր 4 միլիոն հայ/:

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.53, ց.2, գ.109, թ.1-20 /երկու կողմը 40 էջ/. այն բաղկացած է 8 սյունակից. 1և 2 տեղանուններն են՝ հայերեն և ռուսերեն /այստեղ միայն ռուսերենն Ա/, 3-ը՝ նահանգի կամ երկրի անվանումը, 4-ը՝ գավառ, շրջան, 5-ը գավառամասի թիվը, 6-ը բնակիչների թիվը, 7-ը տարեթիվը /1906 կամ 1908/, 8-ը թե որ ազգության հետ է խառնված հայությունը՝ խառը բնակավայր:

[3] Չնայած տեղանունները պետք է գրված լինեին հայերեն և ռուսերեն, սակայն միայն ռուսերենով են գրված և տրված է մինչև «т» տառը ներառյալ, իսկ у, ф, х, ц, ч, ш, щ, э, ю, я տառերով սկսվող տեղանունները չկան, ուրեմն նշված 1150-ը ամբողջը չէ:

ամբողջ Հնդկական օվկիանոսը և մուտք գործում Սումատրա, Ճավա, Ֆիլիպիններ և անգամ հեռավոր Չինաստան»:[1] Հնդկահայ վաճառականներից շատերը ծննդով ղարաբաղցիներ էին. կան բազմաթիվ վկայություններ նրանց կողմից արված նվիրատվությունների մասին, օրինակ. «ծագումով Ղարաբաղի Նորաշեն գյուղից, 75-ամյա Մելիք Դավթյանը, անգլիական բանկում հօգուտ իր ազգի ժառանգներին կտակում է 80000 հնդկական ոսկու դրամագլուխ ...»:[2] և այլն:

Հիշյալ ժամանակներում հայերը մեծ գործունեություն էին ծավալել նաև Ռուսաստանում, որը գնահատվել ու հովանավորվել է ռուսական կառավարող շրջաններում: Հայ-ռուսական նման հարաբերություններն էլ ավելի խորացան 19-րդ դ. 30-ական թվականներից՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո. « ... հայերի պատմությանը մենք պետք է հատուկ վերաբերմունք ցուցաբերենք, հատկապես այն ժամանակներից սկսած, երբ Ռուսաստանի ներսում առաջացան հայկական հիանալի գաղութները և նաև հետագայում, երբ պատմական Հայաստանի մի մասը՝ Արարատյան երկիրը միացվեց Նիկոլայ ցարի հզոր պետության՝ Անդրկովկասյան տիրույթներին»:[3] Այս մտքերի հեղինակը ռուս գրականագետ, պատմաբան Ս.Ն. Գլինկան է, որն անձամբ ձեռնամուխ եղավ հայերին վերաբերող արխիվային, փաստական նյութերի հավաքման ու հրատարակման գործին, սկսած ուշ միջնադարից մինչև 19-րդ դ. 30-ական թվականները, երեք մասով,[4] ուր կան բազմաթիվ վկայություններ, թե ինչպես ռուսական կառավարությունը հովանավորում և նպաստավոր պայմաններ էր ստեղծում նրանց գործունեության համար և օրենքներով ամրագրում դրանք: Այսպես, 1667թ. ապրիլի 22-ի օրենքով՝ «Առևտրի նոր կանոնադրության» թիվ 77 հոդվածով, պարսկահայ, բուխարահայ, հնդկահայ վաճառականներին իրավունք էր տրվում, իրենց ապրանքներով, անարգել մուտք գործել Մոսկվա և ռուսական այլ քաղաքներ, ազատ առևտուր անելու համար: Նույն՝ 1667թ. մայիսի 31-ի մեկ այլ օրենքով, հայկական առևտրական ընկերությունը պարգևատրվում է պատվոգրով՝ մետաքսի հումք և մետաքս Ռուսաստան ներկրելու համար:[5] Այդ գործի գլխավոր կազմակերպիչները պարսկահայերն էին, այդ թվում նաև ղարաբաղցիները. դարասկզբին (19-րդ դ.) շատ նշանավոր էին Շուշի քաղաքի առևտրական երկու գերդաստանները. «Երկոքին տունք էին Հայոց՝ որոց ընդարձակութիւն վաճառաց,

---

[1] Միրզաբեկյան Զ., Մեսրոպ Թաղիադյան, Եր. 1971, էջ 11 /տես M,seth, Armenians in Yndia. Calcutta, 1937, p.VII:

[2] Մատենադարան, Կարողիկոսական դիվան, թղթ. 214, վավերագիր 100:

[3] Собрание актов относящихся к обозрению истории армянского народа, ч. I, Москва, 1836, Предисловие, ст. 1.

[4] Նույնի նաև՝ ч. II,1838, ч. III, 1842.

[5] Նույնի, ч. I, ст. 3-4.

բազմութիւնք գործավարաց և պատիւք ի մէջ Ռուսաց՝ մեծանային յոյժ յոյժ: Տունն Հախումեանց ամենահարուստ, որ և ի գանձարանի կայսրութեան Ռուսաց ունէր մինչև միլիոնս ռուբլեայ, և ի քաղաքացն Պարսից մինչև ի քաղաքս Սիբիրիոյ և Եւրոպայ ձգէր առևտուր»:[1] Նման տեղեկություններ հեղինակը հաղորդում է նաև մյուս գերդաստանի Թառումյանցների մասին: Թառումյանց եղբայրները Ռուսաց տերությունից կապալով վերցրել էին Կասպից ծովի ձկնորսությունը, նավագնացությունը, Բաքվի նավթահանքերը: Այդպիսի ձեռնարկությամբ նրանք անբավ հարստություն էին դիզել և զարմանալու աստիճան առատաձեռն էին մանավանդ ազգային ու հասարակական գործերում. «Առօրէական բաշխոյք ողորմութեանց տան այսմիկ առաւելոյք քան զռուբլիս 500»:[2]

Հայ առևտրական-վաճառականներն իրավունք ունեին նաև Ռուսաստանի տարածքով անցնել Եվրոպա, որտեղ «հայկական առևտրական կապիտալն աստիճանաբար իր ձեռքում էր կենտրոնացնում ոչ միայն Ռուսաստանի ներքին շրջանների, այլև Մերձավոր Արևելքի և մի շարք եվրոպական երկրների հետ կատարվող տարանցիկ առևտուրը»:[3] Այդ նշանակում էր, որ ռուսական կառավարությունը շարունակում էր խրախուսել հայ գործիչներին առևտրականներին. դեռևս 1812թ. Վրաստանի կառավարչապետ Մարկիզ Պաուլիչչինը, առաջարկում էր նրանց շնորհել Թիֆլիս քաղաքի մոքալաքի կամ քաղքենու, անգամ ազնվականի կոչում, որը մեծապես կնպաստեր Անդրկովկասյան առևտրի զարգացմանը.[4] և «... այդպիսի արտոնությունների միջոցով ինքն իրեն երևան կգան տեղի առևտրականների կապիտալները», առաջին հերթին հայ առևտրականների, «քանի որ այստեղ առևտրականությունն ընդհանրապես կազմված է համարյա մենակ հայերից»:[5]

1821թ. հոկտեմբերի 8-ի օրենքով, Անդրկովկասի համար տրվեց 10 տարվա ազատ առևտրի իրավունք Եվրոպայում, ըստ որի առևտրական սակագինը (տարիֆը) համեմատած Ռուսաստանի կենտրոնական նահանգների հետ, բավականին ցածր էր ու արտոնյալ: Կառավարությունը ելնելով իր շահերից, այդ օրենքով նպատակ էր հետապնդում նախ և առաջ ընդարձակել իր առևտրական ոլորտները Եվրոպայում և երկրորդ՝ այն շատ նպաստավոր ու շահագրգիռ էր, տեղի առևտրական դասի համար:[6] Դրանով Անդրկովկասի վաճառականները

---

[1] Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ.Թաղիոեանց Վ.Ա. սարկավագի սրբոյ էջմիածնի ի Հայս, հ. առաջին, Կալկաթա, 1847, էջ 287:
[2] Դ. Թաղիոեանց, նշվ. աշխ., էջ 290-291:
[3] Народы мира. Этнографические очерки народов Кавказа, Москва, 1962, т. 2, ст. 454-455.
[4] Ոշտունի Վ., նշվ. աշխ., էջ 207-208 /տես՝ АКАК, т.V, ст.17/:
[5] Նույն տեղում:
[6] Евецкий О., նշվ. աշխ., էջ 32:

ստանում էին դրամա-ապրանքաշրջանառության մեծ հնարավորություններ: Օգտվելով արտոնյալ առևտրի հիշյալ իրավունքից, հայ առևտրականները, ընդարձակելով իրենց գործունեության ոլորտները, հասան եվրոպական արդյունաբերական առաջնակարգ քաղաքների՝ Լեյպցիգի, Համբուրգի, Տրիեստի, Մարսելի, Փարիզի, Լոնդոնի տոնավաճառներին մասնակցելուն: Եվ չնայած բազմաթիվ դժվարություններին, նրանցից ոմանք հաղթահարելով արգելքները էլ ավելի ընդարձակեցին իրենց առևտրական գործունեությունը և տեր դարձան մեծ կապիտալների ու ունեցվածքի. նրանց մասնագիտական իմացությունները, համարձակությունը, ռիսկը մեծ մասամբ պսակվում էին հաջողությամբ:[1]

1831թ. հունվարի 3-ի մեկ այլ օրենքով,[2] Ռուսաստանի կառավարության, մինիստրների խորհրդի կողմից հաստատվեց առևտրի մասին հատուկ կանոնադրություն, որով թույլ էր տրվում Թիֆլիսում բացել «Առևտրական բաժնետիրական ընկերություն»՝ «Անդրկովկասի առևտրական դեպո» անունով և Մոսկովյան ֆաբրիկատերերի կողմից 1847 թ. Թիֆլիսում բացվեց դեպո (պահեստի իմաստով) և խանութ՝ ռուսական ապրանքների վաճառքի համար: Այն պարտավորվում էր Անդրկովկաս հասցնել ռուսական ապրանքները և հակառակը:[3] Դեպոյի ծառայություններին ակտիվորեն լծվեցին հայ առևտրականները, որպես փորձառու և գիտակ մասնագետներ: Արդեն 1830-ական թվականներին, ցարական պաշտոնական աղբյուրները վկայում էին, որ հայերն իրենց ձեռքում են կենտրոնացրել «Թիֆլիսի և ամբողջ Անդրկովկասի առևտուրը», իսկ 1840-50-ական թվականներին, Նիկոլայ 1-ին հղած իր գրություններում, փոխարքա Մ.Ս. Վորոնցովը շեշտում էր նույնը, թե հայերը առևտրի և հատկապես կապալների ու վարձակալությունների խնդրում գլխավոր ուժերն են:[4] Մեկ այլ առիթով նա գրում էր. «... հայերի մասին ասելիք չունեմ, նրանք մեզ (ռուս-ին) նվիրված են և միշտ պատրաստ՝ ծառայելու»:[5]

Արդյունագործության, առևտրի ոլորտներում Անդրկովկասի, բայց հատկապես վրացահայության ունեցած հաջողությունները և գրաված առաջնակարգ դիրքը զայրացնում էին վրացական տիրող դասակարգերի շատ ներկայացուցիչներին: Եվ նրանց ազնվականներից մեկը հետևյալ կերպ է հայտնում իր «զայրույթը, վրդովմունքը», ասելով. «Հայերին վրաց թագավորներն ու իշխանները իր

---

[1] Гагемейстер Ю., Закавказские очерки, СПБ, 1845, ст. 19.
[2] Евецкий О., նշվ. աշխ., էջ 32 :
[3] "Кавказ", Тифлис, 1847, N27, ст. 174.
[4] Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 267-268 /Տես՝ Обз. Российских влад. за Кавказом, ч. I, ст. 199.
[5] Иваненко В., նշվ. աշխ., էջ 349:

ժամանակին մարդասիրաբար ընդունեցին և հողեր հատկացրին, բայց նրանք երախտամոռ դուրս եկան, քանի որ թողեցին գյուղերը և դարձան քաղաքարնակներ: ... Իրենց ծեռքում կենտրոնացրին Թիֆլիսի, ինչպես նաև Կովկասի ու Անդրկովկասի ողջ արտադրական կյանքը և վաճառականությունը, որոնք եկամտաբեր են ... նրանք զավակներին կրթության են ուղարկում Ռուսաստանի ու Եվրոպայի բարձրագույն հաստատություններում ուսանելու, որոնք մեծ մասամբ ընտրում են ճանապարհաշինության ու հաղորդակցության, տեխնոլոգիայի, լեռնային արդյունաբերության, ինչպես նաև իրավաբանական, բժշկական ինստիտուտներն ու ֆակուլտետները, որոնք գործնական նշանակություն ունեն և իրենց ապահովում են եկամտաբեր աշխատանքներով ու պաշտոններով ... Կրթության են ձգտում նաև համեստ, անգամ չունևոր հայերը, որին հասնելու համար պատրաստ են դիմելու խնայողությունների ու զրկանքների: Իսկ մենք վրացի ազնվականներս, մեր կալվածքներում զբաղված ենք այգեգործությամբ ու գյուղատնտեսությամբ, ընդհանրապես քիչ ենք վաստակում և չենք կարողանում մեր նման պահանջները հոգալ»:[1] Այս պարզ ճշմարտության մեջ զգացվում է նաև զուսպ բարկություն, ափսոսանք, ինչու չէ, նաև՝ նախանձ:

Ինչպես արդեն նշել ենք, 19-րդ դարի սկզբից մինչև 30-ական թվականները, երբ լրիվ ավարտվեց Անդրկովկասի ռազմա-քաղաքական գրավումը, ռուսական պետության առաջ ծառացավ նաև այն տնտեսապես յուրացնելու խնդիրը, որպեսզի ավարտվեր երկրամասի լիակատար գաղութացման գործընթացը. «այլապես այս երկիրը կմնա Ռուսաստանի համար մի անպտուղ բեռ»:[2]

Նշված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ էր երկրամասի տարբեր բնագավառների մանրազնին ուսումնասիրությունը և հետազոտությունը, որպեսզի ըստ հնարավորության և շահեկանորեն կազմակերպվեր Անդրկովկասի յուրացումը: Ժամանակ առ ժամանակ այստեղ սկսեցին գործուղվել պալատական պաշտոնյաներ, մասնագետներ (ռազմավար աշխարհագետ-պատմաբաններ, տնտեսագետ-ֆինանսիստներ, երկրաբաններ, վիճակագիրներ և այլն): Այս կամ այն խնդրին անդրադառնալիս, նրանցից շատերը, կամա-ակամա առընչվում էին նաև ազգային հարցերին, ուսումնասիրում էին տեղաբնակների անցյալ ու ներկա պատմությունը, ծանոթանում նրանց մշակույթին, զբաղմունքներին, ազգագրությանը և այլ հարցերին: Գործուղված ուսումնասիրողներից նշանավոր էին Ի. Շոպենը, Ա. Ֆոն Հակստհաուզենը, Յու. Գագեմեյստերը, Օ. Եվեցկին, Վ. Իվանենկոն, Ե.Նաումենկոն և ուրիշներ, որոնք գործի բերումով այնքան խորացան հիշյալ

[1] Канадеев И., Очерки Закавказской жизни, т. I, СПБ, 1902, ст. 25.
[2] Ոշտունի Վ., նշվ. աշխ., էջ 208:

ոլորտներում, որ դարձան ճանաչված կովկասագետներ: Նրանց կատարած ուսումնասիրությունները և հրատարակած նյութերը, հոդվածներն ու աշխատությունները լրացրին ու հարստացրին կովկասագիտության պատմաաղբյուրագիտական ֆոնդը և գրականությունը: Նրանցից շատերը զբաղվել են նաև հայ ժողովրդին վերաբերվող հարցերով և տվել իրենց կարծիք-բնորոշումներն ու տպավորությունները. օրինակ այդ հեղինակներից մեկի մոտ կարդում ենք. «... վաղ ժամանակներից հայերի ընտանեկան և համայնական ամուր կառույցները հենվել են սիրված զբաղմունքների՝ հողագործության, առևտրի ու արհեստագործության, ինչպես նաև գիտության նկատմամբ մեծ սիրո և հարգանքի վրա»:[1] Մեկ այլ հետազոտողի մոտ. «Հայերն արժանի են էլ ավելի մանրամասն ուսումնասիրության, ցավոք, նրանք մինչև հիմա քիչ են բացահայտված. անվիճելի է, որ հայերը Անդրկովկասի ժողովուրդների մեջ առաջնակարգ տեղ են գրավում իրենց ընդունակություններով, գործունեությամբ և դեպի ուսումն ու լուսավորությունն ունեցած իրենց ձգտումներով ... հայերը մշտապես համարվել են Արևելքի գործարարները և աշխատողները... Ուշնոր, բանիմաց հայերը ձգտում են պաշտոնների պետական հիմնարկություններում ու վարչություններում, նրանք տիրապետում են տեղական և եվրոպական լեզուներին և անգուգական թարգմանիչներ են, սակայն (հեղինակի կարծիքով) նրանց զբաղմունքների արժանի ասպարեզը, որտեղ և նրանք միշտ փայլում են իրենց հատուկ ընդունակություններով, դրանք առևտուրն ու արդյունագործությունն են, որոնք շատ ձեռնտու են և իրենց, և երկրի ընդհանուր շահերին»:[2] Պատահական չէր, որ այս պաշտոնյաներից ոմանք, վերին ատյաններում միջամտում էին հայ խելացի ու տաղանդավոր պատանիների, երիտասարդների համար, պետության հաշվին կրթություն ստանալու՝ իրավունք ձեռք բերելու: 1843թ. նոյեմբերի 23-ի ցարին ուղղված խնդրագրով, բարոն Բենկենդորֆը հայազգի հինգ երիտասարդների համար միջնորդում էր թույլտվություն ստանալու Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտում և տերության այլ բարձրագույն հաստատություններում ուսանելու: Ցարը տվեց իր համաձայնությունը:[3] Այդ ուղղությամբ մեծ էր նաև Կովկասի փոխարքա Մ.Ս. Վորոնցովի լուման, նշանակալից թվով տեղացի երիտասարդների համար, պայմաններ էր ստեղծում Ռուսաստանում կրթություն ու դաստիարակություն ստանալու»:[4] Իհարկե, այս և նման, այսպես ասված, մեծահոգություններն ունեին

---

[1] Ф.Гакстгаузен А., նշվ. աշխ., էջ 209: Տես նաև՝ Гагемайстер Ю., о положении народов Кавказа, СПБ, 1838, ст. 12.
[2] Гагемайстер Ю., Закавказские очерки, СПБ, 1845, ст. 17, 20.
[3] ՀՀ ՊԿՊՍ, ֆ.57, ց. 1, գ.31, թ.27, տես նաև АКАК, т. IX, ст. 635.
[4] Иваненко В., նշվ. աշխ., էջ 349:

պետական հեռահար նպատակներ. սկզբնական շրջանում Կովկասի և Անդրկովկասի ղեկավար պաշտոնյաների նշանակման համար, տեղական կադրերը շատ անբավարար էին և ցարական կառավարության կողմից այստեղ էին գործուղվում, ինչպես այն ժամանակ ընդունված էր ասել, «դուրս գրված մարդիկ»:[1] Նշված ժամանակաշրջանում ռուս ազնվականության համար Կովկասում ապրելն և աշխատել-ծառայելը, անպատվաբեր ու անհարգի էր: Նրանք ովքեր համաձայնվում էին, անհաջողակ, ձախողված մարդիկ էին, որոնք բախտ ու դրամագլուխ էին փնտրում հեռուներում: Ցարը և կառավարող շրջանները շուտով հասկացան, որ Կովկասը Ռուսաստանին մերձեցնելու և քաղաքականապես ու տնտեսապես լրիվ նվաճելու՝ գաղութացնելու համար անհրաժեշտ էր ստեղծել պետական կառավարման ամուր, հուսալի լծակներ: «Անդրկովկասի կառավարման վարչության», հետագայում նաև «Կովկասի փոխարքայության» ստեղծումով և 1840-ական թվականներին նրանց կողմից կիրառվող, վերափոխիչ օրենքներով, լուրջ պայքար տարվեց իշխող բյուրոկրատիայի դեմ: Կովկասի փոխարքա Մ.Ս.Վորոնցովը (1845-1855) լինելով հմուտ, հեռատես մարդ, սկսեց կադրերը փոխարինել տեղաբնակ, բանիմաց, հեղինակավոր մարդկանցով. այսպես քաղաքացիական գծով Կովկասի փոխարքայի տեղակալ նշանակվեց հայազգի իշխան Վ.Օ. Բեյբությանը (մինչ այդ հայկական մարզի պետն էր), Թիֆլիսի նահանգապետ՝ վրաց իշխան Մալխաս Անդրոնիկովը և այլն: Ռուս աստիճանավորները և մասնագետները նշանակվում կամ հրավիրվում էին որոշակի պահանջի դեպքում:[2] Վերը նշված բարոն Բենկենդորֆի ցարին ուղղված գրության մեջ որոշակի ասված էր, որ հիշյալ հայ երիտասարդներին ուսման հարցում ընդառաջելը կունենա նաև այն դրական ազդեցությունը, որ երկրամասի քաղաքական, տնտեսական, ռազմական և պետական այլ հիմնարկների ու վարչությունների կառավարման գործընթացն աստիճանաբար կհամալրվի գիտակ, կարող մասնագետներով: Ավարտելուց հետո նրանք առնվազն վեց տարի պետք է աշխատեին Անդրկովկասում, ըստ պետական նշանակման:[3] Տեղական կադրերի ստեղծման գործը շարունակվեց նաև հետագայում. 1849թ. հունիսի 11-ի սահմանված կանոնադրությամբ,[4] ստեղծվեց «Կովկասյան թոշակների հիմնադրամը», որի միջոցների հաշվին կովկասաբնակ պատանի-երիտասարդները

---

[1] Евангулов Г. նշվ. աշխ., էջ 10:
[2] Նույնի, էջ 11-12:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 37, ց.1, գ.81, թ.28:
[4] Նույն տեղում:

կարող էին ուսումը շարունակել Ռուսաստանի բուհերում և հատուկ կրթօջախներում:

Սակայն այս հավասարակշռված ու բարյացակամ քաղաքականությունն ու վերաբերմունքը, ցավոք, չշարունակվեց. ցարիզմը ուժեղացրեց գաղութային իր քաղաքականությունը, որի անբաժան մասն էր կազմում այնտեղ ապրող ազգերի ու ազգությունների ռուսացման քաղաքականությունը: Եղած 30-ից ավել ժողովուրդներից, Կովկասում և հատկապես Անդրկովկասում, հայտնի էին վրացիները, հայերը և թաթարները, որոնք միասին կազմում էին երկրամասի ողջ բնակչության մոտ 70 %-ը (ըստ 1897թ. մարդահամարի, ստույգ 69,1 %-ը):[1] Ազգերի կենտրոնացումը մի պետության մեջ բնականորեն հանգեցնում էր նրանց տնտեսական, քաղաքական ու սոցիալական պայքարին, որոնց ի վերջո, գումարվում էր նաև ազգային ազատագրական պայքարը. այն արտահայտվում էր նաև սեփական կրոնի, լեզվի, գրականության, ազգային սովորությունների, մշակույթի, դպրոցների և այլնի պահպանման ձգտումներով, որոնք ընդունելի չէին տիրող պետության և նրա կառավարության համար:

Ազգային հարցի ժամանակի ուսումնասիրողներից Զ. Ավալովը գրում էր. «Կովկասի տեղաբնակներից ցարական կառավարության օրենքը պահանջում է. դուք՝ տարբեր ազգություններին պատկանող ժողովուրդներդ, որ ունեք առանձին լեզու ու կրոն, անցել եք մեծ տերության իշխանության տակ՝ ոմանք կամավոր, ոմանք պայքարով: Այժմ, նախ, ձեզանից պահանջվում է հավատարմություն Ռուսաստանին: Մոռացեք Ձեր անցյալը ... մի մտահոգվեք ձեր ապագայով, այժմ այն Ռուսաստանի հետ ընդհանուր պետք է լինի ... Աշխարհում ձեզ համար կա միայն մեկ իշխանություն՝ ռուսական ցարի կառավարությունը Պետերբուրգում և նրա ներկայացուցիչը Թիֆլիսում: Դուք ունե՞ք ձեր լեզուն, ազգային սովորությունները և այլ առանձնահատկություններ, շատ լավ, բայց դուք ամեն կերպ հաղորդակցվում եք ռուսական քաղաքակրթության և ռուս ժողովրդի քաղաքացիության հետ. ուրեմն դուք պետք է լինեք ռուսներ, կամ, առնվազն՝ նմանվեք նրանց ... Ուղղափառ հովվապետ մետրոպոլիտներից մեկը պետական դումայում ելույթ ունենալիս, նշել է, որ Ռուսաստանի պատմական խնդիրը նրանում է, որ «Ռուսականացվի ոչ ռուսականը և ուղղափառ դարձնել բոլոր ոչ ուղղափառներին»:[2] Այսպիսի մեծապետական շովինիստական ձգտումներով, մտածելաձևով ու վարվեցողությամբ էին տառապում Կովկաս գործուղված փոխարքաներից ու պաշտոնյաներից շատերը: Դրանց հիմքը դրվեց իշխան

---

[1] Кавказский календарь на 1905г. (перепись...1897г.), ст. 192.

[2] Авалов З., Национальный вопрос на Кавказе ("Русская мысль", СПБ,1911, N12).

Դոնդուկով Կորսակովից, շարունակվեց Ս.Ա. Շերեմետևի կողմից և ծայրահեղության հասավ իշխան Գոլիցինի ժամանակ: Նրանք տեղաբնակներին վերաբերվում էին արհամարհանքով: Նրանց դիտում էին որպես անասնական հոտի, որին նորմալ կյանքի պայմաններ, առավել ևս, ազատություն պետք չէ: Իսկ ազգաբնակչությունը ի պատասխան նշված վերաբերմունքին «ցարական կառավարության և նրա ներկայացուցիչների մեջ տեսնում էր միայն պետական գանձարանն իրենց բնակիչների հաշվին լցնելու և նման այլ կարիքները հոգացող վերահսկիչ կատարողների»:[1]

Իրադրությունն էլ ավելի սրվեց 1860-70-ական թվականների գյուղացիական ռեֆորմների իրականացման տարիներին: Ցարիզմը ձգտում էր թուլացնել տեղի ազնվականության (Վրաստանում) դիրքերը և ազդեցությունը, որով կիրականացվեր կիրառվող ռեֆորմների արագ ընթացքն Անդրկովկասում: Առաջատարները, կամ-ակամ, դարձյալ եղան հայերը, որոնք ընդգրկված չլինելով ֆեոդալական տնտեսական կառույցներում, հայտնվեցին ծեռնտու, շահեկան իրավիճակում: Լինելով քաղաքաբնակներ, նրանք հիմնեցին ոչ միայն արտադրա-առևտրական մեծ ու փոքր ձեռնարկություններ, դարձան նաև իր ժամանակի դեմոկրատական տրամադրությունների գաղափարակիրները. հանգամանքներ, որոնք էլ ավելի էին նպաստում հայերի մտավոր զարգացմանը և գործնական ակտիվացմանը: Հայերի այսպիսի առաջխաղացումը սկզբնական շրջանում, հովանավորում ու հանդուրժում էր ռուսական կառավարությունը, քանի դեռ այն ուղղված էր խոշոր հողատերերի դեմ, իսկ երբ հաջողությամբ ավարտվեց երկրամասի նշված ապաֆեոդալացման գործընթացը, հայերի հիշյալ դիրքն ու ազդեցությունն արդեն պետք չէր: Աստիճանաբար սրվում էին նրանց և պետական վարչարարների փոխհարաբերությունները: Բացի գործնական քայլերից, ցարիզմը նման դեպքերում գործի էր դնում ազգերի երկպառակտման իր քաղաքականությունը, պաշտպանելով ու սիրաշահելով (ըստ շահավետության ու հարմարավետության), «մերթ մեկին, մերթ մյուսին»[2], որի համար ցարն ուներ պարարտ հող հանձին երկրամասի հիշյալ երեք ժողովուրդների, առավել ևս հայերի ու թաթարների մոտ, որոնց մեջ դեռ հնուց, կար մեկը մյուսին չհանդուրժելու և նախանձելու հիմքեր ու առիթներ: Ինչպես արդեն նշել ենք Անդրկովկասի թաթարների, վրացիների և այլոց վերնախավերը պարբերաբար դժգոհությամբ էին լցվում հայազգի արդյունաբերողների ու վաճառականների նկատմամբ, չհանդուրժելով նրանց ձեռնարկատիրական

[1] Аракский И.Ф., В Закавказье, очерки, СПБ, 1910, ст. 95.
[2] "Жизнь Кавказа" (научн. эк. и общ. полит. журнал), СПБ, 1910, N3, ст. 1-2 (Кательников А. "К национальному вопросу на Кавказе").

գործունեությամբ զբաղվելու ձիրքն ու ընդունակությունները: Ռեֆորմների սլաքը, ինչպես նշել ենք, առաջին հերթին ուղղված էր վրաց ազնվականության դեմ, որոնք զրկվեցին իրենց ծորտ գյուղացիներից և ազնվականի կոչումներից: Շատերը ստիպված քաշվեցին իրենց կալվածքները և զբաղվեցին այգեգործությամբ և գյուղատնտեսությամբ՝ ընդհանրապես: Իսկ թաթարները մեծ մասամբ քոչվոր անասնապահներ և պետական ու կալվածատիրական գյուղացիներ էին: Կային նաև քաղաքաբնակներ, որոնց թիվը անհամեմատ քիչ էր: Ստացվեց այնպես, որ հայերը կազմեցին երկրամասի քաղաքաբնակների գերակշիռ հատվածը: Դեռևս 1830-ական թվականներին Թիֆլիսի բնակչության մեծամասնությունը կազմում էր հայությունը: 1834 թ. ընտանեկան ցուցակներով Թիֆլիսում կար 4936 ընտանիք, որոնցում եղած արական սեռի բնակիչների թիվը կազմում էր 11581 մարդ, որից 1947-ը՝ վրացի, 9447-ը՝ հայ և 187-ը՝ թաթար:[1] Այն ժամանակվա պաշտոնական վիճակագրության մեջ իգական սեռին վերաբերվող տվյալները չէին գրանցվում: Իսկ Վրաստանի հայոց եկեղեցական թեմի հաղորդած տվյալներով, Թիֆլիսում գործող հայկական 22 եկեղեցիները ծառայում էին 16807 (9447 արական և 7360 իգական[2]) հավատացյալների:[3]

1865-1866թթ. Թիֆլիսում կար 5966 ծուխ՝ 33433 արական և 26652 իգական սեռի. ընդամենը՝ 60085 մարդ, որից հայեր՝ 30000, վրացի՝ 14000, ռուս՝ 12000, թաթար՝ 1500, լեհ՝ 1000, գերմանացի՝ 1000 և այլն:[4]

Հետագա տարիներին, նույնպես, այդ թվերն աճում էին հօգուտ հայերի: Բացի երկու խոշոր կենտրոններից (Թիֆլիս, Բաքու) երկրամասի մեծ ու փոքր քաղաքները նույնպես աչքի էին ընկնում հայազգի արդյունաբերողներով, արհեստավորներով ու բանվորական հոծ խմբերով. «Անդրկովկասի համարյա բոլոր արհեստավորները հայեր են, դա նկատվում է անգամ այնպիսի վայրում, որի բնակչությունն այլազգի է»:[5] Մեկ այլ վկայություն ևս. «վրացիների մոտ երբեք չի եղել, այսպես կոչված, երրորդ դասը (վաճառականներ և արհեստավորներ). այն հիմնականում կազմված է եղել հայերից ոչ միայն Թիֆլիսում, այլ նաև Վրաստանի մյուս քաղաքներում»[6]

1863թ. Թիֆլիսի համքարություններում կենտրոնացած էր 1156 վարպետ, 334 ենթավարպետ (1500 հոգի), իսկ 171 արհեստավորներ ազատ արտադրողներ էին:[7]

---

[1] Обозрение..., ч.I, ст.117, 195.
[2] Իգական սեռի մասի տվյալները տալիս էին հայոց եկեղեցական թեմերը:
[3] Նույնի, էջ 188:
[4] "Кавказ", 1865, N16 и 1866, N1, ст. 75.
[5] Канадеев И., Նշվ. աշխ., էջ 23:
[6] Братская помощь...ст. 661("Положение армян в Грузинском царстве").
[7] Сборник статистических сведений о Кавказе, т. I, Тифлис, 1869, ст. 89.

1861 թ. գյուղացիական ռեֆորմի իրականացման արդյունքում, Թիֆլիսում աշխուժացավ նաև ֆաբրիկա-գործարանային արտադրությունը: Նույն՝ 1863 թ. այստեղ արդեն գործում էին ստվարաթղթի, չուգունի ծուլման, կահույքի, բամբակի մշակման, ծխախոտի ... թվով 17 տեսակի՝ 133 ֆաբրիկա ու գործարան՝ 505000 ռ.[1] տարեկան ընդհանուր գումարով, որոնց տերերը, չնչին բացառությամբ, հայեր էին: 19-րդ դ. վերջում այստեղ գործող համքարությունների թիվը հասնում էր 54-ի, որոնցում ընդգրկված էին 2163 վարպետ, 3291 ենթավարպետ և 1610 աշակերտ, ընդամենը 7064, որոնց գերակշիռ մասը հայ էին. նշված համքարությունների 54 ուստաբաշիներից (համքարության գլխավոր վարպետ) 40-ը՝ հայազգի էին:[2] Նույնը կատարվում էր Բաքվում. բացի խոշոր հայ նավթարդյունաբերողներից, այստեղ մեծ թիվ էին կազմում սնագործ հայ բանվորները, որոնք մեծ մասամբ Ղարաբաղից ու Գանձակից եկած պանդուխտ գյուղացիներ էին, կենսամիջոցներ վաստակելու ձգտումով: 19-րդ դ. վերջում Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող 23436 բանվորներից 6600-ը հայ էր,[3] իսկ 20-րդ դ. սկզբին այն համարյա կրկնապատկվել էր 11267, որը կազմում էր նավթագործ բանվորների ընդհանուր թվի 48726-ի, 24,2%-ը:[4]

Այդ ժամանակ Բաքվում կար 2000 ծուխ հայ, 3502 արական և 3835 իգական սեռի մարդ (հայ) մշտաբնակներ, բացի դրանից կային թվով 3000 պանդուխտներ, որոնք աշխատում էին նավթահորերում և այլուր: Այստեղ կար հայկական եկեղեցի և նորաշեն եռահարկ ուսումնարան:[5]

XIXդ. տարբեր տասնամյակներում՝ Անդրկովկասի տարբեր վայրերում հայ ազգաբնակչության չմարող աճը կատարվում էր հայկական բնօրրանների՝ հատկապես Երևանի, Ելիզավետպոլի նահանգների ու հարակից շրջանների հայ բնակչության հաշվին:

Երկրամասի ֆաբրիկա-գործարանային ու հանք-հանույթային արտադրության կենտրոններ էին ձգվում ոչ միայն գործարար ու բանվոր աշխատուժերը, այլ նաև մտավորականությունը: Ձևավորվում էին ամփոփ հայկական, ինչպես նաև՝ այլազգիների հետ խառնված, բազմաթիվ բնակավայրեր: Նշված իրավիճակում և կապիտալիստական նոր հարաբերությունների ձևավորման ու զարգացման պայմաններում «Տնտեսական հարցերը քննվում էին ամբողջ Անդրկովկասի տնտեսական զարգացումը աչքի առջև ունենալով. հայ բնակչության ցրվածությունը

[1] Նույնի, էջ 90:
[2] Кавказский календарь на 1902г., Тифлис, 1901, ст. 684-685.
[3] "Жизнь Кавказа", 1910, N3, ст. 2.
[4] Пожитков К. Очерки по истории бакинской нефтедобывающей промышленности, Москва, 1940, ст. 141.
[5] Բարխուտարեանց. Աղուանից երկիրը և դրացիք. էջ 153:

Անդրկովկասով մեկ, հայկական բուրժուազիայի կապիտալի կուտակումները տարածաշրջանի խոշոր կենտրոններում, անդրկովկասյան ժողովուրդների միասնական զարգացման հեռանկարները պայմանավորում էին նման հարցադրումը»:[1]

Թիֆլիս, Բաքու քաղաքները դարձան նաև հայ մշակույթի անդրկովկասյան նշանավոր կենտրոնները, ուր լույս էին տեսնում հայալեզու բազմաթիվ պարբերականներ, գրքեր, բացվում էին հայկական դպրոցներ և մշակույթի այլ կենտրոններ: Այս բոլորի կողքին մեծ թիվ էր կազմում գյուղացիությունը. «Անդրկովկասի հայ, թաթար ու վրացի ազգաբնակչության 85-90%-ը կազմում է գյուղացիական դասը հայ հողագործ գյուղացիները շնորհիվ իրենց աշխատասիրության և գործնականության, ավելի լավ են ապրում, քան թաթար գյուղացիները. նշված գծերով հայերը կտրուկ տարբերվում են մուսուլմաններից, դրա համար վերջիններս չարությամբ ու նախանձով են լցվում հայերի նկատմամբ և պատեհ առիթը բաց չեն թողնում հայերին թալանելու, կողոպտելու, սպանելու համար ... և հայերի ու մահմեդականների միջև եղած տնտեսական, կրոնական տարբերություններն ու անհամաձայնությունները, վերջին 25-30 տարվա ընթացքում էլ ավելի բարդացան և տեղի տվեցին մահմեդական բնակչության ֆանատիզմի բռնկմանը»:[2] Այս և այլ ազգամիջյան անտագոնիստական երևույթներ շատ տեղին ու հմտորեն օգտագործվում էին ցարիզմի կողմից, վարելով երկդիմի քաղաքականություն՝ մերթ հայերին դիտելով որպես հուսալի հենարանի, իսկ պահանջված դեպքում՝ անհանգիստ ու վտանգավոր տարրերի. վերջինի դեպքում մուսուլմանները հայտարարվում էին որպես «հավատարիմ հպատակներ» և այլն: Գրականության և մամուլի էջերում տպագրվում էին հակահայկական հոդվածներ, աշխատություններ, օրինակ. «... իր զարգացմամբ Անդրկովկասը հայտնվել է տնտեսական շատ անբարենպաստ պայմաններում, քանի որ երկրամասի արտադրող օբյեկտների շահագործումը կատարվում է հայերի միջոցով, իրենց ձեռքում կենտրոնացնելով համարյա ողջ առևտուրը, այժմ ձգտում են տիրանալ քաղաքական կյանքին, գրավել վարչական կարևորագույն պաշտոններ, որոնցում, ի միջի այլոց, հազիվ թե կարելի է նրանց վստահել, որ նրանք պահանջված չափով կծառայեն Ռուսաստանի ազգային շահերին: (Այդ ժամանակ արդեն մոռացել էին 1840թ. գեն. Ռտիշչևի այն կարծիքը՝ թե «հայերը Կովկասի միակ ազգությունն է, որ իրոք հավատարիմ է Ռուսաստանին»)[3] Այժմ հայերի ձեռքին է

---

[1] Գևորգյան Լ.,Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը», Երևան, 1996, էջ 86-87: Տես՝ «Մշալ», 1874, N7 (Գր.Արծրունի, «Տնտեսական հույսեր»՝ առաջնորդող հոդվածը):

[2] Науменко Е., նշվ. աշխ., էջ 312:

[3] Братская помощь, էջ 568 :

կենտրոնացել կապիտալ բոլոր միջոցները, որոնք ծեռք են բերվել զուտ ինտենդանտությամբ (համբարակապետությամբ) հումքի մատակարարումների և կապալների միջոցով: Գործերի այսպիսի ընթացքը օգտակար չէ Անդրկովկասի, և մյուս կողմից, ռուսական առևտրա-արդյունաբերական աշխարհի համար»[1], կամ մեկ այլ տեղ. « ...հայերի մոտ զարգացել է ծածկամտությունն ու խորամանկությունը, ձգտումը նյութական ապահով կյանքի, որը դարձել է նրա գոյության հիմնական միջոցը»:[2]

Մեծ ջանք էր թափվում ազգամիջյան, հատկապես հայ-թաթարական հակազդեցություն առաջացնելու նպատակով. այսպես օրինակ, 1890-ական թվականներին սունի մահմեդականների որոշ խմբեր (կրոնական մղումներից դրդված) գաղթեցին Թուրքիա, նաև՝ Ելիզավետպոլի նահանգից. ռուս չարամիտ չինովնիկների կողմից այդ բացատրվեց այն փաստով, որ դա հրահրված ու կազմակերպված էր հայերի ջանքերով, որպեսզի Ելիսավետպոլի նահանգում նրանց փոխարեն հաստատվեն 1894թ. Սասունի ապստամբության հետևանքով, Թուրքիայից հալածված ու գաղթած հայերը:[3] Կամ՝ «Քանի որ Ելիզավետպոլի նահանգի առևտրականների, կուլակների, վաշխառուների գործադրած միջոցների պատճառով մուսուլման (անբան, ծույլ) բնակչության պարտքերը հասնում էին մեծ չափերի և այլն, որից և, էլ ավելի շատացան նրանց (մուսուլմանների) չարագործությունները ընդդեմ հայերի»:[4] Վաշխառությունը ոչ թե ազգային, այլ սոցիալական երևույթ էր, կապված իշխող կացութաձևի տնտեսական, հարկային քաղաքականության և նման այլ հանգամանքների հետ: Դժգոհ էին բոլոր ազգերի գյուղացիները, հատկապես կախյալները. օրինակ, Ղարաբաղի Բանազուր գյուղի հայ ընտանիքների գրավոր բողոք-խնդրագրի (ուղղված կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն, 29/5-1849 թ.) մեջ ասված է. «Ղարաբաղի Ջաֆար կուլի աղան, որի իշխանության տակ ենք գտնվում մենք, ինչպես ստրուկներ, մեզ հետ վարվում է անտանելի դաժանությամբ, մեզ ենթարկելով մարմնական տանջանքների ու հարկման անտանելի չափերի, որից մենք զրկվում ենք մեր ունեցվածքից և հասնում ծայրահեղ աղքատության»: Այնտեղ նշված էր նաև հիշյալ աղայի կիրառած՝ կրոնական, բարոյական և այլ, անմարդկային հալածանքներն ու նվաստացումները...:[5] Այսպիսի օրինակները բազմաթիվ են...: Վաշխառուների դասի մեջ կային հայեր, վրացիներ, թաթարներ և այլն: «Հարստահարողը ամեն

---

[1] Закавказье в торговом отношении, Москва, 1884, ст. 2, 32.
[2] Сборник статистических сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880, ст. 241.
[3] Науменко Е., նշվ. աշխ., էջ 313:
[4] Նույն տեղում:
[5] Մատենադարան, Կարողիկոսական դիվան, թղթ. 145, վավ. 210 ա,բ:

տեղ ատելի է, որ ազգության և պատկանի նա»:[1] Ցավոք երբ պետք էր լինում նշված ժողովուրդներին իրար դեմ հանել, հղվում էր միայն հայերի այդպիսին լինելը. «...թուրք տարրի հայ բուրժուա դասակարգից կեղեքված ու հարստահարված լինելով է բացատրում թուրքերի ատելությունն ընդդեմ հայերի, աչք փակելով այն երևույթի առաջ, թե ինչպես բեկերից ու աղալարներից կեղեքված, հարստահարված թուրք գյուղացին հարձակվում, կողոպտում, սպանում էր իրեն պես հարստահարված հայ գյուղացուն, հրդեհում, ոչնչացնում նրա գույքը»:[2] Այդ բախումներով շահագրգռված պաշտոնյաները և ազգայնամոլ անձիք, չէին ուզում հաշվի նստել գիտականորեն ապացուցված այն փաստի հետ, որ «...Վաշխառությունն Անդրկովկասում ընդունեց բազմաթիվ ինքնատիպ ձևեր՝ դրամական, միրավության, կուլակության և այլն. պարտքերի դիմաց գրավ էր դրվում գյուղացու ստացվելիք բերքը, հողը, անասունը, ինչպես նաև նրա անձը, որպես աշխատուժ. այս բոլորը գյուղացուն հասցնում էին ծայրահեղ աղքատության»:[3] Փաստորեն նշվածը շահագործող և շահագործվող դասակարգերի, դասերի գոյության և նրանց փոխկապակցվածության, համընդհանուր իրավիճակն էր. հիշյալ չարաշահումներին ենթակա էր Անդրկովկասի բնակչության 85-90%-ը, ողջ գյուղացիական դասը:

Ազգային խտրականության հակահայկական քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում: 19-րդ դարի վերջում տեղի ունեցած տնտեսական ճգնաժամերը, նարոդնիկական ու մարքսիստական գաղափարախոսության տարածման ու նրանց ազդեցության տակ սկսված ժողովրդական հուզումներն ու շարժումները մեղմացնելու և ճնշելու համար, բացի պայքարի բացահայտ միջոցներից, ցարիզմը գործի էր դնում ազգերին միմյանց դեմ հանելու իր գրգռիչ քաղաքականությունը: Թիրախը նորից հայերն էին: Այն սկսվել էր դեռևս 1870-ական թվականներից: «Ցարիզմի շովինիստական ազգային քաղաքականությունն ավելի ռեակցիոն բնույթ ընդունեց 1880-ական թվականների սկզբներին... Ղեկավարվելով կառավարության մարտնչող նացիոնալիզմով, կովկասյան բարձրաստիճան պաշտոնյաներն ամեն կերպ ձգտում էին տնտեսապես նեղել, խանգարել հայ բնակչության ազգային համախմբմանը»:[4] Այն բացահայտ արտահայտվեց մշակույթի ասպարեզում: 1880-ականներին փակվեցին հայկական մի շարք

---

[1] «Մշակ», 1874, N41, էջ 2:
[2] Ա-Դօ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում /1905-1906թթ./, Երևան, 1907, էջ 6:
[3] Свод материалов по изучению ЭБГКЗК, т. V, Тифлис, 1888, ч. III, ст. 1-2 (Кучаев М.Н. "Ростовщичество в среде крестьянского населения").
[4] Համբարյան Ա. Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (XIX դ. II կես- XX դ. սկ.), Երևան, 1983, էջ 14-15:

բարեգործական, հրատարակչական հիմնարկություններ, դպրոցներ.[1] այդ հալածանքներն ու բռնությունները էլ ավելի խորացան 20-րդ դ. սկզբին... եղածին գումարվեց թաթարների, վրացիների հրահրված թշնամանքի նոր ալիքը հայերի նկատմամբ. «...մի հանգամանք՝ ցարական իշխանությունների անկարողությունը, որն ապրելով քաղաքական, տնտեսական ու ռազմական ճգնաժամ, ելքը գտնում է այդ ժողովուրդներին իրար դեմ հանելու մեջ, որպեսզի շեղի հասարակության ուշադրությունը»:[2] Լարվածությունն իր գագաթնակետին հասավ 1905-1906 թթ. հասցնելով ազգամիջյան՝ հատկապես հայ-թաթարական արյունալի բախումների...»[3], որից հատկապես տուժեց երկրամասի, այդ թվում նաև Ելիզավետպոլի նահանգի հայությունը:

Մոտավորապես այսպիսին էին հայ ազգի (հայության) դերն ու դրությունը Ռուսաստանում, հատկապես Անդրկովկասում, որի մի խոշոր հատվածը կազմում էր Ելիզավետպոլի նահանգը:

---

[1] Науменко Е. նշվ. աշխ., էջ 5:
[2] Ա-Դо, նշվ. աշխ., էջ 5:
[3] Նշվ. աշխատությունը, ուր մանրամասն տրված է այդ ընդհարումների մասին ականատեսի վկայությամբ:

# Ուտիներ

Տեղի հնագույն բնակիչներից էին նաև ուտիները կամ ուդիները: Դեռևս վաղ ժամանակներում. «...իբրև Հայկական լեռնաշխարհի բնակիչներ աղբյուրների մեջ հիշատակված են նաև մոսխեր, ուտիներ, պակտիներ և ուրիշ ցեղեր: Այս բազմազան ցեղերը, որոնց մեծագույն մասը հետագա դարերում ծուլվել էր արմենների հետ ... եղել են առանձին ժողովուրդներ՝ յուրաքանչյուրն իր սեփական լեզվով կամ բարբառով: Նրանք գտնվել են, ինչպես երևում է աղբյուրների վկայություններից, կուլտուրական ու սոցիալական զարգացման տարբեր աստիճանների վրա»:[1]

Ուտիքը եղել է Մեծ Հայքի թագավորության 15 աշխարհներից (նահանգ, Երկրամաս) մեկը: Մովսես Խորենացու վկայությամբ, նրանց սերունդները ծագել են «Սիսակի ցեղից՝ քաջ անվանի Առանից՝ սրա զավակներից են սերվել (նաև Գ.Ա) ուտեացիների ազգը»:[2]

«Ուտիք» կոչված նահանգից բացի, եղել է նաև «Ուտի» անունով բնակավայր, որը կազմել է Ուտիք աշխարհի 8-րդ գավառը, այն կոչվել է նաև «Ուտի-Առանձնակ», «Ուտի-Ռոստակ»՝ Պարտավ կենտրոնով և ահա այս գավառի անունով էլ ամբողջ նահանգը կոչվել է Ուտիք:[3] Նշված տեղանունները հնագույն ծագում ունեն, կապված նույնանուն ցեղի ազգության հետ:

Հնում Ուտիքը կոչվել է նաև «Գարգարացվոց աշխարհ». ստացվում է, որ այնտեղ հայերի հետ մեկտեղ բնակվում էին աղվանական տարբեր ցեղախմբեր (ուտիներ, գարգարներ և այլն):[4] Դրանք ժամանակի ընթացքում, ծուլվեցին հայերի մեջ և դադարեցին գոյություն ունենալուց, բացառություն էին կազմում ուտիները, որոնց մի մասը գոյատևեց մինչև 20-րդ դարը:[5]

Ուտիները հայերի հետ միասին, քրիստոնեություն ընդունեցին 4-րդ դ. սկզբին, մինչ այդ քրիստոնեության տարածման քարոզչությամբ իր առաքելական գործունեությունն էր ծավալել Եղիշե անունով նվիրյալը, որը նահատակվեց: Հետագայում նա ժողովրդի կողմից սրբացվեց և «նրա պատվին Նիջ, Վարդաշեն և

---

[1] Մանանդյան Հ. Երկեր Ա, (էննական տեսություն հայ ժողովրդի պատմության), Երևան, 1977,էջ 78:
[2] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, գիրք երկրորդ, գլ. Ը, էջ 113:
[3] Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 218, ծանոթ. թիվ 125:
[4] Акопян А., Алвания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, ст. 16, 26.
[5] Լեո, երկերի ժողովածու, հ.1, Երևան, 1966, էջ 161:

այլ գյուղերի նախկին, հնագույն տարածքներում կառուցվեցին վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, որոնց մնացորդները պահպանվել են ցայսօր»:[1]

Մ. Կաղանկատվացու վկայությամբ, երբ «Աղվանքի առաջին կաթողիկոս Գրիգորիսի նահատակությունից հետո, արևելյան կողմերի ժողովուրդները վերստին թաղվեցին դիցազար կռամոլության մեջ», Մեսրոպ Մաշտոցը Երուսաղեմից վերադառնալիս «Անցանելով ընդ Հայաստան՝ ճանապարհորդէ հասանել ի սահմանս արևելից՝ ի գավառն Ուտիական... Եվ յայնժամ նորոգեալ զեկեղեցւոց հաստատ զհաւատս: Եւ ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհեն Ուտիացւոց և Աղուանոն, և Լփինս, և ի Կասպս, և մինչև ի դուռն Չորայ[2]...»:[3] Մաշտոցն այստեղ զբաղվել է նաև դպրության, գրականության ստեղծման ու տարածման խնդիրներով: Հայ մատենագիրների վկայությամբ, այն գրվել է աղվանական բազմաթիվ (26) ցեղերից մեկի՝ գարգարացիների համար, որը, սակայն, չի պահպանվել. «... և չկարողացավ դառնալ ընդհանրական մյուս բոլորի համար, որպեսզի իրավունք ունենար դառնալ ամբողջ երկրի ձևն ու կաղապարը ... Հետևապես Աղվանքում չստեղծվեց նաև տեղական սեփական գրականություն և անդրկուրյան քրիստոնեական թեմերը ընդգրկված լինելով հայոց եկեղեցու մի թևի՝ Աղվանից (հետագայում՝ Գանձասարի) կաթողիկոսության ոլորտի մեջ, եկեղեցում ու դպրոցում գործ ունեին հայոց լեզվի հետ»:[4] Ի սկզբանե՝ 5-րդ դարից իվեր, ուտիները օգտագործել են Մեսրոպյան հայոց այբուբենը. խոսել իրենց լեզվաբարբառով, այնպես ինչպես Արցախի, Լոռու, Սյունիքի, Գուգարքի, Ջավախքի և հայաբնակ այլ վայրերի հայությունը, որոնց պաշտոնական լեզուն (հատկապես գրավոր) եղել և մնում էին հայոց գրաբար և աշխարհաբար լեզուները: Եվ պատահական չէր, որ Ելիսավետպոլի «Նուխի գավառի ուտի հայերը խոսում են ինքնատիպ հայերենով, որը, սակայն, նման չէ հայերենին և ոչ էլ կովկասյան որևէ լեզվախմբի: Ուտիները գրավոր լեզու չունեն, գրում են հայերեն, խոսակցականն իրենց լեզվով»:[5] ՀՀ արխիվում պահպանված է ուտերեն երգարանը,[6] որն իր մեջ պարունակում է 27 երգ-բանաստեղծություն, մի էջի վրա գրված է հայատառ ուտերեն տեքստը, իսկ հանդիպակած էջում հայերեն թարգմանությունը: Հեղինակը տեղաբնակ քահանա Մկրտիչ Մելիք-Վարդազարյանցն է. նա գրում է. «Ես բնիկ ուտեցվոց երկրէն եմ. եկեղեցական քարոզչությունը, խոստովանությունը,

---

[1] МИЭБГКЗК, г. VI , ч. II, ст. 4.
[2] Չոր կամ Չող-մասքութների Արշակունի թագավորության մայրաքաղաքն էր... (Տես Մ Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, Ծանոթ. 67, 68, էջ 277):
[3] Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի. Երևան, 1983, հ.1, գլ. ԺԷ, էջ 95:
[4] Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 95, 107:
[5] МИЭБГКЗК, т.VI, ч. I, ст. 4.
[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.1, գ.193, թ. 4-25:

պսակադրությունը, խրատները և այլ արարողություններ Վարդաշենի իմ ծխականների համար, կատարում եմ ուտերեն լեզվով՝ մայրենի հայերենից թարգմանված»:[1] Այս երգարանի ստեղծման շարժառիթը հետևյալն էր. Սիլիկյանների ուտական հայտնի գերդաստանից Ալեքսանդր Սիլիկյանի ավագ որդին՝ Հայրապետը, Պետերբուրգում ուսանելիս, հայերեն գրված նամակով (15/1-1877թ.) դիմում էր. «Գթառատ հայր իմ... ես իմ մանկությունից պարապել եմ հայկական մայրենի լեզվով ... իսկ ուտերենը մաքուր չեմ տիրապետում ... խնդրում եմ ինձ ուղարկել այդ լեզվով (ուտերեն) երգեր ու բանաստեղծություններ, եթե, իհարկե, կան»:[2] Նկատելի է այն, որ երգարանի հեղինակը և ուսանողը միմյանցից անկախ գրել են «հայկական մայրենի լեզվով» միտք-արտահայտությունը, որը և գալիս է հաստատելու, որ նրանք իրենց հայ էին զգում ու անվանում. կրում էին հայկական անուններ և ազգանուններ: Մակար Եպիսկոպոս Բարխուտարիանցն, ժամանակակցի (XIX դ.) աչքով ու մտքով, տվել է ուտիների իր բնութագիրը. « ... հարկ է հայտնել, որ հայկական են իւրեանց ծագման աւանդութիւնն, դիմագծերն, սովորութիւններն և ամենայն ինչ, որոց շատերն բացի իւրեանց լեզուից գիտեն և հայերէն»:[3] Եվ չնայած ռուս ուսումնասիրողներից ոմանք նրանց դասում էին լեզգիների ցեղախմբերի մեջ, իսկ ոմանք էլ՝ հին աղվանների նոր սերունդներ, սակայն, ելնելով իրավիճակից գրում էին. «այժմ ուտիները հիմնականում խոսում են հայերեն և իրենց հայ են ճանաչում, մոռացել են իրենց ծագումը»:[4]

1893թ. Վարդաշենի քահանա Սիմոն Բեժանյանի նախաձեռնությամբ «Աստվածաշունչ»-ը հայերենից թարգմանվեց ուտերեն, դարձյալ՝ հայատառ: Նա օգնեց իր եղբորը՝ Միքայել Բեժանյանին, հավաքելու, ի մի բերելու ուտիական ժողովրդական երգերը, հեքիաթները, ասացվածքները և ազգագարական այլ նյութեր, ինչպես նաև օգնեց նրան, ուտիերեն բառարանի կազմելուն:[5]

Ուտի ազգախմբի ծագման, ազգային պատկանելիության, լեզվի և այլ հարցեր բազմիցս հետաքրքրել են հայ, ռուս, եվրոպացի և այլ գիտնականներին, որոնք համապատասխան հոդվածներով ու կարծիքներով հանդես են եկել 1814, 1842, 1863, 1895 թվերին. մինչ իսկ 1842թ. գրվեց աղվանական լեզվի քերականության մասին՝ «Начальные основания граматики на афганском языке» /Писаные армянскими буквами/:[6] 1903թ. Ա.Մ.Դիրի հեղինակությամբ լույս տեսավ

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.1, գ.193, թ. 1-4:
[2] Նույնի, թ. 26:
[3] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 12:
[4] Науменко Е.,նշվ. աշխ., էջ 310-311 :
[5] СМОМПК, вып. XXX, ч. I, Тифлис, 1902, ст.1.
[6] СМОМПК, вып. XXXIII, ч. IV, Тифлис, 1903, ст.1-2.

«Грамматика удинского языка»[1] ռուսերեն լեզվով աշխատությունը: Առաջաբանում հեղինակն իր երախտագիտությունն ու շնորհակալությունն էր հայտնում Վարդաշենի բնակիչներ՝ Սողոմոնյանցին, Մնացականյանցին և այլոց, այս դժվարին գործում նրանց ցուցաբերած սրտացավության, ուտերեն լեզվի իմացության՝ գիտական աջակցության համար և այլն:[2] Սակայն այս ջանքերը ուշացած էին, որովհետև ուտիները համարյա ձուլվել էին տեղի ժողովուրդներին, մեծ մասամբ՝ հայերի մեջ և շուտով դադարեցին գոյություն ունենալուց...

Այժմ անդրադառնանք 19-րդ դ. ուտի ազգաբնակչությանը վերաբերող ժողովրդագրության և այլ նյութերին: Ելիսավետպոլի մարզում, հետագայում նաև նույնանուն նահանգում, ուտիները բնակվում էին Նուխի գավառի Վարդաշեն, Նիջ կամ Նիժ բնակավայրերում, որոնք միմյանցից հեռու էին մոտ 40 կմ-ով: Ուտիները վաղ ժամանակներից իվեր միշտ իրենց հայ են անվանել և պատահական չէ, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի (19-րդ դար) սկզբնաղբյուրներից մեկում կարդում ենք հետևյալը. «Նուխի գավառի երկրորդ մարդաշատ ազգությունը հայությունն է. հայերն այստեղ իրենց լեզվով, սովորություններով, կենցաղով ու պատմական ճակատագրով միատարր չեն, հատկապես իրենց ուտիներ անվանող հայերի խումբը»:[3]

Վարդաշենը մեծ բնակավայր էր. այն բաղկացած էր Վարդաշեն և Կշլայս Վարդաշեն գյուղերից, ուր ապրում էին ուտիներ, հայեր, թաթարներ, հրեաներ և ուրիշներ: Ուտիները մոտիկից առնչվելով նշված ազգություններին, խոսում էին նաև նրանց լեզուներով, որից և բուն ուտերենը համեմվում էր այդ լեզվախմբերի բառերով, դարձվածքներով, ասույթներով, կրում էր նրանց մշակույթների, կենցաղի ու սովորությունների ազդեցությունները, շատ ավելի հակված էր հայերին: Եվ չնայած դրան, ուտիների մի մասն ընդունեց ուղղափառություն. «1820թ. 117 ընտանիք ևս ընդունած են յունադաւանութիւն: Այժմ ուտիներից անխախտ մնացած են ի ծոց Հայաստանեայց Առաքելական եկեղեցու 12102 անհատ, որ բնակվում են Նիժ, Վարդաշեն, Սուլթան Նուխի գիւղաքաղաքներում» և նրանց շրջակա վայրերում, այդ թվում նաև «Գանձակի Սարով ու Կոզէն գիւղերում»:[4] Նրանց մեջ կային նաև մահմեդականներ: 19-րդ դ. սկզբներին «Դաղստանից Ղուրդաշէն է գալիս Հաճի-Չալապի անուն ոմն ... սկսում է գործ գնել բռնություններ ... Այս միջոցներով դարձնում է մահմետական կրօնին հայադաւան ... շուրջ 30 գիւղեր ... նաև ուտեցիներ: Թվով 15480 ծուխ բռնութեամբ դառնում են մահմետական:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] МИЭБГКЗК, т. VI, ч. I, ст. 1-2.
[4] Բարխուտարեանց Մ. Պատմութիւն Աղուանից, Ա հատ., Թիֆլիս, 1901, էջ 19:

Տակաւին մինչև ցայսօր այդ հայ մահմետականների մէջ լսվում են Կարապետ, Մարտիրոս, Գրիգոր, Հարութիւն, Խաչատուր «օղլիներ» (որդի, տղա), կամ «ուշաղ» (ընտանիք), հայկական անունները»[1], նշված վերջավորություններով: Չնայած գործադրված ճնշումներին ու հալածանքներին, ուտիների մեծ մասը հայադավան էին, հաճախում էին հայկական եկեղեցիներ, օգտվում՝ նրանց զանազան ծառայություններից: Հայկական դպրոցներում նրանց երեխաները ստանում էին հայեցի կրթություն ու դաստիարակություն: Նուխի գավառը հարուստ էր հայկական վանքերով, եկեղեցիներով, ուխտատեղիներով, որոնք մշտապես մեծ հենարան էին գավառի քրիստոնյա տարրի գոյության և հարատևման համար. նշանավոր էին տեղի Գիշ, Ջալետ, Վարդաշեն, Նիջ և այլ վայրերի սրբատեղիները, ուր այցելում էին բազմաթիվ հավատացյալներ:[2] Վարդաշեն գյուղի վերին մասում երևացող չինարի ծառի մասին պահպանվել է գեղեցիկ մի ավանդություն. այդ հսկա ծառի բունը 32 արշին տարածք էր զբաղեցնում. նախկինում երբ քրիստոնյաները հետապնդվում էին թաթար մահմեդականներից, սուրբ ավետարանը փրկելու համար այն թաղեցին հողի մեջ և որպեսզի տեղը չկորցնեն վրան չինարի մի ծյուղ տնկեցին: Հետագայում այն աճեց, մեծացավ և ժողովրդի կողմից սրբացավ: Այստեղ զոհեր էին մատուցում, շուրջը մոմ վառում, աղոթք անում: Խնամելիս, չորացած ծյուղերն ու տերևներն անգամ զգուշությամբ հավաքում և օգտագործում էին միայն մատաղը եփելիս:[3]

Ուտի բնակչությամբ հայտնի էր նաև Նիջ (Նիժ) գյուղը. բնակչության թվով (4554) այն գավառի Գարասու շրջանի, երկրորդ խոշոր բնակավայրն էր, որի բնակչության գերակշիռ մասը հայեր և ուտիներ էին, իսկ փոքրաթիվը՝ թաթարներ:

Ուտիները զբաղվում էին այգեգործությամբ, հողագործությամբ: Նրանք իրենց հարևաններից տարբերվում էին աշխատասիրությամբ և ստացված գյուղատնտեսական մթերքների արդյունքներով մշտապես առաջինն էին գավառում: Նրանք աչքի էին ընկնում նաև մտավոր զարգացմամբ, մաքուր ու գեղեցիկ կենցաղով: Օժտված լինելով բնատուր քաջությամբ ու համարձակությամբ, տրտնջալու փոխարեն նրանք հաջողությամբ պաշտպանվում էին հարևան քուրդ-թաթար ցեղերի ավազակային հարձակումներից: Պետք է նշել, որ տեղի ուտիների բարերար ազդեցությամբ, այստեղ բնակվող 70 ծուխ համագյուղացի թաթարները, մյուս շրջաններում ապրող թաթարների համեմատությամբ, նախընտրելի և

---

[1] Նոյնի, Աղուանից երկիր եւ դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 291-292:
[2] МИЭБГКЗК,т. VI, ч. I, ст. 20.
[3] СМОМПК, вып. XIV, Тифлис, 1892, ст. 213-15 (Бежанов М., Краткие сведения о селе Варланси и его жителях).

ամենախաղաղներն էին:[1] Նիջ գյուղն աչքի էր ընկնում իր տեսքով. կառուցված տների մեծ մասը քարաշեն, բարեկարգ, կղմինդրե տանիքներով, արտաքնապես գեղեցիկ ձևավորված ու հարդարված բնակարաններ էին, որոնք շրջապատված էին փայտե կամ քարե պատնեշ-պարիսպներով: Կից այգիներում աճեցնում էին թթենիներ և մրգատու այլ ծառատեսակներ: Աշխատասիրության հետ մեկտեղ, նաև աչքաբաց, խելացի, գործարար մարդիկ էին. շատերն ունեին բավարար կապիտալ միջոցներ և հարյուրավոր դեսյատին ջրովի վարելահողեր, անասուններ: Գյուղում գործում էր 30 ջրաղաց և 24 բրնձի դինգ, որոնք ծառայում էին նաև շրջակա բնակավայրերին: Նիջը հաղորդակցության խճուղային ճանապարհով կապված էր շրջակա գավառների՝ Ջակաթալայի, Նուխիի, Արեշի հետ և հասնում էր մինչև Եվլախի երկաթուղային կայարանը: Իսկ սայլային մեկ այլ ուղին սկսվում էր Նուխի քաղաքից և ճյուղավորվելով մտնում էր Նիջ և հարևան Բադար, Վարդանլի բնակավայրերը:[2]

Ուտիներով բնակեցված էր նաև Ղազախ գավառի գյուղերից մեկը. «Կըռզէն գիւղ – հիմնուած է Կուր գետի աջ ափում ... բուն ուտեաց մնացորդներիցն են գիւղիս բնակիչներն, որք ունին և առանձին բարբառ, բայց գիտեն և հայերեն: Մօտ 700 տուն եղած է գիւղումս, բայց այսօր մնացած է միայն 30: Գիւղիս մօտ կա հին գիւղատեղի ու հանգստարան և աւերակ քարուկիր եկեղեցի: Հանգստարանի մէջ կա մինչև 600 տարուան տապանաքար: Արձանագրութիւններէ կերևի, որ այստեղ ամփոփուած են Թավրիզեցի, Հալէպցի, Կարնեցի և ուրիշ քաղաքներէ եկած վաճառականներ: Կան նաև գիւղիս իշխող Մելիք-Ջահանկիրի տապանաքարը և Աւետարան անուամբ ուխտատեղի մատուռ մը»:[3] Սա վկայում է այն մասին, որ Ուտիք-Գարդմանք պատմական տարածքը տնտեսապես զարգացած, առևտրական նշանավոր երկրամաս է եղել:

Կըռզեն գյուղի բնակչությունը գնալով նոսրանում էր. 1873թ. այնտեղ կար 29 ծուխ՝ 198 երկսեռ բնակչությամբ, իսկ 1885-1886 թթ.՝ 26 ծուխ, 132 մարդ:[4] Նուխի գավառում, ուր հիմնականում կենտրոնացած էին ուտիները, կար 1183 ծուխ, 3711 արական, 3402 իգական, ընդամենը 7113 մարդ. ուտիները կազմում էին Ելիսավետպոլի նահանգի ողջ բնակչության 1%-ը:[5] 1890 թ. տվյալներով 1237 ծուխ, 7301 (երկսեռ) մարդ:[6] Իսկ 1897թ. մարդահամարի ժամանակ, ուտիների տվյալները

---

[1] МИЭБГКЗК,т. VI, ч. I, ст. 4-5.
[2] Նույն տեղում:
[3] Բարխուտարեանց Ս., Արցախ, Թիֆլիս, 1895, էջ 59: Նաև՝ Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, Ս.Ղազար, 19031905թթ., էջ 393:
[4] МИЭБГКЗК,т. VI, ч. I, ст. 19-20.
[5] Свод статистических данных за 1886г., Тифлис, 1888, ст. XI.
[6] Նույնի, ... за 1890г., Тифлис, 1893, ст. VI.

հայերից առանձնացված չէին, քանի որ «...ուտիներն հայացել են և որպես ազգային առանձին խումբ աղյուսակում նրանց տվյալները չենք անջատում հայերից»:[1] Այսպես էին պատճառաբանում վիճակագրության պաշտոնյաները դեռևս 1880-1890-ական թվականներին:

Սիա այսպես էլ ուտիները վերացան պատմական թատերաբեմից, ավելի քան 20 դար գոյատևելուց հետո:

Ծագումով հայեր էին այրումները, որոնք պահպանվել էին նաև XIX դ. Պարսկաստանի Մակու, Խոյ, Սալմաստ, ու Արևելյան Հայաստանի Արագածոտն և Արևելից կողմանց՝ Գարդմանք-Ուտիք, գավառներում: Գանձակ գավառի լեռնակողմը, այնտեղ բնակվող այրումների շնորհիվ, մինչև XIX դ. սկզբները կոչվում էր «Այրումլու»[2], հետագայում նրա տարածքային ընդգրկումն սահմանափակվեց և էփրիկյանի վկայությամբ՝ «Այրում.-Երբեմն Ուտի նահանգի նոր գաւառներէն մին էր, իսկ այժմ այս անուամբ զանազան հասկացություններ կան Գանձակու նահանգի մեջ»:[3] Ուսումնասիրողներից ոմանք նրանց թուրքեր են համարել. «Թուրքեր են համարվում նաև բափառական այռումները, որոնք իրենց Ռումից (Բյուզանդիոնից) գաղթած են համարում և իրենց կոչումն էլ բացատրում են որպես ա՞յռում (է՛յ ուռում) կոչականից կազմված: Սրանք մահմեդական եւ, չիի աղանդին պատկանող, խոսում են Ատրպատականի բարբառով, մի առանձին արտասանությամբ ... Սրանք բնակվում են Ամիրվալ Աջի, Բիրգյոզ, Այքենդ, Դաստաֆուր, Դամջալի, Գյուեյ, Դամի, Ջազա-Դարասի, Դարաբուլախ և Դազախ էլչիլախ հասարակությունների մեջ»:[4] Հետագա հետազոտողները, հենվելով սկզբնաղբյուրների և ազգագրական առկա նյութերի վրա, եկան այն եզրակացության, որ նրանք նստակյաց, քրիստոնյա բնիկներ են եղել. նրանց բնակավայրերը շրջապատված էին հայկական եկեղեցիներով, ուր նրանք հաճախում էին, բացակայում էին մզկիթները: Նրանց բոնի ուժով էին մահմեդականացրել և իրենք իրենց անվանում էին «գլիջ մուսուլմանի», այսինքն սրի ուժով մահմեդականացված,[5] և մոլեռանդ հավատացյալներ չէին. «... Նույնիսկ ամբողջ գաւառամասում աղօթարան չունեն, երբ ես այս առթիվ նրանց նկատողութիւն էի անում, նրանք ինձ պատասխանում էին.- Սրի ուժով մահմեդական դարձած ժողովրդից ի՞նչ աղօթատուն, ի՞նչ աղօթք պետք է պահանջել»: Այրումների

---

[1] Свод материалов... т.I, ст. 21.
[2] Այժմյան Նոյեմբերյանի շրջանում կա «Այրում» անունով բնակավայր և երկաթուղային կայարան:
[3] Էփրիկյան Ս., նշվ. բառարանը, հ. 1, էջ 164:
[4] Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 329:
[5] Այս և այլ տեղեկություններ, փաստեր և եզրահանգումներ, տես «Գարդմանք»ամսաթերթի 1996թ. N3, էջ 5-ում: Կարապետյան Ս., Հայության օտարված մասնիկը, Այրումներ, նաև՝ Վարդանեան Յ., Մի քանի խօսք այրումների մասին, «Մշակ», 1914, N154, էջ 1-2: Каракашлы, Об айрумах, "Известия общества обследования и изучения Азербайджана", N8, Баку, 1929, ст. 29, 42.

հայկական ծագման մասին վկայում են նրանց մոտ պահպանված հայկական ազգանունները և անունները (Ղազար օղլի, Յաղուբ օղլի) և հայերեն բազմաթիվ բառեր՝ հանդ, հաւալիք (աւ. ելուկ), հախչիս (աղջիկ) ... և «այրում ոչ թէ կընշանակէ «այ յոյն», այլ «հայ յոյն», եւ այդ խօսքը ուղղակի «հայ-րում» խօսքի աղաւաղումն է»:[1] Այս ազգախումբը, գոյություն է ունեցել ողջ XIX դարի ընթացքում և հետո: Մահմեդականացումից հետո նրանց համարել են թուրքեր և վիճակագրական նրանց տվյալներն էլ միշտ տրվել են թուրք-թաթարների հետ միասին:

[1] Նույն տեղում:

## Մահմեդական էթնիկ տարրերի մուտքը այս տարածաշրջան

Միջնադարյան պատմական գրականության մեջ ահ ու սարսափ սփռող, վաչկատուն, քոչվոր ցեղերը հիշատակվել են սելջուկներ, մոնղոլներ, թաթարներ, թուրքեր, ղազախներ, ղպչաղներ, կոմուքներ և այլ անվանումներով. օրինակ՝ նույն Չելեբին վկայում է, որ տեղի «ռայաները (գյուղացիները) հայ, զեռք, դուլաք, թուրքմեն, մոնղոլ և կոմուք ցեղերից են»:[1] Տարբեր ժամանակահատվածներում Անդրկովկաս, այդ թվում նաև Հայաստան կատարած արշավանքներից հետո, նշված ցեղերի ստվար զանգվածներ հաստատվում էին երկրամասի տարբեր վայրերում և հիմք դնում իրենց իշխանությանը: «... ցեղերի ավագանին իրենց ձեռքը կենտրոնացնելով ցեղի հիմնական հարստությունը՝ անասունները, ձգտում էին նոր հողերի զավթմանը ու դրանց վրա ապրող այլ ժողովուրդների նվաճմանը՝ տարբեր եկամուտներ ստանալու ակնկալությամբ»:[2]

XVIII-XIX դարում հայ մելիքությունների միջև ծագած խռովություններից օգտվեցին թուրք-թաթարական ցեղապետերը. «...Մի մարդ, որ աչք էր դրել Ղարաբաղի վրա, ... դա թափառական մի թուրք ցեղից դուրս եկած Փանահ խանն էր, որն իրեն ծագած էր համարում Չինգիզ խանի տոհմից: Թափառելով երկրամասի մի շարք վայրերով, ի վերջո հաստատվում է Կուր գետի աջ ափի Ջիվանշիր վայրում»,[3] ուր գալիս էին նաև յուրայինները. Պարսկաստանի Խորասան նահանգից այստեղ տեղափոխեց «սարուջալլի» կոչված իր ցեղակիցներին: Մեկ այլ՝ քաբիրլի կոչված ցեղի ցեղապետի աղջկա հետ ամուսնացավ. նման միջոցներով, նա իր շուրջն էր համախմբում թափառող բազմաթիվ այլ ցեղեր ու տոհմախմբավորումներ: Դրանցից կազմված զինված ջոկատներով նա զբաղվում էր ավազակությամբ, տեր դառնալով մեծ հարստությունների: Այդ ուժերը հետագայում նա ուղղեց ընդդեմ հայ մելիքների. «ՈՍԳ (1754) թուին Փանահ ճրո - խանն մեծ զօրքով յարձակեցաւ Խաչենի Ուլու-Պապ բերդի վերայ ... ջնջել Ջալալեան հարուստ Մելիքութիւնը և հիմնել մի ճրո-մելիքութիւն այդ գաւառում»:[4] 1752-54թթ., նրա ջանքերով կառուցվեց Շուշիի բերդը, որը «... դառնում է Փանահ խանի համար մի անխորտակելի զենք՝ մի մեծ իշխանություն նվաճելու համար»:[5] Ի վերջո

---

[1] Չելեբի Է..., նշվ. աշխ., էջ 89:
[2] Ермеев Л., Этногенез турок, Москва, 1971, ст. 129.
[3] Լեո, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 754:
[4] Գաղտնիք Ղարաբաղի, էջ 70-72:
[5] Լեո, նշվ. աշխ., էջ 88, տես Шопен И., Исторический памятник состояния Армянской области..., СПБ, 1852, ст. 651.

Փանահն իր հետնորդներով դարձավ Ղարաբաղի խանը: Դարասկզբին տեղի ունեցած ռուս-պարսկական (1804-1813թթ.) պատերազմներից հետո, չնայած Գանձակի, Ղարաբաղի խանություններն անցան Ռուսաստանի տիրապետության տակ, բայց մինչ այդ, Փանահի ու նրա հաջորդների ջանքերով, նշված տարածքներն արդեն լցվել էին բազմաթիվ հիշյալ նոր ցեղախմբերով: Նույնպիսի միջոցներով բնակեցվում էին նաև Անդրկովկասի այլ վայրեր. «Թե որքան բազմաթիվ էին թափառական ցեղերը, ցույց է տալիս այն, որ միայն Երևանի ու Նախիջևանի խանությունների մեջ գոյություն ունեին 24 թուրքական հորջորջումներ...»:[1] Եվ պատահական չէր, որ նրանց ընդհանուր թիվն Անդրկովկասում 1830-ական թվականներին հասնում էր 304500 մարդու:[2] 10 տարի անց, 1840-ականներին 675000-ի[3], ավելի քան կրկնապատկվել էր:

Սկզբնական շրջանում թուրք-թաթարական ցեղախմբերը ղեկավարվում էին իրենց տոհմական համայնքների կողմից, որոնք ժամանակի ընթացքում ձուլվեցին միմյանց և մոռանալով իրենց տոհմական ծագումը, իսլամի միավորող ամենահզոր ուժի ազդեցությամբ, սկսեցին իրենց անվանել մահմեդականներ. դա ուներ ոչ միայն հավատքի, այլ նաև՝ որպես ազգային պատկանելիության հավաքական նշանակություն: Տոհմական նախկին բնակավայրերի անուններով սկսեցին կոչել զավթած տարածքների իրենց նոր բնակավայրերը: Օրինակ, Զանգեզուրի գավառում հայտնի էին նման Բահալի, Բարկյուշադ, Հիզիլի, Դարգիլի, Բուշանլի, Խոջ-Մուսախլի, ինչպես նաև Ղազախի գավառում՝ Բայաթլի (այդպես կոչված ցեղախմբի անունով, որոնց մի մասն էլ ամրացել էր Կուշչի-Այրում, Պոլեդ-Այրում գյուղերում) բնակավայրերը: Թուրքական ծագում ունեցող կարա-կոյունլի և կարախանլի ցեղախմբերն այստեղ հայտնվեցին 15-րդ դարում և նույնանուն գյուղերն էլ պահպանվել էին նաև 19-րդ դ.:

Պարսկական ծագում ունեցող բնակիչներից էին թաթերը, թալիշները, որոնց մի մասը բնակվում էր Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուր գավառի հարավում Լեկվազի և Նյուվադի գյուղական համայնքներում, ինչպես նաև Ղազախի Թաթի ու Կադիր գյուղերում,[4] «ներկա ժամանակում, թաթերի մի մասը բնակվում է Բաքվի գավառում. նրանք ապրում են նաև Դերբենդի մոտակայքում, հյուսիսային պարսկաստանում, ուր նրանց անվանում էին նաև «տաճիկ»-ներ»:[5]

---

[1] Նույն տեղում:
[2] Евецкий О., Статистическое описание Закавказского края, СПБ, 1835, ст. 32.
[3] Гагемейстер Ю., Закавказские очерки, СПБ, 1845, ст. 12.
[4] МИЭБГКЗК, т. IV, Тифлис, 1884, ч. I, ст. 19.
[5] Загурский Л., նշվ. աշխ., էջ 15:

Անդրկովկասի արևելյան շրջաններում կային նաև թաթախոս հայեր, այդ մասին պատմական տեղեկություններ կան միջնադարից սկսած: Իսկ XVIII դ. նրանցով բնակեցված էր հիշյալ երկրամասի Դուբա, Մուշկուր, Դերբենտ բնակավայրերի՝ 10 –ից ավելի գյուղեր, որոնցից ամենամեծը Մադրասանն էր: Այն հիմնադրվել էր XIV դարում՝ Ապշերոնում: XIX դ. նրանք շարունակում էին բնակվել նույն Մադրասայում, ինչպես նաև Քիլվար, Խաչմաս գյուղերում: Նրանց զգալի մասը մահմեդական էր:[1]

1870թ. տվյալներով ողջ Անդրկովկասում կար 124000 թաթ և 50000 թալիշ, վերջիններս հիմնականում ապրում էին Բաքվի նահանգի Լենքորան գավառում:[2] Ելիզավետպոլի նահանգի Ղազախ և Ելիզավետպոլ գավառներում հայտնի էր «թարաքյամա» կոչված թաթարական մեկ այլ տոհմաճյուղ, որն իրենց իսկ մեկնաբանությամբ, նշանակում էր «կոպիտ, վայրի թաթար»: Ըստ Լեոյի՝ «թարաքյամա»-ն թուրքմեն անվան արաբական հոգնակի ձևն է, որ նշանակում է «թուրքմեններ», որոնք «14-15-րդ դարերից, Միջին Ասիայից ներթափանցեցին Ադրբեջանի ու Հայաստանի տարածք: Դրանք վաչկատուն, խաշնարած, թափառական ցեղեր էին, որոնք հայտնի էին այդ (թարաքյամա) ընդհանուր անունով»:[3] Նուխի գավառում թաթարները հայտնի էին «մուղալամ» անունով, Ջևանշիրում՝ «թուրքմեններ» և այլն:

Թուրք-թաթարների բնակեցումից իվեր, գործածության մեջ մտան աշխարհագրական և բնակավայրերի նոր անուններ. տեղական լեզուներով, հատկապես հայերենով, դարերով հայտնի պատմական անունների կողքին և նրանց փոխարեն հայտնվեցին նորերը: Հայաբնակ վայրերում դրանք օգտագործվում էին երկու լեզվով. ինչպես վկայում է ճանապարհորդ Հակստհաուզենը. «Թիֆլիսից Էրիվան ուղևորության ողջ ճանապարհին եղած՝ ու մեզ հանդիպած գյուղերն ունեին երկու անուն՝ թաթարական և հայկական»:[4] Այդպես էր նաև Ելիսավետպոլի նահանգում և այլուր. նախ մինչև «Ելիզավետպոլ» կոչվելը, հայկական Գանձակը, խանների ժամանակներից կոչվում էր Գյանջա, իսկ խանությունը՝ Գյանջայի:

---

[1] Շնայած նշվածին, XX դ. ընթացքում կատարված հակահայկական հալածանքներն ու բռնությունները տարածվեցին նաև այս գյուղերի բնակիչների վրա... Խաչմասը գոյատևեց մինչև 1918թ...իսկ Մադրասա, Քիլվար գյուղերը պահպանվեցին նաև խորհրդային տարիներին՝ Ադրբեջանի կազմում. 1988-89 թթ. Ղարաբաղյան շարժման ընթացքում, հալածվեցին նաև նրանք...Այժմ թաթախոս հայերի զգալի մասը տարածված է հյուսիսային Կովկասում, իսկ մի փոքր հատվածը՝ Հայաստանի Արագածոտնի մարզի Ղարևան կամ Նոր Մադրասա գյուղում: Տես Հակոբյան Ա., «Թաթախոս հայեր» ատենախոսության սեղմագիրը, Երևան, 2002թ., էջ 13-15:

[2] Список населенных мест Бакинской губернии (Кавказ, стст. комитет), Тифлис, 1870, ст.89 (общий свод о губернии).

[3] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, (Հայոց պատմություն, հ. III,, գիրք I), Երևան, 1969, էջ 89, 485, ծանոթագրություն նո. 22:

[4] Фон Гакстгаузен А., Закавказский край, СПБ, 1857, ст. 154.

Արցախ, Ուտիք հայկական նահանգները միասին, սկսած 14-րդ դարից, կոչվեց Ղարաբաղ.[1] «Այս նահանգը զանազան դարերու մեջ փոփոխություններ կրելով, հայերեն կոչվել է Գարգառ, Արցախ, Փոքր Սյունիք, Խաչենք, Սևավ այգի, իսկ պարսկերեն և տաճկերեն՝ Գարապաղ»:[2] Արցախ-Ղարաբաղի բնակավայրերը տարբեր ժամանակներում, տարբեր անուններ են կրել, որոնք ըստ Ղ. Ալիշանի այսպիսիք էին.

*Արցախի գավառների հին, միջին և նոր անունները*[3]

| | Հին գավառներ | Միջին | Նոր | Բնակավայրեր |
|---|---|---|---|---|
| ա | Կողթ | Տանձիք | Այրում | - |
| բ | Բերդաձոր | Բերձոր, Ադախ | Այրում | - |
| գ | Վայլկունիք[4] | Ծար, Հանդաբերդ | Ջանգեզուր | Վայկունիք,Ծար Ականա /ականա/ Հանդաբերդ |
| դ | Սիսական ոստան | Սիսանաձոր | Չլաբերդ | Սիսական, Դայնախ |
| ե | Քուստի Փառնես | Փառիսոս,Ջավե | Գյուլիստան | Փառիսոս,Ջևա |
| զ | Մեծկողմանք | Խաչեն /վերին/ Ճառաբերդ | Չլաբերդ | Գյուլիստան, Ջարաբերդ Մեծկողմանք |
| է | Մեծիրանք | Խաչեն /ստորին/ Ճառաբերդ | Գյուլիստան Չլաբերդ | Մեծիրանք Խաչեն Կսապատ |
| ը | Սյուս Հաբանդ | Ամարաս, Խաչեն | Չլաբերդ, Շուշի | Ամարաս, Ասկերան |
| թ | Պարզկանք | Խաչեն | Ջլաբերդ | Շուշա |
| ժ | Մուխանք | Խաչեն | - | - |
| ժա | Հարճլանք | – | - | - |
| ժբ | Պիանք | Դիզա Վարանդին | Վարանդին | Դիզակ /Տուզախ/ |
| ժգ | Քոտակ | - | - | Վարանդին |

[1] Ղարաբաղ տեղանվան մասին առաջին անգամ վկայում է վրացական «Քարթլիս ցխովրեբա» սկզբնաղբյուրի 13-14-րդ դդ. ընկած՝ 100 տարվա դեպքերի մասին հատվածում: Խոսելով վրաց իշխանների ապստամբության մասին... հայտնվում է, որ Ուլու խանը «...եկավ, հասավ իր ամառանոցային կայան Ալատաղը, հետո մեկնեց ձմռան բնակատեղի, որին արդ Դարաբաղ ու Մուղան են կոչում: /Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 50-59/: Հայկական աղբյուրներից առաջինը Թովմա Մեծոփեցու մոտ ենք հանդիպում «Ղարաբաղ» տեղանվանը»: Թ. Մեծոփեցի, «Պատմութիւն Լանկ Թեմուրայ և հաջորդաց իւրոյ», Պարիս. 1860, էջ 20:

[2] Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ.1, Վենետիկ., ս.Ղազար, 1903, էջ 339:

[3] Ղևոնդ Ալիշան, Արցախ, էջ 14:

[4] Վայկունիք կամ Վայունիկ գավառի անվան ծագման մասին վկայում է պատմահայր Մ.Խորենացին: Նա նշում է նաև ժամանակը՝ «Փրկչի /Քրիստոսի/ ծննդից 40 տարի առաջ, երբ Տիգրանն ու Արտավազդը կռվում էին արտաքին թշնամիների պաղեստինցիների դեմ, «Վայկուն» անունով մի ավազակ խռովություն է բարձրացնում Հայաստանում, գրվում է «Ամուր» կոչված լեռը... այժմ այդ ավազակի անունով այն կոչվում է Վայկունք...» /Տես Մ. Խորենացի, «Պատմություն հայոց», Երևան 1968, էջ 148:

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանի կարծիքով, այստեղ եղած «բաղ» ցեղի, ինչպես նաև Սյունիքի Բաղք ու Բաղաբերդ բնակավայրեր անուններից է առաջացել «Ղարաբաղ» բառ - անվանումը:[1] Նման փոփոխություններ կրեցին նաև այլ տեղանուններ (Գետաշենը՝ Չայքենդ, Գարդմանքը՝ Ղազախ և այլն): Տեղաբնիկ ազգերի ու ժողովուրդների լեզուները նույնպես կրեցին որոշ ազդեցություններ: Վաղուց արդեն շրջանառության մեջ էին մտել «խան», «բեկ» (կալվածատերեր), աղա (պարոն) և այլ անվանումներ ու կոչումներ: Գործածական էին դարձել «մելիք» կամ «մալիք», «մահտեսի», «մուղդուսի» արաբական բառերը, տերմինները. դրանցից առաջին երկուսը, բառացիորեն թարգմանվում և նշանակում էին «տեր», «տիրող»: Պարսկական տիրապետության ժամանակ, իր հպատակ խանություններում (Ղարաբաղի, Գյանջայի, Շաքիի և այլն) այդպիսի կոչումներ էին շնորհվում այն հայերին, որոնք ունեին մուլք՝ կալվածք, և նրանց անուն, ազգանունների սկզբում կամ վերջում դրվում էր «մելիք», «բեկ» բառերը: Օրինակ, Մելիք-Շահնազարյան, Ղահրաման բեկ և այլն: Այն քրիստոնյա հավատացյալները, որոնք ուխտագնացության էին մեկնել Երուսաղեմ, նրանց ազգանվան սկզբին ավելանում էր «մահտեսի» և «մուղդուսի» բառերը, առաջինը (մահտեսի) նշանակում էր, որ տվյալ ասնը Երուսաղեմում տեսել է մահը՝ Փրկչի գերեզմանը, իսկ «մուղդուսի»՝ արաբերեն «մուղադաս» բառից, նշանակում էր մաքուր, մեղքերից մաքրված:[2] «Խան», «բեգ», «մելիք» բառերը նշանակում էին նաև կոչումներ ու անվանի լինելու հոմանիշներ, օրինակ՝ հայ իշխանները, գյուղատերերը Ղարաբաղում և այլ վայրերում կոչվում էին մելիքներ: Նրանք իշխում էին մեծ կալվածքների և գտնվելով Պարսկաստանի գերիշխանության տակ, օժտված էին միրբոլուքների (մահալների՝ մարզերի կառավարիչներ) համար սահմանված իրավունքներով և նրանց իշխանությունը ժառանգաբար փոխանցվում էր հորից՝ որդուն: Ի տարբերություն նշված այս մելիքների, կային նաև գյուղական փոքր մելիքներ, որոնք հիշեցնում էին մահմեդական գյուղերի աղալարներին. «նրանք իրենց պաշտոնավարության համար ռոճիկ չէին ստանում, ապրում էին սովորական եկամուտներով՝ գյուղացիներից հավաքած բերքերով»:[3] Ժամանակի ընթացքում նրանք դարձան իշխողներ, տեր դառնալով մեծ կալվածքների, իսկ ցարական կառավարության նոր վարչակարգում նրանք վերածվեցին գյուղապետի և ոստիկանի պաշտոնակատարների, որոնք պիտի հետևեին իրենց վստահված գյուղերի կարգ ու կանոնին՝ վարել տեղական դատական գործերը, հավաքել պետական հարկերն

---

[1] Ղափանցյան Գր., Историко-лингвистические значения топографии древней Армении, Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ, հ. 14, Եր.,1940, էջ 380-381:
[2] МИЭБГКЗК, т. IV,ч. I, ст. 124.
[3] Լեո, նշվ. ժողովածու, հ. 3, էջ 90:

ու տուրքերը: Նշված ծառայությունների դիմաց նրանք ստանում էին իրենց բաժինը գանձված հարկերից. օգտվում՝ տվյալ գյուղի բնակիչների մատուցած բազմապիսի ծառայություններից, շատ անգամ չարաշահելով իրենց վստահված դիրքն ու պաշտոնը: Ռուս բարձրաստիճան պաշտոնյաներ Քութաիսովը և Մեչնիկովը Անդրկովկաս գործուղված ժամանակ, զարմացած էին մնացել տեղի գյուղացիներից գանձվող հարկերի ու տուրքերի չափերից և հատկապես, հողատեր կալվածատերերին, նրանց մատուցած՝ դաշտային, տնային, շինարարության և այլ ու այլ տեսակի բազմապիսի, աշխատանքների համար:[1] Կառավարությանը ներկայացրած իրենց հաշվետվության մեջ նրանք նշել էին, որ «մահմեդական ուղեմասերում ոչ մի օրենք չի գործում»:[2] Նույնպիսի առաքելությամբ այստեղ եկած Բ. Գանին, իշխան Բեհբությանը Ղարաբաղում ներկայացրել էր բեկերին ու աղալարներին վճարելու, պահելու միջոցների հետ և Հանը ռուսական կառավարությանն ուղղված իր զեկուցագրում հայտնել էր. «Մեծ խախտումների, անկարգությունների, ինչպես նաև տեղի ազգաբնակչության աղքատացման պատճառ է այն, որ գյուղացիները նրանց բեգերին ու խաներին վճարել ու հատուցել են կրկնակի, եռակի շատ, քան պետությանը»:[3]

Իսկ Իվանենկոն եզրակացնում էր, որ հիշյալ աղալարները և մելիքները փաստացի լիիրավ կալվածատերեր էին և ռուս ճորտատերերից տարբերվում էին նրանով, որ իրավունք չունեին վաճառելու իրենց ենթակա գյուղացիներին ու նրանց հողերը:[4]

---

[1] АКАК, т. VIII, Тифлис, 1880, ст. 53, N 11.
[2] Նույնը, т. VII, Тифлис, 1880, ст. 61-62.
[3] Науменко Е., նշվ. աշխ., էջ 338:
[4] Иваненко В., նշվ. աշխ., էջ 119:

# Քրդեր

Ելիզավետպոլի մահմեդական ազգաբնակչության երկրորդ խոշոր հատվածը կազմում էին քրդերը: 19-րդ դ. նրանք ընդհանրապես տարածված էին Մերձավոր Արևելքի երկրներում, ինչպես նաև Անդրկովկասում:

XIX դարի պաշտոնական, հեղինակավոր հրատարակություններից մեկում կարդում ենք. «Քրդերի պատմական անցյալը թաքնված է դարերի խորքի մթության մեջ. նրանք ոչ պատմություն ունեն, ոչ գրականություն: Պահպանված բանավոր կցկտուր ավանդությունները շատ աննշան են նրանց պատմական ճակատագրի մասին հիմնական եզրակացությունների հանգելու համար»:[1]

19-րդ դ. ընթացքում Անդրկովկասում հայտնի էին քրդական մի շարք ցեղախմբեր: Արարատյան լեռների շրջակայքում հայտնի էր «բուրկի» կամ «բրուկցիներ» ցեղը, իսկ Պարսկաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում՝ ջալալիները, որն իր թվաքանակով ամենամեծն էր: Սուրմալու գավառում նրանք կոչվում էին եզիդիներ, Կարսում՝ ջունունակներ և նմանակի ցեղախմբեր (մամեկանլի, հեյդարանլի, գարդոշի և այլն) կային Թուրքիայում ու Պարսկաստանում. «Ղարաբաղի խանության մեջ կային ջվանշիր, քենգերլի, դիլազարդա, քոլանի և այլն»:[2] Մ.Բարխուդարյանցի վկայությամբ՝ նահանգի «...Ծար բերդն, որի մեջ այժմ բնակվում են ֆարիկյան ցեղից քուրդեր»:[3] Նահանգում նրանք հիմնականում կենտրոնացած էին Զանգեզուրի, քիչ քանակությամբ նաև՝ Ջհանշիր, Ջեբրաիլ գավառներում: Քրդական գյուղերի թիվը հասնում էր 113-ի, որից միայն 91-ը՝ Զանգեզուրի, 13-ը՝ Ջևանշիրի, 8-ը՝ Ջեբրաիլի, 1-ը՝ Արեշի գավառներում:[4] 1890-ական թվականներին, ստույգ 1897թ., կազմում էր 17545 երկսեռ մարդ (3042 քուրդ և 14503 եզիդի):[5] Սրանք, ինչպես նաև մահմեդական մյուս ցեղային խմբավորումներն աստիճանաբար կորցնում էին իրենց ցեղերին հատուկ բնորոշ գծերը և ամենակարևորը՝ լեզուն. նրանք համատարած հակվում էին թաթարերեն լեզվին և համարյա ձուլվել էին թաթար մեծամասնության մեջ. դրան շատ նպաստում էր նաև դավանած կրոնի՝ իսլամի, ընդհանրությունը: Օրինակ,

---

[1] СМОМПК, вып. XX, от I, ст . 65.
[2] Լեո, Նշվ. աշխ.,հ.3, էջ 89 /տողատակ/:
[3] Բարխուտարեանց Մ., Արցախ, Թիֆլիս, 1895, էջ 409:
[4] Свод статистических данных извлечения из поссемейных списков населения Кавказа, Елис-ая губ-я, Тифлис, 1888, ст. V.
[5] Մխիթար վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, Մայր Աթոռ Էջմիածին, 1906, էջ 117:

Ջևանշիրում նշված 13 գյուղերից միայն մեկն Ասրիկն էր, որի քրդերը խոսում էին քրդերեն: Նուխի և Արեշ գավառների քոչվոր զապուտլիները, թարաքյամաները և այլոք, որոնք ունեին իրենց լեզուն, սովորությունները և ցեղային առանձնահատկությունները, համարյա արդեն ձուլվել էին:[1]

Զանգեզուրի հայաբնակ գավառում քրդերի թվաքանակը մեծ էր կար 91 քրդաբնակ գյուղ, որոնք, մեղմ ասած, մեծ չարիք էին հայ բնակչության համար: Զբաղմունքով համատարած քոչվոր անասնապահներ էին, իրենց սննդի ու ապրուստի մյուս բոլոր միջոցները ձեռք էին բերում ավազակությամբ, գողությամբ, թալանով, որոնք հաճախ վերջանում էին ծեծկռտոցով ու սպանությամբ: «Քոչվորությամբ զբաղվող քրդերը շատ գինավարժ ու համարձակ են. ուժեղ ձևով արտահայտված հետաքրքրասիրությունը և ստախոսությունը, հատուկ է նրանց բոլորին. շատ հեշտությամբ սուտ երդում և վկայություն կտան ու կմատնեն»:[2] Նրանց այդ կարգի հատկությունները յուրաքանչյուրի մոտ միս ու արյուն էր դարձել, որոնք ձևավորվում էին դեռ մանկությունից: Այն երիտասարդ քուրդը, որը դեռ չէր «կոփվել» վերը նշված գործողությունների մեջ, չէր կարող կոչվել իր համայնքի արժանավոր, իսկական զավակը. ավելին, երիտասարդ քրդուհին երբեք նրան փեսացու չէր ընտրի: Եվ նա, որպեսզի չարժանանար յուրայինների և հատկապես իր ընտրյալի արհամարհանքին, դառնում էր հանցագործ... Քուրդ տղամարդն, անկախ իր նյութական վիճակից, պարտավոր էր ձեռք բերել տարբեր տեսակի զենքեր, ձիեր. նրանք իրենց երեխաներին փոքրուց վարժեցնում էին զենքեր կրելու, գործածելու, ձիավարության և այլն: Դա, նրա ծնողական առաջին պարտքն էր՝ որդուն: Սա վատ չէր, եթե այն ուղղված լիներ սեփական անձի կոփվածությանը և արտաքին զավթիչների, թշնամիների ոտնձգություններին, այլ ոչ թե իրենց խաղաղ աշխատանքով ու կյանքով ապրող հարևան քրիստոնյաների դեմ: Նույն միջոցներով ու մեթոդներով նրանք ապօրինաբար տիրանում էին ցանկացած հարևան գյուղերին. օրինակ, 19-րդ դ. սկզբներին, Զանգեզուրի գավառի սահմանային Խծաբերդ (Խոջաբյուրդ) բարեկեցիկ հայկական գյուղը, որն ուներ 600-700 ծուխ բնակչություն. նրանք քաջ ու անվախ մարդիկ էին, պահանջված դեպքում գինված պաշտպանվում էին: Ալիյանլու դրկից գյուղի քուրդ ցեղապետը մի շարք անգամներ հարձակվել, բայց պարտված հեռացել էր: Նպատակին հասնելու համար նա դիմեց իրենց համար սովորական դարձած՝ ստոր միջոցի, հյուրասիրության պատրվակով ճաշկերույթի հրավիրեց գյուղի երևելիներին և բոլորին թունավորեց: Նույնպիսի ստորությամբ հաշվեհարդար տեսավ գյուղի

[1] МИЭБГКЗК, т. VI, ч. I, ст. 19.
[2] Обозрение российских владений за Кавказом, ч. III, СПБ, 1842, ст. 278.

բնակչության հետ: Կրոնական տոներից մեկի ժամանակ, երբ հայ համայնքը գյուղի եկեղեցում հավաքվել էր քրիստոնեական ծեսի ու աղոթքի, քրդերի դավադիր զինված ամբոխը հարձակվեց անպաշտպան հայերի վրա: Սպանդը շարունակվեց երեք օր, Խցագետն արյունով լցվեց և այդ ժամանակից սկսած այն կոչվեց «Հարամ» (կեղտոտ) անունով: Գյուղը հայերից ամայացավ. ողջ մնացածները փախան Ղարաբաղ և այնտեղ հիմնեցին իրենց նոր՝ Քարինտակ գյուղը:[1]

19-րդ դ. 50-ական թվականներին Խծաբերդի հողերի 3/4-ը անցել էր Ղարադաղ հայկական գյուղին, որի բնակիչներն այստեղ էին գաղթել 1840 թվին Պարսկաստանից:[2] Քարինտակ գյուղը շատ աղքատիկ ու հողազուրկ էր և նախկին ապահով խծաբերդցիները մշտապես մնացին անապահով ու կարիքավոր, քանի որ նույն Ալիյանլու քրդական ու թաթարական Մուսմալլար գյուղերի մահմեդականները, դարձյալ զբաղված էին նրանց համեստ ունեցվածքի՝ անասունների, սենդի պաշարների, կենցաղային և այլ իրերի, հափշտակությամբ:

Ելիզավետպոլի նահանգի <u>թարաքյամա-թաթարները</u> հիմնականում կենտրոնացած էին Ղազախի գավառում: 1801-1805թ.թ., երբ Վրաստանի կազմում ձևավորվեց Ղազախ-Շամշադինի թաթարական ուղեմասը, նրա մահմեդական բնակիչները հայտնի էին «Ղազախ-Շամշադինյան թարաքյամաներ» անունով: 1870-ական թվականների տվյալներով Ղազախի գավառի 125 մահմեդական գյուղերից 78-ը[3] նրանց էր պատկանում: Նահանգի տարբեր գավառներում տարածված էին նաև փոքրաթիվ մահմեդական այլ ցեղեր ու ազգություններ, որոնք դարավերջի տվյալներով հետևյալներն էին. կյուրիններ 5050 մարդ, որոնք կազմում էին նահանգի մահմեդականների ընդհանուր թվի 0,6%, թաթեր՝ 3480 (0,4%), զապուտլիններ՝ 1805 (0,2%), պարսիկներ՝ 325 մարդ և այլն: Իսկ մեծ թիվ կազմող թաթար ադրբեջանցիները՝ 524550 և քրդերինը՝ 40990: Բոլորը միասին՝ 575587, որը կազմում է նահանգի ողջ բնակչության 62,2%:[4] Մահմեդական ազգաբնակչության խայտաբղետ, ստվար այս զանգվածը բաժանված էր կրոնական երեք ճյուղի՝ շիա, որի հետևորդների թիվը հավասար էր մոտ 309898-ի (մահմեդական հավատացյալների 33,8 %):[5] Սունի թևին հարում էին համարյա բոլոր քրդերը, ինչպես նաև Նուխի, Արեշ և Ելիզավետպոլ գավառների թաթար-թուրքերը, կյուրինները, զապուտլիններ, քոչվոր թարաքյամաները և լեռնաբնակ այրումցիները:

---

[1] СМОМПК, вып. XXV, от. II, ст. 101-102.
[2] Նույն տեղում, էջ 103:
[3] МИЭБГКЗК, т. II, Тифлис, 1884, ст. 2 (А.Д.Ерицов, экономический быт гос. крестьян Казахского уезда Елис-ой губ-ии.
[4] Первая всеобщая перепись Российской империи 1897г. (Елисаветпольская губерния), ст. VII.
[5] Науменко Е, նշվ. աշխ., էջ 300-301:

Վերջիններն իրենց համարում էին բյուզանդական ծագման ազգություններից մեկը, որը հետագայում ընդունել էր մահմեդականություն: Շիա ճյուղին հետևում էր թուրք-թաթար բնակչության մեծամասնությունը և առանձին ցեղախումբ ներկայացնող բոլոր թաթերը (իրանական ծագման). «Դա մի ազգություն է, որ այժմ ցրված է Անդրկովկասով մեկ, մինչև Դերբենդ քաղաքը: Նրանք այստեղ են հայտնվել դեռևս մ.թ. 4-րդ դարից, Սասանյան Պարսկաստանի հյուսիսային Կասպից ծովի ափերի գրավման համար, Շապուհ 2-րդի (309-381թթ.) կատարած արշավանքների ժամանակներից սկսած»:[1]

Աշխարհագրական դիրքով վերցրած՝ Կուր գետի ձախ ափում կենտրոնացել էին սյունիները, իսկ աջում՝ շիաները:

«Ալիալլախ» ուղղությունը մահմեդական կրոնական աղանդներից էր,[2] որին հետևողները բնակվում էին Զեբրաիլ գավառի 9 գյուղերում և ընդգրկված էին 3 համայնքների մեջ: Գյուղերից գլխավորներն էին՝ Դաշքեսան և Գորավլուն: Նրանց գլխավոր շեյխի նստավայրը Պարսկաստանի Արդաբիլ քաղաքն էր, որտեղից նրա խալֆաները (օգնական) ներթափանցում էին Անդրկովկաս: Դրանք տգետ, անպատկառ, համարձակ մարդիկ էին. խուսափում էին ռուսական իշխանություններից և շիա ու սյունի մահմեդական հոգևորականներից: Խալֆաներն անարգել մուտք էին գործում գյուղերն ու շեները, ոչ այնքան իրենց աղանդը տարածելու, քարոզելու և կրոնական նամազ ու այլ ծիսակատարություններ մատուցելու իրենց հոտին, որքան սեփական գրպանները լցնելու: Շրջելով տուն առ տուն, ուր նրանց ընդունում էին գրկաբաց, խալֆան օրհնում էր տվյալ տունն ու ունեցվածքը, որի փոխարեն տան տերերն իրենց շնորհակալությունն էին հայտնում նվիրատվություններով՝ դրամով, մթերքով և այլն: Բեռ չլինելու համար, բնամթերքը փողի էր վերածում, չունենալու դեպքում հավատացյալն իր համայնքից պարտք էր վերցնում, միայն թե գոհացներ նրան, իսկ խալֆան Պարսկաստան էր մեկնում դրամով լեցուն գրպաններով:

Մահմեդական շիաները և սյունիները խուսափում էին ալիալլախներից, նրանց հետ սեղան չէին նստում և մտերիմ, խնամիական կապերի մեջ չէին մտնում:[3] Բացի դրանից, նշված սյունի և շիա ուղղություններին պատկանող հավատացյալները,

---

[1] Свод статистических данных извлеченных из поссемейных списков населения Кавказа, Елис-ая губ-ия, ст IX.

[2] Ալին եղել է Մուհամեդի փեսան և չորրորդ խալիֆը /Մուհամեդից հետո/: Ալին և նրա կողմնակիցները նախկին խալիֆներին անօրեն, կեղծ խալիֆներ էին համարում, իսկ նրան երկրպագում ու պաշտում էին իր ազնվության ու օրինավորության համար: Ալիի մահից հետո նրա համախոհները աստվածացրին ու նրան իսկական ալլահ ճանաչեցին: Այս աղանդին հետևորդներն էլ կոչվեցին «ալիալլախներ»: /Այս և այլ մանրամասնություններ տես СМОМПК, вып. XVII, Тифлис, 1893, от. II, ст. 219-222/.

[3] Նույն տեղում, էջ 222:

նույնպես, միմյանց չէին հանդուրժում և այդ պայքարը հաճախ հանգեցնում էր արյունալի միջադեպերի: Դեռևս 13-րդ դարում, արաբ աշխարհագետ Կազվինը իր «Տիեզերագրություն» աշխատության մեջ նշում է. «Գյանջա քաղաքի դավադիր ու նենգ սունիները խստորեն հետևում են իրենց կրոնական ծեսերին ու օրենքներին, չեն հանդուրժում այլադավանններին ու աղանդավորներին, որպեսզի իրենց հավատը մնա անվնաս ու անաղարտ նրանց հիմնական զբաղմունքը ռազմատենչությունն է և անվերջ զբաղված են զինավարժությամբ, քանի որ նրանք ապրում են մահմեդական աշխարհի սահմանագծի վրա և Գյանջա քաղաքը մահմեդական աշխարհի կարևոր հենակետն է ընդդեմ գյավուրների»:[1]

Նշված երկու ուղղությունների միջև եղած անզիջում պայքարի մասին են վկայում 1721 թ. Շամախի քաղաքի վրա հարձակված լեզգի սունիների գործողությունները. «Շամախին շատ համեղ պատառ է ավարառուների համար ... սունի բնակիչները գիշերը բացեցին քաղաքի դռները: Կովկասցի լեռնականներն անխնա կոտորում էին ղզլբաշներին (պարսիկներին) ու շիաներին, որոնց արհամարական «ղաջար» էին անվանում: Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը գրում է, որ «շուկայում արյան գետ էր հոսում ... սունի լեզգիները, որ ատում էին շիաներին, բոլորին գլխատեցին: Հայերին շատ չէին վնասում, բայց նրանց զավակներից շատերին գերի տարան: Թալանեցին ողջ քաղաքի ոսկին ու հարստությունը»:[2] Լինում էր նաև հակառակը՝ շիաները սպանում էին սունիներին: Չնայած այս բոլորին, անկախ իրենց դավանած ուղղությանը, բոլոր մահմեդականներն իրենց նիստ ու կացով՝ կենցաղով, ծեսերով, հար և նման էին միմյանց և նրանցից շատերը ծանծրանալով չհասկացված այդ պայքարից, ընդունում էին մյուս դավանանքը, այդպես էլ չընմբռնելով դրանց միջև եղած (բայց իրականում չեղած) տարբերությունները: Իրարամերժ ճյուղերին պատկանող մահմեդականներն իրար հետ չէին ամուսնանում, իսկ եթե հանկարծ դա պատահեր, ապա ըստ սահմանված կարգի՝ ծնված տղա երեխան պետք է դավաներ հոր, իսկ աղջիկը՝ մոր, ուղղությունը:[3]

Նշված հարցերի պատասխանները չէին կարող տալ քարոզիչ մոլլաները. դրա փոխարեն իրենց հավատացյալներին ներշնչում էին սեփական կրոնի ու անձի հանդեպ առաջնայնություն, ինքնահավանություն, ինքնավստահություն, և ատելություն, արհամարհանք մյուս կրոններին ու դավանանքներին հետևողների,

---

[1] СМОМПК, вып. XXVI, Тифлис, 1899, от. I, ст. 116-117 (Гулак Н.И. "О знаменитом персидском поэте Низами Ганжинский и о его поэме "Поход Руссов против Берда".

[2] Կարապետյան Բ., Շուշի բերդաքաղաքը, Երևան, 2000, էջ 30: Տես՝ նաև՝ Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի, Շուշի, 1831, էջ 44:

[3] МИЭБГКЗК, т. II, ч.I, ст. 43.

հատկապես, քրիստոնյաների նկատմամբ: Ներշնչված հիշյալ քարոզներով, իրենց տոհմացեղապետերի, հետագայում՝ խաների, շահերի ու սուլթանների կողմից վարվող ռազմատենչ պատերազմների ընթացքում, քշելով ու սպանելով տեղաբնակ ազգերին, յուրացնում էին գրավված տարածքները, տիրանում նրանց բարեբեր հողերին, անասուններին, ունեցվածքին. այդ գործողություններն ուղեկցում էին իրենց ողջ կյանքի ընթացքում....

Եվ պատահական չէր, որ «նրանք Ելիզավետպոլի մարզում զբաղեցնում էին դեպի դաշտավայր տանող բոլոր կիրճերի մուտքերը. օգտագործում էին հարթավայրային ջրովի հողատարածքները և լեռնային արոտավայրերը ... Մյուս ազգերի համեմատությամբ, թաթարներն ամենաապահով բնակիչներն են, քանի որ մարզում տիրապետող ցեղն էր, հատկապես Գյանջայի խանության ժամանակներից սկսած»:[1] Նույն կարծիքին էր Անդրկովկաս գործուղված ռուս աստիճանավոր Յու. Գագեմեյստերը. «Այս երկրամասում նորմալ կյանքով ապրում էին մուսուլմանները, քանի որ եղել են նվաճող ու տիրող. բնական է նրանք չեն ենթարկվել բռնությունների, հալածանքների: Գրավելով ամենալավ հողերը, եղել են անկախ ու զբաղվել են եկամտաբեր զբաղմունքով՝ անասնապահությամբ»:[2]

Կրոնական հիշյալ ուղղություններն իրենց ձգտումներով ու գործելակերպով, զարմացնելու աստիճան համընկնում էին:

Նշված քարոզչությամբ զբաղված էին հազիվ տառաճանաչ մոլլաները: Նրանցից շատերը չգիտեին իրենց քարոզած դավանանքի էությունը: «Ղորան»-ը թարս ու շիտակ մեկնաբանելով, յուրաքանչյուրն իր ձևով էր հասկանում այն, առավել ևս չէին կարողանում բացատրել կրոնական նշված ուղղությունների ծագումը, էությունը և նպատակը: Եվ, ցավոք, մահմեդական բնակչության կրթության, դաստիարակչության գործը վարում էին նրանք և տեղին է ասված. «Այժմյան ելիսավետպոլի նահանգում մահմեդական ազգաբնակչության մեջ պահպանվել են միայն կրոնական ֆանատիզմը ... փոխանակ լուսավորության նկատմամբ ունեցած սիրո, մենք տեսնում ենք բութ, տգետ մի զանգված ու համատարած անգրագիտություն. մզկիթներին կից խղճուկ մեդրեսներում (վարժարան), խեղճ տղա աշակերտները, 4-5 տարի շարունակ, թութակի նման, չհասկանալով արաբերեն ոչ մի բառ, անգիր են անում «Ղորանի» 15 սուրահները,

---

[1] Серебряков И., նշվ. աշխ. էջ 68: Տես նաև "Записок" Кавказского общества сельского хозяйства, за 1861 г. NN3, 4, 5.
[2] Гагемейстер Ю., նշվ. աշխ. էջ 12:

որով և ավարտվում է նրանց ուսուցման գործընթացը»:[1] Որպես հովվապետեր, ժողովրդի կողմից չհեղինակազրկվելու, ինչպես նաև իր նյութական եկամուտներն ապահովելու նկատառումներով, իրենց հոտին մղում էին այլադավանների դեմ: Հավատացյալները չունենալով գրագիտություն ու սեփական կարծիք, նրանց վրա անմիջական ազդեցություն էին ունենում մոլլաների այն քարոզները, թե գյավուրներին (անհավատ) թալանելը, կողոպտելը և սպանելը մեղք չէ, դրանով նրանք ապահովում են իրենց նյութական կյանքը՝ այս, և մահից հետո դրախտը՝ հանդերձյալ աշխարհներում. կամ, նամազ անելով և ուխտագնացության մեկնելով սրբավայրերը հավատացյալները կմաքրվեն գործած մեղքերից, և ամենակարող ալլահը կների ու կպահպանի նրանց: Հակաքրիստոնեական այս տրամադրություններն զգացվում և օգտագործվում էին նաև միջպետական քաղաքական ոլորտներում: Ռուսական պետության և նրան հպատակ տեղաբնիկների կողմնորոշման պահպանման հարցում, առավել վտանգավոր էին Պարսկաստանից ու Թուրքիայից այստեղ եկող հիշյալ «գաղափարախոսները»՝ սյունի, շիա, ալիլլախ հոգևորականները, որոնց Անդրկովկասի համապատասխան բնակչությունն ընդունում էր գրկաբաց՝ անսահման հավատով ու սիրով: Տարաշխարհիկ այդ քարոզիչների առաքելությունն ուներ նաև մի այլ նպատակ՝ «Ռուսաստանի դեմ գրգռել ռուսահպատակ ժողովուրդներին. դրանով շահագրգռված էին նաև Անգլիան, Գերմանիան. Ֆրանսիան և այլ պետությունների քաղաքական շրջանները»:[2]

Նշենք բազմաթիվ փաստերից մեկը. «Թեհրանում է գտնվում ծննդով Լենքորանից, Միր-Ալի-Նեգի խանը՝ հանգուցյալ Միր Հասան խանի գերդաստանից: Ժամանակին Թալիշում նա տիրում էր հսկայական կալվածքների, որը ետ ստանալու հույսով պատրաստ էր օգնելու Անգլո-Ռուսական պատերազմի սկսվելուն, որի ընթացքում նա իր համախոհներով կպաշտպանի Անգլիայի շահերը...Ղարաբաղի խաների հետնորդները նույնպես կապված են նշված գործիչների հետ: Նրանք՝ բոլորը միասին, ծառայում են Մեծ Բրիտանիայի միսիային և ամեն ժամանակ կարող են բորբոքել հակապետական անկարգություններ»:[3] Կովկասի փոխարքա Վորոնցովը 1854թ. հեռանալով Կովկասից, իր հաջորդին գրավոր զգուշացնում էր, որ պատերազմական և արտաքին քաղաքականության (Պարսկաստանի, Թուրքիայի հետ, հատկապես) դժվարին պայմաններում նրանք (մահմեդականները) բնականորեն հենարան չեն կարող լինել Ռուսաստանին:[4]

---

[1] СМОМПК, вып. XXVI, ст. 116-117.
[2] Пауменко Е, նշվ. աշխ., էջ 304:
[3] АКАК, т. XI, Тифлис, 1888, ст . 548-549 (Письмо л. С.С. Аничкова к кн. Бебутову, от 19-го ноября 1855 года, N614-секретно).
[4] Иваненко В, նշվ. աշխ., էջ 351:

Սահմեղական բնակչության հիշյալ վարքագծին նպաստում էր նաև նրանց ապրելաձևն ու կենցաղը, որի վառ ապացույցներից էր քոչվորությունը: Անդրկովկասում հայտնի էին քոչվոր շատ ցեղեր, որոնք հիմնականում ապրում էին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում: Նրանք իրենց մոլեռանդությամբ ու թվաքանակով գրավում էին առաջին տեղը, երկրորդը՝ քրդերը, երրորդը՝ թալիշները և այլն: 1850-ական թվականի տվյալներով, երկրամասի 45000 ընտանիք քոչվորներ էին,[1] որոնք մտնում էին պետական գյուղացիության դասի մեջ: Իր ժանամանակի պետական գործիչները, վիճակագիրները, գիտնական-ազգագրագետները, օտար ճանապարհորդները և այլոք, բազմիցս զբաղվել են նրանց վերաբերվող հարցերով: Նրանցից մեկի բնորոշմամբ. «Անդրկովկասի պետական գյուղացիության մի ստվար մասը մտնում է բնակչության մի այնպիսի խմբի մեջ, որն իր մարդկային հատկություններով, մշակույթի ու կենցաղի ցածր մակարդակով, խիստ տարբերվում է մյուսներից, դրանք քոչվորներ են, որոնք իրենց վարած հատուկ կյանքով և անգամ կրոնական ըմբռնումով ու հայեցակետով, մի ինքնատիպ բացառություն են, որը շատ հեռու է մարդկայնորեն ընդունված՝ համընդհանուր չափանիշներից: Նրանք ոչնչով կապված չեն շրջակա բնակչության հետ և իրենց ապրելաձևով ու վարքագծով հակակրանք են առաջացնում հարևան մյուս ժողովուրդների մոտ»:[2] Եվ Լեոյի դիպուկ բնորոշմամբ. «Թափառականներն իրենց մտավոր դրությամբ կարող էին միայն անիշխանություն առաջացնել, թուլացնելով ներքին կապը երկրի զանազան մասերի մեջ»:[3] Քոչվորների հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր. «...առանց որի նրանք կմնային ամենախղճուկ արարածները՝ իրենց անաշխատասիրության և ծուլության պատճառով. և պատահական չէ, որ անասնապահությունը մշտապես գերադասել են հողագործությունից»:[4]

Անասնապահության համար այստեղ կային բնակլիմայական նպաստավոր պայմաններ. «Իր տեսակին մեջ նշանավոր, բարեբեր և բազմարդիւն է Աղուանից երկրի հողն: ...պատուական ամարանոցներ են մեծ սարերի վերնամասերն, որ դալարագեղ և ծաղկազարդ ասպնջական են անասնոց համար»:[5] Մինչև ապրիլ-մայիս ամիսներն անասնահոտերը արածացնում էին հարթավայրերում, իսկ ամռան շոգին՝ նախալեռները՝ էյլախները. հետո բարձր լեռնային յայլաներն, ուր մնում էին մինչև ուշ աշուն: Նահանգում ամառային արոտավայրերի տարածքը կազմում էր 398944 դեսյատին, որը նահանգի ողջ տարածքի 40,59%-ն էր, ձմեռայինը՝ 196021 դես.՝

---

[1] "Кавказ", Тифлис, 1847 (Сборник газета "Кавказ" первое полуголие 1847г., ст.230 (Ю.А.Гагемейстер, хозяйственный очерк Закавказского края).
[2] Свод материалов по ЭБГКЗК, т. III, ч. II, ст. 65 (Бахталзе И., Кочевники).
[3] Լեո, նշվ.աշխ., էջ 89:
[4] Серебряков И., նշվ.աշխ., էջ 68-69:
[5] Բարխուտարեանց Մ., Պատմություն Աղուանից, Ա հատոր, Թիֆլիս, 1901, էջ 13:

20,87%-ը: Ստացվում է, որ դրանց ընդհանուր տարածքը կազմում էր 594965 դես. կամ նահանգի տարածքի 61,46%-ը:[1] Նշված ցուցանիշները վկայում են, որ քոչվորներն անասնահոտները քշում էին մինչև 400 մղոն հեռավորության վրա, ուր տեղադրված էին բազմաթիվ հայկական գյուղեր, որոնց ցանքսերը, բանջարանոցները ոչնչանում էին, իսկ բնակիչները՝ թալանվում, և դա վերջ չուներ: Պատմաբան Լեոյի վկայությամբ՝ «Նրանք ներկայացնում էին կոպիտ ուժ և նրանց բափառումները շարունակ ավարառությունների, հափշտակությունների, ավազակությունների հետ էին կապված, որոնք խաղաղ երկրագործ ազգաբնակչության համար զարհուրելի կացություն էին ստեղծում...»[2]

Գյուղացիական ռեֆորմի 1870թ. մայիսի 14-ի կանոնադրության 25-րդ հոդվածով, կառավարությունն անդրադարձավ նաև քոչվորների հարցին, ուր գրանցվեց, որ նրանց իրավունք էր տրվում 6 տարի օգտվել կալվածատիրական արոտավայրերից: Մինչև նշված ժամկետի վերջը փոխարքան նրանց վերաբերյալ պետք է մշակեր նոր միջոցներ ու առաջարկներ: Քաշքշուկը տևեց 13 տարի և որոշվեց՝ «քոչվորները ենթակա են մնում մինչռեֆորմյան կարգ ու կանոնին»[3] ... որոնք փաստորեն գոյություն չունեին: Այս իրավիճակը լուրջ մտահոգություն էր հայ ժողովրդի և նրա ճակատագրով հետաքրքրվող մտավորական ու կուսակցական այրերի համար: «Դաշնակցության» պահանջով, դրվում էր եղած տարածքների բաժանության հարցը՝ ըստ ազգային պատկանելիության, որը, սակայն, չիրագործվեց: 1906թ. Թիֆլիսում տեղի ունեցած հայ-թաթարական համագումարում, հայ ներկայացուցիչները նորից բարձրացրին այդ հարցը, ընդհուպ մինչև քոչվորության դադարեցումը, գոնե մեկ տարով: Իհարկե այն չընդունվեց, քանի որ դա Անդրկովկասի անասնապահության համար մահացու հարված կարող էր լինել և, հերթական անգամ սահմանվեց «զգույշ լինելու» կարգախոսը:[4]

Քոչվորությունը շատ մեծ աշխուժություն էր մտցնում մահմեդականների կյանքում. երիտասարդությունը ձմռանը երազում ու պատրաստվում էր քոչելուն, քանի որ բնության գրկում ազատ ու անկաշկանդ էին դառնում ... աշնան ու ձմռան ամիսներին սկսվող հարսանիքները նախապատրաստվում ու հասունանում էին այստեղ: Երիտասարդ ու միջին տարիքի կանայք զբաղվում էին կաթնամթերքների մշակմամբ, պահեստավորմամբ և այլ աշխատանքներով:

---

[1] Свод материалов по изучению ЭБГКЗК, т. V, ч. I, ст. 96.
[2] Լեո. նշվ.աշխ., էջ 89-90:
[3] Ոշտուկի Վ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Բ, Երևան, 1968, էջ 59:
[4] Воронцов Дашков И., Всеподданейшая записка по управлению Кавказским краем, гос. типогр, 1907, ст. 64-65.

Բացի նշված օբյեկտիվ պատճառներից, շատ նպաստավոր պայմաններ էին ստեղծվում մահմեդական տղամարդկանց և, ինչու չէ, նաև կանանց համար, միս ու արյուն դարձած՝ թալանի, կողոպուտի ու ավարառության բնազդներին հագուրդ տալու համար. այս բոլորը կատարվում էր այնպիսի արագությամբ ու վայրենի մոլեռանդությամբ, որ ոչ մեկին չէր հաջողվում գտնել հանցագործին կամ ապացուցել, թե ո՞վ է մեղավորը: Ի դժբախտություն տուժածների հայերի, գոյություն ուներ քոչելու երեք ուղղություն, որից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում էր ճյուղերի՝ տարբեր ճանապարհներով. օրինակ, Կարայազի տափաստանի ուղղությունը բաժանվում էր վեց ճյուղի...:[1] Թաթար քոչվորները չարիք ու պատուհաս էին նախալեռներում զետեղված հայկական գյուղերի ու շեների համար. անասունների հոտերը քշում էին նրանց ցանքատարածությունների, բոստանների ու այգիների վրայով, գողանում ու իրենց հոտին էին միացնում նրանց պատկանող անասունները, խլում պահեստավորած հացահատիկի և այլ մթերքների պաշարները, տնային-կենցաղային իրերը, այն ամենը՝ ինչ ձեռքներն էր ընկնում: Հայ երկրագործները, ստիպված, ուշացնում էին հացահատիկի բերքահավաքը, փրկելով այն նրանց կողմից գողանալուց ու հափշտակվելուց: Եվ այս սարսափն ու չարիքը նստակյաց հայերի համար անվերջանալի էին ... երիտասարդ քոչվոր տղամարդը չէր սիրում աշխատել. նրանց «տղամարդկային» գործը վերը նշված ավազակությունն (ղաչաղություն) էր, որի համար կազմավորվում էին հատուկ խմբեր ու բնակավայրեր. վերջիններիս համար հիմք էին ծառայում քոչվորների ձմեռանոցները, որոնք փոքրիկ գյուղակներ էին. նրանց թիվը օր-օրի աճում էր, ապաստան տալով հիշյալ հանցագործներին:[2] Դեռ վաղուց, ինչպես նաև 19-րդ դարի ընթացքում, Անդրկովկասի սահմանային բնակավայրերը դրսից (Պարսկաստանից, Թուրքիայից) շատ հաճախ ենթարկվում էին նման հարձակումների. այդ դեպքում տուժում էին բոլորը՝ քրիստոնյաներն ու մահմեդականները, ժամանակ չկար նրանց տարբերելու: Այսպես, 1810 թ. գնդապետ Ասիևը զեկուցագրերից մեկում Շուշիից հայտնում էր, որ պարսկական ավազակային մի խումբ մտել էր Ղարաբաղի էդիլյու գյուղը, գերել 27 մարդ՝ հայեր ու թաթարներ, քշել տարել էր 50 խոշոր եղջերավոր անասուն, ձիեր, ջորիներ, թալանել գյուղի բնակչության ողջ ունեցվածքը և անպատիժ հեռացել:[3] Ռուս աստիճանավոր ճանապարհորդ պ. Մեվեսը դառնացած նշել է. «Թաթարների քոչվորությունը, դա գողության, թալանի անընդհատ արտադրությունն է»:[4]

---

[1] Бахтадзе И., նշվ.աշխ., էջ 68:
[2] "Кавказский край", т. LII, СПБ, 1903, ст. 116.
[3] АКАК, т.IV,ст. 563.
[4] "Кавказ", 1863-65 (Критика и библиография), ст. 41.

Նման փաստերով հեղեղված են իր ժամանակի մամուլը, գրականությունը, պետական փաստաթղթերը և արխիվային նյութերը, որոնցում կային նաև կառավարությանը մտահոգող փաստեր. « ... Երկրի ներսում (Անդրկովկասում) տեղի ժողովրդի կրոնա-բարոյական հատկությունների անկման պատճառով ի հայտ են գալիս այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են՝ գողությունը, գերեվարությունը, մաքսանենգությունը, թալանը ... հանցագործները մնում են անպատիժ, քանի որ չեն գործում դատական համակարգը և օրենքները, որոնցով պետք է մեղավորները բացահայտվեին ու պատժվեին. հակառակ դեպքում, մարդկանց այդ շերտը դառնում է չարագործների մի դաս, որը չպատժվելով, օրինական է համարում նման միջոցներով ապահովել իր ապրուստը: Եվ քանի որ անհնար է նրանց հանցանքի վայրում բռնելն ու պատժելը, դրա համար պետք է ձգտել ստանալ փոխարքայի թույլտվությունը գաղտնի կազմել և ներկայացնել կասկածելի այն մարդկանց ցուցակը, որոնք պետք է վարչական կարգով վտարվեն երկրամասից»:[1]

Մեծ չարիք էին մահմեդականների, հատկապես քոչվորների, մշտական գործող ավազակային խմբերը: Դեռևս վաղ ժամանակներից պահպանվել են արխիվային նյութեր, որոնք վկայում են, որ ավազակությամբ զբաղվում էին նաև մահմեդական նշանավոր պաշտոնյաներ: Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից Բարսեղ արքեպիսկոպոսին ուղղված նամակներում նշված է Ահմեդ խանի, ճանապարհներին վխտացող ավազակային խմբերի կատարած ահավոր գործողությունների մասին:[2] Ավելի վտանգավոր էին աղքատացած խաներն ու բեգերը, օրինակ Նուխի գավառի կալվածատեր Մուստաբեգ Հաջիխանովը և նրա նմանները «պատրաստի կադրեր էին ավազակների և այլ հանցագործների շարքերը համալրելու ... Իսկ հարուստ և անգամ գրագետ ու կիրթ (հիարկե արտաքուստ) բեկերը, բացահայտորեն կամ գաղտնի հովանավորում էին նրանց և թաքցնում դատապարտված, փախստական գողերին ու այլ հանցագործներին:[3] «1842թ. վերջին Անդրկովկասի շատ վայրերում, հատկապես Ելիզավետպոլի և Գորիի գավառների ճանապարհների վրա երևան են եկել գողերի ու թալանչիների ավազակային խմբեր, որոնք օգտվելով տեղանքի բնական բարդ պայմաններից, հարձակվում են անցորդների, բեռնատար ու փոստատար կառքերի ու ֆուրգոնների

---

[1] АКАК, т. XII, Тифлис, 1904, ст. 49-50 (от 19-23-ого июня 1859г. N198. Секретно).
[2] ՊԿՊԱ, Ֆ. 57, ց. 1, գ. 18, թ. 1-6 /14/1-1806-20/3-1809/:
[3] Науменко Е., նշվ. աշխ., էջ 337-338:

վրա»:[1] Նման հարձակումների մեծ մասը կատարվում էին Բաքվի, Երևանի ու Ելիզավետպոլի նահանգների թաթարաբնակ այն գավառներում, որոնք իրենց մեջ ներառնում էին Կովկասի ավազակախմբերի (ղաչաղների) ողջ համակարգը: Եվ պատահական չէր, որ հատկապես ավազակաբարո այդ գավառների պետերը մեծ մասամբ թաթարներ էին (երկրամասում եղած գավառապետերից միայն 2-ն էին հայազգի):[2]

Ուսումնասիրողներից ոմանք «ղաչաղությունը» դիտում են որպես գյուղացիական զինված ելույթներ՝ ընդդեմ բեկերի, մելիքների և պաշտոնյաների. և իբրև թե նրանցից թալանված ունեցվածքը բաժանում էին չունևորներին:[3] Եթե դա այդպես էր, ապա հաստատ համոզված ենք, որ դրանից անմասն էր չունևոր հայը: հատկապես Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգներում նրանց հարձակումներին, ինչպես նշվել է վերոհիշյալ շարադրանքում, առաջին հերթին ենթարկվում էր հայ գյուղացիությունը...

1870-ական թվականներին նշանավոր էի Ելիզավետպոլի նահանգի Ջրաբերդ գավառում «Իմարաթ-Բերավենտ» կոչված գյուղակը, որի բնակիչները համատարած ղաչաղ-ավազակներ էին: Հարևան հայկական գյուղերից նրանք այնքան էին գողանում ու թալանում, որ ապահովում էին ոչ միայն իրենց ապրուստը, այլև դրանից վճարում էին նաև պետական հարկերն ու տուրքերը: Նրանց գործած չարագործությունները երկար ժամանակ մնում էին անպատիժ: Միայն դարավերջին նահանգական վարչական իշխանությունները սկսեցին անդրադառնալ քոչվոր ավազակների գործին:[4] Տեղական իշխանությունների զեմստվոների նախաձեռնությամբ, կազմավորվեցին զինվորական, պահնորդական հեծյալ և հետևակային ջոկատներ: Դոնի կազակների երկու գունդ տրամադրվեց նշված ջոկատների կազմավորմանը: Դրանց զուգահեռ, 1839 թվից սկսած Ղարաբաղում և այլ վայրերում գործում էին նաև վարձկան, հսկիչ զինված խմբեր տեղաբնիկներից. երկու դեպքում էլ դրանց պահելու ծախսերը հատկացնում էին գյուղական համայնքների բնակիչները, որոնցից գանձվող հարկը, ժողովրդի բերանով, կոչվում էր «չափառի» (պաշտպանիչ, պատնեշ) հարկ, որը «Թիֆլիսի, Բաքվի ու Երիվանի նահանգները միասին վերցրած, տարեկան կազմում էր ավելի

---

[1] Иваненко В., նշվ. աշխ., էջ 318, տես АКАК, т. X, ст. 830, 831, 780, 781, որոնցում նշված են Ելիսավետպոլից-Նուխի, Թիֆլիս, Շամախի և այլ ուղղություններով ընթացող փոստակառքերի վրա հարձակման ու կողոպտման բազմաթիվ փաստեր:

[2] Братская помощь..., ст. 679-680.

[3] Ибрагимов Э., Революция 1905-1907 гг. в Азербайджане, Баку, 1955, ст.24 Исмаил-Заде Д., Русское крестянство в Закавказье, Москва, 1982, ст. 183.

[4] Науменко Е., նշվ. աշխ., էջ 322:

քան 500000 ռուբլի»:[1] 1883թ. տվյալներով, Ելիսավետպոլի Ղազախի գավառում նշված գումարը կազմել էր 6718 ռուբ. 55 կոպ., որից 3289 ռուբ. 15 կոպ. վճարել էր հայկական, 180 ռուբ.՝ ռուսական համայնքները[2] և այլն: Չնայած ձեռնարկված բոլոր միջոցներին, «մշտապես գործող ավազակախմբերի և նրանց ղեկավարների՝ Թանգրի-Վերդու, Ալի Սալամուտ Օղլու և 1885 թվից՝ Քյարամի և այլոց գործողությունները Ղազախի և հարևան մյուս գավառներում ահ ու սարսափ են հայկական ու ռուսական գյուղերի համար և նրանց դեմ պայքարող զինված ջոկատների բոլոր ծախսերը հոգում են տեղաբնակ քրիստոնյա ռուսները, հայերը. այդ գումարները հասնում են տասնյակ հազարների»:[3] Շարունակելով իր մտքերը այս հարցերի մասին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով Դաշկովը նշում է. «Ելիզավետպոլի նահանգի գավառներում անարգել գործում են բազմաթիվ ավազակային խմբեր, որոնք ղեկավարվում են նման փորձ ունեցող, Կովկասում գործող ավազակ ատամանների կողմից, ինչպես օրինակ Դալի-Ալին կամ Յուսուֆ կոչեցյալները, որոնք անարգել թալանում, գողանում ու սպանում են մարդկանց»:[4] Այդ իմաստով, ուշադրության արժանի են դատական քրեական գործերի հաղորդած տվյալները. Ելիզավետպոլի նահանգում 1868-1870թ.թ. ընթացքում կատարվել է շուրջ 254 հանցագործության (ավազակություն, գողություն, սպանություն) դեպքեր, որոնցից 62-ը՝ (34 սպանություն) Ղազախի, 366-ը՝ (51 սպանություն) Շուշիի, 79-ը (20 սպանություն) Զանգեզուրի, 526-ը՝ (97 սպանություն) Նուխիի, գավառներում.[5] սպանությունները (203), մյուսների համեմատությամբ, մեծ թիվ էին կազմում՝ 73%-ը: Իսկ հանցագործությունների թիվը մեծ էր այն գավառներում, ուր մահմեդականների թվաքանակը շատ էր: Իսկ 1898թ. Ելիսավետպոլի նահանգում գրանցված 3805 քրեական գործերից 792-ը (20,8%) կողոպուտի, թալանի. 1899թ. 3468-ից՝ 567-ը, 1900թ. 3733-ից՝ 760 (20,3%), իսկ 1901թ. 3881-ից՝ 790-ը (20,3%):[6] Բացի նշված գրանցվածներից, կային նաև չգրանցվածները ... սակայն բերվածն էլ բավական է, պատկերացում կազմելու համար, որ նշված հանցագործությունները շարունակում էին աճել՝ չմարող տեմպով:

Դատական օրենքներն ու պետական որոշումները կիրառելիս իշխանությունները հանդիպում էին մեծ դժվարությունների. օրինակ, ռուս

---

[1] АКАК, т. X, ст. 330-331, նաև Иваненко В., նշվ. աշխ., էջ 477:
[2] МИЭБГКЗК, т. II, ч. II, ст. 201, /1884թ. հասարակական, դրամական տուրքերի ցուցակ/:
[3] Воронцов Дашков И., նշվ. աշխ., էջ 6,63:
[4] Նույն տեղում:
[5] Сборник сведений о Кавказе, т. II, Тифлис, 1871 (Материалы для уголовной статистики Кавказа и Закавказа), ст. 245.
[6] Алиевов М. Народное образование на Кавказе, Тифлис, 1903, ст. 13.

աստիճանավորներից մեկը, ծանոթ լինելով քոչվորների վիճակագրության տվյալների հավաքման գործընթացին, նշել է. «Կառավարությունը չի կարող իմանալ այդ բնակչության ստույգ թվաքանակը և նրանց վերաբերյալ այլ տվյալներ ևս, քանի դեռ քոչվորները նստակյաց չեն ... մարդահամարից նրանք վախենում են այնպես, ինչպես ժանտախտից»:[1] Շատ դժվար էր հանցագործ քոչվորին կանչել պատասխանատվության, քանի որ նա ուներ պատսպարվելու ապաստաններ, ամռանը էյլախներում ու յայլաներում, ձմռանը դաշտավայրերում եղած իրենց օբաներում (ձմեռանոց), որոնց կարելի էր հանդիպել նահանգի բոլոր գավառներում: Օրինակ, Զանգեզուրում 47 թաթարական և 53 քրդական հիմնական գյուղերից բացի քոչվորներն ունեին իրենց օբաները, որոնց թիվը թաթարների մոտ 60-նն էր, իսկ քրդերինը 23-ը:[2] Դրանք ապօրինաբար զետեղվում էին նաև հայկական բնակավայրերում, օրինակ՝ Մեղրիում կար այդպիսի 10, Կապանում 40, Սիսիանում՝ 6 թաթարական և 19-ը քրդական ձմեռանոցներ:[3] Նուխի գավառում կային 7 թաթարական և զապուտլիների՝ 2 օբաներ, որոնցում ապրում էին 2156 քոչվոր. միջինով մեկ օբային ընկնում էր 239 բնակիչ: Այս գավառի կարակոյունլի ցեղի քոչվորները զբաղեցնում էին 4 բնակավայր, որտեղ կային նաև բարեբեր վարելահողեր, քոչելիս շատ չէին հեռանում, հասնում էին մինչև մոտակա Բոզ-Դաղի լեռնային արոտավայրը, իսկ ձմռանը իջնում Բիլանի տափաստանի՝ իրենց ձմեռանոց-օբաները: «Նուխի գավառի այս և Բումի շրջաններն օժտված էին բնական հեքիաթային գեղեցկությամբ ու հարստությամբ, որոնք անհարիր էին տեղի քոչվորների կենցաղին ու ահավոր չափերի հասնող նրանց ավազակությանը, թալանին ու գողությանը»:[4]

Ելիսավետպոլի գավառի մահմեդական բնակչությունը, բացառությամբ 9 գյուղի, քոչվորներ էին:[5]

Ըստ Ի. Բախտածեի տվյալների, քոչվորների բնակավայրերը զետեղված էին նահանգի հետևյալ գավառներում:[6]

---

[1] "Кавказ", 1865, N35, ст. 42.
[2] МИЭБГКЗК, т. IV, ч. I, ст. 24.
[3] Նույն տեղում:
[4] МИЭБГКЗК, т. VI, ч. I, ст. 1-2,8.
[5] Бахтадзе И., նշվ. աշխ., էջ 80:
[6] Նույն տեղում, էջ 81, 83:

| հ/հ | Գավառը | Համայնք | Ծուխ | Արական | Իգական | Ընդամենը /մարդ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արեշի | 3 | 250 | 643 | 541 | 1184 |
| 2 | Ջեբրայիլի | 20 | 1293 | 4501 | 3724 | 8225 |
| 3 | Նուխիի | 9 | 347 | 1242 | 914 | 2156 |
| 4 | Շուշի[1] | 12 | 1318 | 5275 | 4481 | 9756 |
| Ընդամենը | | | | | | |
| | 4 | 44 | 3208 | 11661 | 9660 | 21321 |

Նշված տվյալները, ինչպես տեսնում ենք, վերաբերվում են նահանգի չորս գավառներին, մնացած մյուս չորսի՝ Զանգեզուրի, Ելիզավետպոլի, Ղազախի և Ջևանշիրի տվյալները բացակայում են. օրինակ՝ Ելիսավետպոլի գավառի մասին, հենց նույն հեղինակն է նշում, որ այստեղ բացի մահմեդական 9 գյուղից, մնացածները՝ քրիստոնյաներ էին: Հավանական է, որ նշված աղյուսակում նա անդրադարձել է միայն համայնքների մեջ ընդգրկվածներին, քանի որ կային համայնքներից դուրս գյուղեր, որոնք անկախ էին. օրինակ՝ Զանգեզուրի քրդերի ու բաբարների 26 գյուղեր դուրս էին գյուղական համայնքներից.[2] նման փաստեր կային նաև մյուս գավառներում: Նշված ծմեռանոցներն ու նրանցում եղած տները, շատ խղճուկ ու անմխիթար էին. այդ գյուղակները մխրճված էին հողի մեջ, որոնք արտաքուստ աննշմար էին, հատկապես ծմռանը՝ ձյան ծածկույթի տակ: Իսկ գետնափոր տները՝ ելքի ու մուտքի մի նեղ անցքով, հողին հավասար կտուրով, տարածքներ էին. կտուրի վրա թողնում էին մեկ, երկու փոքր անցքեր «բնակարանը» օդափոխելու և լուսավորելու համար: Դրանք կառուցվում էին անսիստեմ, որտեղ պատահեր: Տան կենտրոնում օջախն էր, որի շուրջը թափված էին իրերի կույտեր. «նրանց տնային կահ-կարասին սահմանափակվում էր լաթերի և այլ իրերի մի քանի հակերից, որոնք հեշտությամբ տեղից-տեղ էին տեղափոխում ... սա է քրիստոնյաների կյանքի ողջ դրվածքը... »:[3] Նրանց անասունները տեղավորված էին բնակարաններին կից գոմերում կամ ուղղակի իրենց սենյակներում: Վառվող օջախի ծխի, անասունների և իրենց կենցաղային կեղտն ու գարշահոտությունն անտանելի էր.

[1] Շուշի և Ջեբրաիլ գավառների (դրանց տվյալները միշտ միասին էին տրվում) մահմեդական 81 գյուղերից, 49-ը նստակյաց էին, 32-ը՝ քրիստոն. սակայն վերջիններիս բնակչության թիվը գերակշռում էր նախորդներինն. 32 քրիստ. գյուղերում կար 2611 ծուխ՝ 17981 երկսեռ բնակչությամբ, իսկ 49 նստակյաց գյուղերում 2051 ծուխ՝ 12969 բնակչությամբ: Տես МИЭБГКЗК, т. IV, ч. I, ст. 233.

[2] Свод статистических данных... 1886 года, Тифлис, 1888, ст. III-IV.

[3] "Кавказ" за 1863-65 годы, Критика и библиография, ст. 42.

«ողջ Անդրկովկասում չկան այնպիսի տհաճ բնակարաններ, ինչպես Ղարաբաղի թաթարների մոտ»:[1] Ձմռան ամիսները տխուր ու անգործ էին անցնում ծույլ, անբան մահմեդական տղամարդկանց համար, քանի որ «Այս թափառական հասարակության մեջ գրեթե բոլոր գործերը կանայք են կատարում»:[2] Նրանց ուսերին էր դրված դրսի ու ներսի ընտանեկան աշխատանքներն ու հոգսերը: Ցավոք, իրենց կենցաղում թաթարուհիները շատ կեղտոտ ու անփույթ էին. բոլորովին ուշադրություն չէին դարձնում հիգիենայի, գոնե տարրական կանոնների պահպանմանը: Գուցե պատճառը նաև բնակարանային ու կյանքի մյուս անհարմարություններն էին, սակայն նկարագրվող իրականությունը վեր է ամեն ինչից. « ...թաթարուհին ավելորդ է համարում հոգալ երեխաների մաքրությունը: Նա երբեք նրանց չի լողացնում ... երեխաների մեծ մասի մարմինը, երեսը պատված է կեղտի հաստ շերտով, որից և անպակաս էին մաշկային հիվանդություններ առաջացնող մարմնի ցանը, թեփն ու վերքերը: Այդ թշվառները շրջապատի ու կողմնակի մարդկանց մոտ միայն զզվանք ու խղճահարություն են առաջացնում: Երեխաների մահացությունը մեծ չափերի է հասնում ... Քաղաքաբնակ թաթարուհին այս հարցերում հեռու չէ իր գյուղացի քույրերից ... նրանց փնթի, կեղտոտ կենցաղը դարձել է ասացվածք»:[3] Մեծ թե փոքր, ի վերջո դառնում են վարակիչ հիվանդությունների բացիլակիրներ, որով և վտանգավոր էին նաև շրջակա բնակավայրերի համար: Սկզբնաղբյուրներից մեկում կարդում ենք. «Քարինտակ գյուղը (Շուշի գավառում) գտնվելով քոչվոր թաթարների ճանապարհներին, շատ տուժում է նրանց անասունների կատարած ավերածություններից ու թաթարների վարակիչ հիվանդություններից. նրանց կենցաղն անհամեմատ կեղտոտ է ու անտանելի... օրինակ, 1892թ. քոչվորներն իրենց հետ գյուղ բերեցին ժանտախտ հիվանդությունը, որից մահացան 944 հոգի, էլ չենք ասում անասունների վարակիչ հիվանդությունների մասին»:[4] Նման միջոցներով «Վարակն անցնելով գյուղից-գյուղ, գավառից-գավառ, ընդգրկում էր ողջ նահանգը ... և անհնար էին դառնում ոստիկանության, անասնաբուժության արդյունավետ հսկողությունը, կարանտինի կանոնների կիրառումը և այլն»:[5]

---

[1] Обозрение российских владений за Кавказом, ч. III, СПБ, 1842, ст. 380.

[2] Հակոբյան Հ. Ուղեգրություններ, հ. Զ, ԺԹ դար, Երևան, 1934, էջ 385 (Ուղեգրություն Զեյմս Սորիերի 1810-1816 թթ. երկրորդ ճանապարհորդությունը):

[3] СМОМПК, вып. XX,ст. I, ст. 108.

[4] Նույնի, вып. XXV,ст. II, ст. 113 (Осипов Г., Селение Даш-Алты Шушинского уезда Елис-ой губ-ии).

[5] Сегаль И., Обзор производительных сил населения Елисаветпольской губернии, Тифлис, 1896, ст. 141-143.

Այսպիսով՝ ի մի բերելով մահմեդականների ու հատկապես քոչվորների, վարած կյանքի ու կենցաղի հարցերը և դրանք համեմատելով ազգաբնակչության մյուս հատվածի՝ քրիստոնյաների (հայեր, ռուսներ, գերմանացիներ և այլն) հետ, իր ժամանակի ուսումնասիրողները և պետական պաշտոնյաները եկել են այն եզրակացության, որ նրանք միմյանց անհարիր ու անհամատեղելի էին, բայց ճակատագրի բերումով պետք է գոյակցեին ու ապրեին միասին:[1] Կամ՝ «նստակյացները գիտակցաբար ենթարկվում են սահմանված մարդկային պարտականությունների ու պետական իշխանությունների օրենքներին ... իսկ քոչվորներն, ընդհակառակը, խուսափում են հիշյալ, նորմալ պարտականություններից ու չափանիշ դարձած երևույթներից. ստացվում է, որ այն ինչ օգտակար է մեկին, վնաս է մյուսին, և ընդհակառակը: Նշված իրավիճակները լուրջ խոչընդոտներ են ստեղծում, նույն տարածքի վրա ապրող բնակչության հիշյալ հատվածների համար» և հետո եզրակացնում. «Ելիզավետպոլի նահանգում, ինչպես նաև ողջ Անդրկովկասում, իսլամն անհամատեղելի է ժամանակակից քաղաքակրթությանը, պետական իրավաբանական ու բարոյական հասկացություններին ու չափանիշներին, և որոնք շատ հաճախ հակադրվում են. այսպես, կեղծ վկայությունը, դատաիրավական օրենքով դիտվում է ծանր հանցագործություն, իսկ մուսուլմանի համոզմամբ՝ իր հավատակցին կեղծ վկայությամբ պաշտպանելը, ընդդեմ գյավուրների, ալլահին հաճո է: Կամ գողությունը, կողոպուտը ծանր հանցանքներ են, իսկ նրանք դա ընդունում են որպես քաջագործություն, խիզախություն: Կամ, բոլոր տեսակի աշխատանքներին, քաղաքակիրթ ժողովուրդները վերաբերվում են հարգանքով, որպես պատվաբեր անհրաժեշտություն, իսկ նրանք դրանք համարում են ստորացուցիչ, անպատվաբեր:[2] Դա արտահայտվում էր պաշտոնական հաշվետվություններում. «Անդրկովկասի արևելյան հատվածը, որի մեջ մտնում է նաև Ելիզավետպոլի նահանգը, շատ հետ է մնում երկրամասի արևմտյան հատվածներից. այստեղ կասեցվում է արդյունաբերության զարգացման ընթացքը, քանի որ հետամնաց, տգետ բնակչությունը թշնամաբար է տրամադրված աշխատանքին ու զարգացող արդյունաբերությանը, որովհետև, նրանց զգալի մասը, սեփական կարիքները բավարարում է գողությամբ, թալանով, ավազակությամբ»:[3]

Քրիստոնյաները հողին, ջրին ու բնական այլ բարիքներին վերաբերվում են, որպես աստծո կողմից ուղարկված «երկնային պարգև՝ բոլոր երկրավորներին»,

---

[1] Загурский Л., Նշվ/ աշխ., էջ 2:
[2] Науменко Е., Նշվ. աշխ., էջ 323:
[3] Воронцов Дашков И., Նշվ. հաշվետվությունը, էջ 86-87:

մարդկության ընդհանուր բարօրության համար: Մահմեդականությունը և նրան հետևողները այդ չեն ժխտում, բայց ի տարբերություն քրիստոնյայի, նշված երկրային պարգևները ի վերուստ նախատեսված են միայն իրենց՝ մահմեդականների համար: Նրանց կարծիքով, Ղորանի կողմից սահմանված ասույթով (տող 27, սուրահ 2) 1. «Աստված (ալլահը) ամեն ինչ ստեղծել է ձեզ համար, ինչ որ կա «հողագնդի» վրա: 2. Մահմեդականներին պատկանող հողերը, տարածքները, բոլոր մահմեդականների ընդհանուր սեփականությունն է: 3. Բոլոր նվաճված հողերը վերածվելով վակֆների, դառնում են մահմեդական հասարակության անձեռնմխելի ունեցվածքը ... Այս ոգով շարունակվում են նաև մյուս՝ 4-10 ասույթների սուրահներում:[1]

Կրոնական նշված հակադիր սկզբունքները հանգեցնում էին պայքարի՝ հողի, ջրի, անտառի և այլնի համար: Դժվար չէ պատկերացնել հետևանքները օրինազանցությունների, հանցագործությունների, անվերջանալի շարան...

[1] МИЭБГКЗК, т. IV. ч. I, ст. 49 (Барон Торнау, "Изложение начал мусульманского законоведения, §106, 152, 452 и "Мусульманское право", ст. 14-17).

# Ռուսներ

Անդրկովկասը ռուս ազգաբնակչությամբ բնակեցնելու առաջին քայլերը կատարվեցին 19-րդ դ. սկզբներին: Վերաբնակեցման գործընթացը ցարական կառավարության կիրառվող գաղութային քաղաքականության հիմնահարցերից մեկն էր: Այն կատարվում էր տարբեր փուլերով ու նպատակներով: Կարևորը ռազմա-ստրատեգիական ուղղվածությունն էր: Հաջորդ փուլը պայմանավորված էր գրավված նոր շրջանների ներքին կյանքի՝ տնտեսական, ազգային և այլ խնդիրների մշակմամբ ու լուծմամբ:

Դեռևս 1816թ. ցարական կառավարության կողմից որոշում ընդունվեց երկրամասում զինվորական մշտական զորանոցներ ստեղծելու մասին, որոնց համար հիմք կծառայեին, այսպես կոչված, «ամուսնացած զինվորների հատուկ ջոկատները». նրանց միջոցով պետք է կազմակերպվեր զորանոցների, ոչ միայն ռազմական, այլ նաև՝ տնտեսական կյանքը: Զինվորական պարտականություններին զուգահեռ, նրանք պետք է զբաղվեին նաև գյուղատնտեսական և արդյունագործական տարբեր աշխատանքներով. արտադրված մթերքներն ու առարկաները պետք է տրամադրվեին ռազմական զորամասերի և զինվորական ընտանիքների նյութական կարիքները հոգալուն: Հենց այդ ընտանիքների առկայությունը տեղում կապահովեր նաև ռուս ազգաբնակչության աճը, որին և ձգտում էր ռուսական կառավարությունն ու միջոցներ չէր խնայում նշված ծրագրերի իրագործման համար: Որպեսզի այս ստորաբաժանումների զինվորները՝ տարբերվեին մյուսներից, նրանց հատկացնում էին հատուկ համազգեստ՝ մոխրագույն կապա (кафтан), "В.П." ("военный поселянин") սկզբնատառերի դաճվածքով:[1] 1821թ. հունվարի 3-ի օրենքով,[2] զորակոչված զինվորների կանանց հետ կապված (ճանապարհի և այլն) ծախսերը պետք է կատարվեին պետության կողմից: Նման յուրաքանչյուր ընտանիք լրացուցիչ ստանում էր պարենամթերք, զինամթերք, ինչպես նաև 160-ական ռուբլի միանվագ դրամ՝ իրենց տնտեսությունները ստեղծելու և վարելու համար. հատկացվում էր 15-ական դեսյատին վարելահող[3] և այլն:

---

[1] Исмаил-заде Ю., Русское крестьянство в Закавказье, Москва, 1982, ст. 34.

[2] Полное собрание законов Российской империи, т. 37, N28714, ст. 794.

[3] Доляженко И., Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении, Ереван, 1985, ст. 14. Потто В., Кавказская война в отдельных очерках..., т. 3, вып. 5, СПБ, 1887, ст. 2.

Նշված միջոցառումները ցանկալի արդյունք չտվեցին. նախ, հիշյալ զինշտաբների քանակը սահմանափակ էր և չէր կարող որոշակի ազդեցություն ունենալ ռուս ազգաբնակչության ակնկալվող քանակությունն ապահովելուն և այն, որ ռուս զին ծառայողներն ու պետական չինովնիկները ծառայողական իրենց պարտականությունները կատարելուց հետո, վերադառնում էին Ռուսաստան, քչերն էին մնում Կովկասում:

Ցարական պաշտոնական շրջանները չէին հուսահատվում և նոր միջոցներ էին ծրագրում. 1827թ. կոմս Դիբիչը Պասկևիչին ուղղված գրություններից մեկում, առաջարկում էր Պարսկաստանի սահմանի վրա բնակեցնել թվով 80000 մալո-ռուս կոչված կոզակներին[1] և այլ ծրագրեր, որոնք կնպաստեին «Ռուս ազգաբնակչության գոյությանը, զարկ կտար տեղի գյուղատնտեսությանը, արդյունաբերությանն ու առևտրին, պարարտ հող կստեղծվեր ռուս և տեղի ժողովուրդների մերձեցման համար»:[2] Կովկասի փոխարքա Մ.Ս. Վորոնցովը ձգտում էր ժողովուրդների մերձեցմանը առևտրա-արդյունաբերական համագործակցության և հոգևոր-մշակութային առնչությունների ճանապարհներով: Եվ պատահական չէր նաև այն, որ իր գործունեության շրջանում մոտ 3,5 հազար ռուս աղանդավոր ընտանիք վերաբնակեցվեց Անդրկովկասում:[3]

Ռուսների արտագաղթը, տերության ծայրերկրներ, ուներ մի շարք դրդապատճառներ. Ռուսաստանում իշխող ճորտատիրական կարգերը 19-րդ դ. 30-ական թվականներին ճգնաժամ էին ապրում. այն իր արատավոր ու ցավոտ կողմերով շատ ավելի զգացվեց կալվածատիրական գյուղացիության տնտեսության մեջ, որի արտադրական մակարդակը մշտապես անկում էր ապրում, այն արտահայտվում էր գյուղացիական հողաբաժինների ու անասնաքանակի ընդգծված կրճատումներով: Շարունակում և էլ ավելի էր սաստկանում ճորտ գյուղացիների շահագործումը: Սոցիալական ծանր վիճակը ստիպում էր նրանց թողնել հայրենի վայրերը ու գաղթել: 1830-ական թվականներին Սարատովի նահանգի Նարիշկին, Կամիշինսկի և Բալաշովսկի գավառներից՝ Կովկասի ուղղությամբ, ինքնակամ հեռացան կալվածատիրական բազմաթիվ գյուղացիներ. պատճառը՝ շնչահարկի բարձր չափն էր, մեկ շնչից 60 ռուբլի և նաև ճորտական աշխատանքի ծանր պայմանները:[4] Գաղթականության մյուս աղբյուրը ռուս աղանդավոր գյուղացիությունն էր, որը զգալի տոկոս էր կազմում. մարդաշատ էր «մալական»

---

[1] АКАК, т. VII, ст. 322.
[2] МИЭБГКЗК,т. IV, ч. I, ст. 178 (Вермишев Х, Земледелия у государственных крестьян Закавказского края).
[3] Иваненко В., նշվ. աշխ., էջ 349:
[4] Мочалов В., Крестьянское хозяйство в Закавказе к концу XIX в., Москва, 1958, ст. 149.

կոչվածների խումբը, որը սփռված էր Դրիմում, ինչպես նաև Ստավրոպոլի, Տամբովի, Վորոնեժի, Սամարայի, Սարատովի ու Աստրախանի նահանգներում: Նրանք համարվում էին ամենավտանգավորները և ցարական կառավարությունն ու ուղղափառ պաշտոնական եկեղեցին, անողոք էին մալականների նկատմամբ: 19-րդ դ. հատկապես առաջին կեսի ընթացքում ռուսական ցարերի կողմից տրվեցին օրենքի ուժ ունեցող բազմաթիվ որոշումներ, հրահանգներ՝ աղանդավորներին հետապնդելու, հալածելու և մեկուսացնելու ուղղությամբ:[1]

Խստորեն արգելվում էին նրանց ժողովները, հավաքական աղոթքները և եղած աղանդներին հատուկ ամուսնության, կնունքի ու թաղման արարողությունները: Նրանք իրավունք չունեին ընտրվելու պատվավոր քաղաքացիներ և նշանակվելու հասարակական պաշտոններում, հատկապես այն համայնքներում, ուր կային ուղղափառներ: Իսկ զինվորական ծառայության կարող էին մեկնել միայն Անդրկովկասի զորամասերը:[2] Բացի հասարակական, բարոյական կարգի ստորացումից ու հալածանքներից, առավել մեծ վնաս էին տալիս տնտեսական պատժամիջոցների օրենքներն ու որոշումները, որոնց համաձայն, նրանք իրավունք չունեին վարձվել ուղղափառ կալվածատերերի կողմից և հակառակը. արգելվում էր գյուղական դասից քաղաքայինին անցնելը. հատկապես վնասակար էր այն օրենքը, որով նրանք զրկվում էին անձնագրեր ու արտոնագրեր ստանալուց. առանց դրանց չէին կարող մեկնել արտագնա աշխատանքի, առևտրի և այլն: Նրանց էլ ավելի մեկուսացնելու միտումով, արգելվում էր նոր հողեր գնել իրենց հողատարածքներից դուրս եղած վայրերից:[3] Նշված և չնշված սահմանափակումներն ու արգելքները աղանդավորներին դատապարտում էին աղքատության, անտանելի վիճակ ստեղծվեց մի քանի անգամ կրկնվող անբերրի տարիներից հետո: Այս բոլորը հուսահատեցրին ու լցրեցին ճորտ, աղանդավոր գյուղացիության համբերության բաժակը. էլ ավելի բորբոքվեց նրանց պայքարի ոգին ու սկիզբ առան սոցիալական շարժումները, որոնք մինչռեֆորմյան գյուղում կրում էին նաև հակաֆեոդալական պայքարի բնույթ: Դժգոհության արտահայտված փաստերից մեկն էլ արտագաղթն էր, որն ընթացավ նաև Կովկասի, Անդրկովկասի ուղղությամբ: Դա նաև բռնի արտագաղթ էր. Նիկոլայ 1-ի հրամանով Տամբովի նահանգի աղանդավորության պարագլուխ-ղեկավարներին, ոստիկանական պահակախմբի

---

[1] Долженко И., նշվ. աշխ., էջ 159, տողատակ N40 "Эти постановления подписанные монархом и имеющие силу закона, были обнародованы только в 1875г. в специальном издании"Собрание постановлений по части раскола", Տես Бонч-Бруевич В.Д., Изб-ие сочинение, т. I, Москва, 1959, ст 304.

[2] Памятная книжка Ериванской губерни на 1902г., ст. 56.

[3] Նշված օրենքների մասին տես վերը նշված "Сборник постановлений по части раскола", ст. 105.

խիստ հսկողությամբ աքսորեցին Անդրկովկաս, մինչ այդ էլ բանտարկյալների աքսորն այդ ուղղությամբ սովորական էր դարձել:

1830 թ. հոկտեմբերի 20-ի որոշմամբ,[1] պաշտոնապես առաջին անգամ աղանդավորներն իրավունք ստացան գաղթելու: «Մալական» կոչված գյուղացիության հավատը «նոր Երուսաղեմի» գոյության մասին նոր ուժ ու եռանդ տվեց նրանց, ինքնակամ հեռանալու հայրենի վայրերից. Կովկաս էին մեկնում մեծ խանդավառությամբ, հանդիսավոր էր նրանց երթը. բաց երկնքի տակ քայլում էին շարունակ, երգելով և պարելով. եռանդով ու հավատով լի աղոթում ու մրմնջում էին իրենց սաղմոսները և այլն:[2]

Անդրկովկասում նրանց բնակության առաջին վայրն էր Ղարաբաղը, Գանձակը: Վերջինիս բնակիչներն էին Դոնից եկած դուխաբորները և Տամբովի նահանգից՝ մալականները: Դուխաբորների աղանդը Ռուսաստանում սկզբնավորվել էր դեռևս 18-րդ դարի 2-րդ կեսին. այնտեղ էր թափանցել դրսից և հայտնի էին «կվակեր»-ներ և «անաբապտիստներ» անվանումներով:[3] Հիմնադիրներից էր Սավելիյ Կապուստինը. բացառիկ խելքի ու ընդունակությունների տեր այս մարդը, շուտով այնպիսի համբավ ու ազդեցություն ունեցավ, որ լրջորեն անհանգստացրեց ռուս ազնվականությանը և ուղղափառ հոգևոր դասին:[4]

Դուխաբորները հայտարարվեցին հերետիկոսներ և օրենքից դուրս: Ժամանակ առ ժամանակ նրանք խստորեն հալածվել են, այն սկսվել է տակավին 1773 թվից և շարունակվել 1793-1794, 1797-1800 թվականներին,[5] իսկ 1804 թ. դեկտեմբերի 16-ի ցարի հրահանգով, հատուկ որոշմամբ, նրանց ստիպեցին հեռանալ երկրի հեռավոր վայրերը:[6]

1830-ական թվականներին պետության կողմից պաշտոնապես կազմակերպվեց նրանց գաղթը Անդրկովկաս, ուր հիմնադրվեցին 18 դուխաբորյան գյուղեր. 8-ը՝ Ախալքալաքի, 4-ը՝ Ելիսավետպոլի գավառներում և 6-ը՝ Շորագյալի մարզում. դրանցում բնակչության ընդհանուր թիվը մոտ 12000 էր:[7]

Ռուսաստանի տեղական իշխանությունների կողմից աղանդավոր աքսորյալներին տրվում էին պաշտոնական անհրաժեշտ փաստաթղթեր՝ ռուսական իրենց համայնքներից ազատ լինելու մասին վկայական և պետական իշխանության համաձայնագիրը նրանց տեղափոխվելու համար:

---

[1] ПСЗРИ, т. V, N4010.
[2] Долженко И., նշվ. աշխ., էջ 24:
[3] Энциклопедический словарь, т . XI, СПБ, 1893, ст. 251-252.
[4] СМОМПК, вып. XXVII, от. II, ст. 26.
[5] Энциклопедический словарь, т . XI, СПБ, 1893, ст. 253.
[6] СМОМПК, вып. XXII, от. II, Тифлис, 1900, ст. 26.
[7] Նույնի էջ 28:

Չնայած պաշտոնական շրջանները և եկեղեցին օր առաջ ուզում էին ազատվել աղանդավորներից, այնուամենայնիվ, անհանգստացած էին նրանց ճակատագրով. «Դարաբաղի պրովինցիա են ուղարկված ռուս աղանդավոր ընտանիքներ, - գրում էր բարոն Ռոզենը գաղտնի խորհրդական Բլուդովին, - ես Կովկասի մարզի ղեկավարներին ... գրավոր զգուշացրել եմ ոչ մի տեղ չկանգնեցնել և ընդհանրապես չխանգարել աքսորականներին: Դատական գծով աքսորված հանցագործներին ուղեկցել մինչև Թիֆլիս, այնպես ինչպես բռնավորներին, իսկ ովքեր բնակեցվում են կամովին, ապա նրանց խումբ առ խումբ (250-300-ական մարդ) Ստավրոպոլից արագ տեղափոխել նախատեսված վայրերը»:[1] Ծրագրված էր նրանց բնակեցնել փոքր զանգվածներով, որպեսզի հետագայում վտանգավոր չդառնային: Փոխարքա Մ.Ս. Վորոնցովը հատուկ գրությամբ (8/06 1845, N557) հայտնել էր կոմս Կիսելյովին այն մասին, որ ինքն առայժմ համաձայն չէ՝ 1107 հոգուց բաղկացած, աղանդավորների խմբաքանակը վերաբնակեցնել Անդրկովկասում, քանի որ նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել և պայմաններ ստեղծել նրանց համար, որպեսզի խուսափել տհաճ պատահարներից ու դժվարություններից: Օրինակ, Ելիզավետպոլի գավառից հող է հատկացվել մալականներին, որոնք սկսել են այն մշակել. և հանկարծ իշխ. Օրբելիանին հայտնում է իր իրավունքի մասին՝ նշված հողերի նկատմամբ... Կամ, Մելիտոպոլից այնտեղ գնացած գաղթականներին, հատկացրել են անհարմար, խոպան հողեր, տրամադրված վայրերը, իրենց բնակլիմայական պայմաններով, վնասակար են և այլն:[2]

Ցարիզմն ազատվելով աղանդավորներից, ազատ շունչ քաշեց, սակայն շուտով սթափվեց, քանի որ Անդրկովկասի գաղութացման գործընթացում նրանք կարող էին լինել հիմք, հուսալի հենարան: Եվ ի տարբերություն1800-1830-ական թվականներին եղած դատապարտող, հալածական որոշումների ու օրենքների, ի պաշտպանություն նրանց հրապարակվեցին նորերը: Նախ՝ 1847թ. Պետական գույքի և ունեցվածքի մինիստրության՝ Թիֆլիսի համապատասխան գերատեսչության շ-կից ստեղծվեց «Ռուս վերաբնակիչների տեղավորման» հանձնաժողով, որը ղեկավարում էր նշված մինիստրության Կովկասյան լիազոր Ա.Ֆադեևը: Հանձնաժողովի գլխավոր խնդիրը պետք է լիներ Անդրկովկասում վերաբնակվող ռուսների առաջնակարգ կարիքները հոգալը՝ հատկացնել բնակելի հարմարավետ տարածքներ, ապահովել վարելահողերով և այլն:[3]

---

[1] АКАК, т. VIII, Тифлис, 1881, ст. 51 (Отношение Б.Розена к тайному советнику Блудову, от 6-ого июня, 1833г.).
[2] Նույնի, т. X, Тифлис, 1885, ст. 7.
[3] Долженко Н., նշվ. աշխ., էջ 29, տես ЦГИА Грузии, ф. 222, д. 12.

1848 թ. դեկտեմբերի 9-ի օրենքով, նրանց տրվեց հարկերից ազատվելու 8-10 տարվա արտոնություն, «իսկ կամովին Անդրկովկաս գաղթած և այնտեղ ուղղափառ դավանանքն ընդունած նախկին աղանդավորները պետական գանձարան մուծվող տուրքերից ազատվելու էին 26 տարով»:[1] 1852 թ. մեկ այլ օրենքով, նրանց թույլատրվեց գրանցվել Անդրկովկասի ցանկացած քաղաքում, բացի Թիֆլիսից: Վերաբնակների համար սահմանվեցին արտոնյալ այլ պայմաններ. տրվում էր դրամական փոխառություն ու վարկ, մատչելի տոկոսներով, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, անասուններ ձեռք բերելու և տնտեսական այլ կարիքները հոգալու համար: Մեկ շնչին հատկացվում էր 5-15 դեսյատին (հարմար և անհարմար) հող. մեկ ընտանիքին ընկնում էր 30-60 դեսյատին (նայած շնչերի քանակին):[2] Մինչ այդ, ռուսական կառավարությունը նրանց հատկացրել էր դրամական նպաստներ բնակարանների կառուցման համար. յուրաքանչյուր ընտանիքին 100-ական ռուբլի, եթե բնակավայրն անտառազուրկ էր, հակառակ դեպքում՝ 50 ռուբլի, իսկ ընտանիք չունեցողներին տրվում էր նշված գումարների կեսը: Նրանք, ովքեր կամովին էին եկել, նպաստներ չէին ստանում, անձամբ պետք է հոգային սեփական կարիքները:[3] Ստեղծված բարենպաստ պայմաններում գնալով մեծանում էր ռուսների թիվն Անդրկովկասում. այստեղ էին ծգտում ոչ միայն աղանդավորները, այլ նաև ուղղափառները: Ժամանակակիցների վկայությամբ, շատերը Ռուսաստանում դիտավորյալ դառնում էին հանցագործներ, որպեսզի դատապարտվեին ու աքսորվեին Անդրկովկաս:[4]

19-րդ դ. սկզբին, սկսված վերաբնակեցման այս գործընթացը շարունակվեց դարի ողջ ընթացքում: Ղարաբաղում (Արցախ), Ելիզավետպոլի (Գանձակ) մարզում, հետագայում նաև՝ նահանգում, նույնպես հիմնավորվեցին ռուսներ:

Նշված դուխաբորյան գյուղերն այստեղ հիմնվել են 1840-ականներին: Նրանց «Սլավյանկա» կոչված գյուղը հիմնադրվեց հայկական հնագույն բնակավայրերից մեկի տարածքում: Իսկ 1847թ. Ախալքալաքից դուխաբորների մի մասի այստեղ տեղափոխվելուց հետո, կազմակերպվեցին մյուս երեք՝ Նովո-Գարելոյե, Նովո-Տրոիցկոյե, Նովո-Սպասկոյե գյուղերը. նշված անունները նախկին բնակավայրերի (ռուսական) անվանումներն էին:[5] Սլավոնական այս 4 գյուղերից կազմված համայնքը, գտնվում էր Ելիզավետպոլ քաղաքից 75 մղոն հեռավորության վրա, մեկը մյուսի հարևանությամբ և իրենց արտաքին տեսքով, բնակարանների ու

---

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 223: Տես՝ ПСЗРИ, т. XXXVI, 1859, N34324.
[2] Նշված բարեփոխումներն ամրագրված են ПСЗРИ, т. XXII, 1848, N22806, т. XXVII, 1852, N26227 և այլն: Տես նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ.125, ց.1, գ.51, թ.60, գ.107, թ.4:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.125, ց.1, գ.51, թ.42:
[4] Նույն տեղում, թ.44:
[5] СМОМПК, вып. XXVII, ч. II, ст. 10.

փողոցների կառույցներով ու դիրքով նման էին միմյանց. մեծ մասամբ մեկ հարկանի տներ, կից մեծ բակերով, որոնցում զետեղված էին տնտեսությունների օժանդակ կառույցներ: Նշված գյուղերում դուխաբոր ռուս ազգաբնակչության թիվը 2969 (երկսեռ) մարդ էր և որոնց տնտեսությունները զբաղեցնում էին 16268 դես. 528 սաժեն (հարմար ու անհարմար) հողեր:[1]

1886թ. Ելիսավետպոլի նահանգում կար 14 ռուսական գյուղ. 8-ը՝ Ելիզավետպոլի, 1-ը՝ Ջեբրաիլի, 1-ը՝ Զանգեզուրի, 3-ը՝ Ղազախի և 1-ը Շուշի գավառներում: Ռուսների թիվը կազմում էր նահանգի բնակչության 1,1%-ը:[2] Այդ գյուղերի թիվը հետագայում ավելացավ. 1898-1900 թթ. Կուրսկի մարզից այստեղ գաղթեց 84 ընտանիք, որից 48-ը հաստատվեց Տերտեր, իսկ 36-ը՝ Ջան-Յաթաղ հայկական գյուղերի մերձակայքում. վերջինս վերանվանվեց Սերգիևսկ: Նոր բնակիչներով լրացվեցին նաև Զանգեզուր գավառի Բազարչայ և Ղազախի Նոր Դիլիջան, Միխայելովկա ռուսական գյուղերը:[3] Հատկապես հայ գյուղացիությանը բոլորովին ծեռնտու չէր այն, որ ռուսական բնակավայրերը կազմավորվում էին իրենց հարևանությամբ, որովհետև նրանց մշակելի հողային հատկացումները կատարվում էին նաև հայկական գյուղերի վարելահողերի հաշվին. «Զանգեզուրի սակավահող Անգեղակոթ և մի շարք այլ հայկական գյուղերի հողատարածությունների հաշվին հիմնվեցին Բազարչայ և Բորիսովկա ռուսաբնակ գյուղերը. իսկ Զարխէջի և հարևան մյուս հայ համայնքների հաշվին՝ նոր Դիլիջան ու Գոլովինո գյուղերը:[4] Բացի դրանից «ցարիզմը տեղական գյուղացիության հաշվին չէր հապաղում խոշոր հողային տարածություններ տալ ռուսական ազնվականության ներկայացուցիչներին՝ ամենաչնչին վարձագնով, նպատակ ունենալով այդ միջոցով էլ ուժեղացնել այստեղ ռուսական տարրը, ինչպես այդ արվում էր նաև Անդրկովկասում ռուսական գյուղեր հաստատելու քաղաքականությամբ»:[5] Ցարական կառավարությունը ոչ միայն այս, այլ ընդհանրապես բոլոր հարցերում նեցուկ էր այստեղի ռուս բնակչությանը. ժամանակ առ ժամանակ նրանց տրամադրվում էր նյութական ու բարոյական օգնություն: Պահնորդական, ոստիկանական զինված ջոկատները հատուկ ուշադրությամբ էին հետևում իրենց հայրենակիցների պաշտպանվածությանը. պետության կողմից անվճար տրվում էր շինափայտ, վառելափայտ. վատազույն դեպքում վճարում էին դրանց արժեքի 10%-ը; 1908թ. ցարի հրամանով

---

[1] СМОМПК, вып. XXVII, ч. II, ст. 10-11.
[2] Свод статистических данных... за 1886г., ст V.
[3] Науменко Е., նշվ. աշխ., ст. 314.
[4] Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 225:
[5] Ռշտունի Վ., նշվ. աշխ , , մաս Ա, էջ 233:

Ելիզավետպոլի նահանգի ռուս բնակիչներին անվճար հատկացվեց մեծ քանակությամբ շինափայտ, վերականգնելու համար այն կառույցները, որոնք տուժել, քանդվել էին 1905-1906թթ. հայ թաթարական հայտնի ընդհարումների ժամանակ 328625 գերան և այլ շինափայտեր, ինչպես նաև 26290 քառ. սաժեն վառելափայտ և այլ օգնություններ:[1] Ցավալին այն էր, որ կառավարության կողմից անուշադրության էին մատնվում հայ ժողովրդի կրած տնտեսական ու քաղաքական տառապանքները, մարդկային ու նյութական կորուստները:

Նահանգի քաղաքներից ռուսներով բնակեցված էր Ելիսավետպոլը. 1865թ. տվյալներով,[2] այստեղ էին գործուղված եկեղեցու չորս հոգևորական և 15 պետական պաշտոնյաներ իրենց ընտանիքներով հանդերձ: Համեմատաբար մեծ թիվ էր կազմում զինվորականների՝ 279 մարդուց բաղկացած, հաշմանդամների հանձնախումբը, որի մեջ մտնում էին պաշտոնաթող սպաներ (ընտանիքներով), Դոնի կազակներ, պարեկային ծառայողներ, օրավարձու ծառաներ, բանվորներ, արհեստավորներ և այլն: Նրանց մեծ մասը քաղաքի ժամանակավոր բնակիչներ էին, իսկ մշտականները հիմնականում ապրում էին երկաթուղու կայարանամերձ թաղամասում, որը հայտնի էր «поселок» անվամբ: 1886թ. նրանց թիվը կազմում էր 131 (երկսեռ) մարդ:[3] Աշխատունակների գերակշիռ մասը երկաթուղու ծառայողներ էին: Իսկ գյուղաբնակ ռուսների մեծ մասը վերաբնակեցված մալական, անաբապտիստ, դուխաբոր, պրիգուն, սուբոտնիկ, իկոնորոր, ստարոոբրյադ, կոչվածներն էին, որոնց մեկ բառով անվանում էին «раскольники» աղանդավորներ: Նշված խմբավորումները չնայած հետևում էին իրենց աղանդի ծեսերին ու սովորություններին, սակայն ժամանակի ընթացքում նրանց պաշտամունքի ոգին աստիճանաբար թուլանում էր, հատկապես երիտասարդության մոտ, և հակվում էին ուղղափառությանը:[4]

19-րդ դ. վերջին Ելիզավետպոլի նահանգում ռուս բնակչության թիվը մոտ 10000 էր. այն ավելին կլիներ, եթե դուխաբորների 105 ծուխ, թվով 1333 մարդ[5] չգաղթեր Ամերիկա՝ Կանադա, որի հետևանքով դադարեցին գոյություն ունենալուց Ելիզավետպոլի գավառի դուխաբորյան հիշյալ չորս գյուղերը: Հեռանում էին նաև ժամանակավոր բնակիչները, մեկնում էին իրենց ռուսական ծննդավայրերը: Իհարկե, նրանց պակասը մասամբ լրացվում էր նորերով: Եղած տվյալները ցույց են

[1] Обзор Елисаветпольской губернии за 1908, ст. 4.
[2] Сборник ст-их св-ий о Кавказе, т. I, ст. 81-82.
[3] Լալայան Ե., Երկեր, հ.2, Երևան, 1988, էջ 289:
[4] Науменко Е, նշվ. աշխ., էջ 315:
[5] Նույն տեղում:

տալիս, որ նրանց թիվը, այնուամենայնիվ, աճում էր: 1890 թ. տվյալներով,[1] նահանգում կար ռուսական 1280 ծուխ, 4236 արական և 3853 իգական, ընդամենը 8089 մարդ: 1902թ. մարդահամարի տվյալներով, այն կազմում էր նահանգի բնակչության 2,2%-ը:[2] 1880-ական թվականների համեմատությամբ (1,1%), այն կրկնապատկվել էր: Նկատի ունենալով, որ 1900թ. Անդրկովկասում եղել է մոտ 130000 ռուս բնակիչ, որը կազմում էր նրա բնակչության (4702889) մոտ 3%-ը,[3] նշանակում է, որ Ելիսավետպոլի նահանգում նրանց թիվը նույնպես, զուգահեռաբար, աճում էր: Այստեղ ռուսների բնակեցման գործընթացը շարունակվում էր նաև 20-րդ դ. սկզբներին. 1905թ. վերականգնված Կովկասի փոխարքայությանն ուղղված կառավարական պաշտոնական գրություններից մեկում հատուկ նշված էր, որ փոխարքայի քաղաքականության առաջնակարգ խնդիրը եղել և մնում է երկրամասը ռուսներով բնակեցնելու չընդհատվող գործընթացը: 1908-1912 թթ. հինգ տարվա տվյալներով, ռուս նոր վերաբնակիչների թիվը կազմում էր 8326ս ծուխ, 27895 մարդ, որից 935 ծուխ, 2987[4] մարդ՝ Ելիսավետպոլի նահանգում. այստեղ նախատեսվող նոր ծրագրերն իրականացնելու միտումով հատկացվել էր 43 տեղամաս (բնակելի)՝ 71000 դես. հողատարածությամբ, սակայն բնակեցվեց միայն 12-ը:[5] Կային խանգարիչ հանգամանքներ, որոնք ձախողում էին նախատեսված պլանները. լքվում էին արդեն հունի մեջ ընկած ռուսական գյուղերը. պատճառը կլիմայական անբարենպաստ ամռան շոգ եղանակները և թաթարների չալթուկի (բրնձի) ցանքսերի հարևանությունն էին, որոնք առաջացնում էին տարբեր հիվանդություններ՝ դողերոցք (մալարիա), դեղնախտ, արևահարություն և այլն: Տուժում էին նաև այստեղ տեղակայված ռուսական զորամասերը. «Երկուս ու կես տարվա ընթացքում հիվանդություններից մահացել է 800 զինծառայող ու աշխատող», գրված է ներքոհիշյալ գրության մեջ:[6] Այն վերաբերվում էր Մեղրիի սահմանապահ գումարտակին: Բացի դրանից, ռուսներն այստեղ թաթարների հետ անվերջ պայքարի մեջ էին ոռոգման ջրի հարցում. սակայն ամենամեծ չարիքը քոչվորների հանկարծահաս հարձակումներն էին, որոնք ուղեկցվում էին թալանով, կողոպուտով, սպանություններով ... «Ելիզավետպոլի նահանգի Օլովկա-Դենիսովկա գյուղից ռուսները տեղահանվեցին

---

[1] Свод статистических данных о населении Кавказского края, Тифлис, 1893, ст. VI.
[2] Канадеев И., Очерки Закавказской жизни, т. I, СПБ, 1902, ст. 145.
[3] Նույն տեղում:
[4] Обзор переселенческого дела на Кавказе (за пятилетия 1908-1912), Переселенческое управление – Главное управления землеустройства и земледелия, СПБ, 1913, ст. 2-6.
[5] Воронцов-Дашков И., նշվ. հաշվետվությունը, էջ 70-71:
[6] АКАК, т. V, Тифлис, 1873, ст. 739 (Донесение ген. Ртищева г-ну. Румянцеву, от 19-ого ноября, 1813г.).

թաթար քոչվորների հարձակումների ու թալանի պատճառով. ընթացքում սպանվեց գյուղի հոգևոր առաջնորդը: Նույնատիպ երևույթներ արձանագրվեցին նաև Ֆրեզևսկի, Սկոբելևսկի, Նիկոլաևսկի և ռուսական այլ բնակավայրերում»:[1] Նշված պատճառներից դրդված «Գանձակի և Շամախու նահանգների մի շարք գյուղերի ռուս վերաբնակները, չդիմանալով տեղի կլիմայական պայմաններին և թաթարների, մեղմ ասած, անբարեհամբույր վերաբերմունքին, դիմել էին խնդրանքով տեղափոխվելու Ալեքսանդրապոլի գավառ»:[2]

Չնայած նշված դժվարություններին, այնուամենայնիվ, նրանց բնակավայրերը նահանգում, և ընդհանրապես Անդրկովկասում, հիմնականում պահպանվում էին ու ընդարձակվում ռուսական ցարիզմի ու տեղական իշխանությունների հովանավորմամբ ու պաշտպանությամբ:

Ելիզավետպոլի նահանգի ռուս վերաբնակների մեծ մասը պետական գյուղացիներ էին. զբաղված էին երկրագործությամբ, անասնապահությամբ. ապրում էին ներփակ կյանքով, չէին առնչվում շրջակա հարևանների հետ: Գյուղատնտեսական աշխատանքներին զուգահեռ, որպես կողմնակի եկամտաբեր աշխատանք զբաղված էին բեռնափոխադրումներով: 1865թ. Ելիզավետպոլի գավառում կար 101 սայլապան ու կառապան:[3] Այն շատ անհրաժեշտ էր լեռնահանույթային արտադրության մեջ. հանքանյութերի տեղից տեղ փոխադրումը այդ արտադրության կարևորագույն օղակներից մեկն էր, որը կատարվում էր տեղի սայլապանների և գրաստային փոխադրամիջոցներով: Կապանից մինչև Եվլախի երկաթուղային կայարանը (250կմ) պղինձը փոխադրում էին բեռնակառքերով (ֆուրգոն) և ուղտերով. մինչև Թիֆլիս մեկ փթի ուղեվարձը կազմում էր 60 կոպ. – 1 ռուբ. 20 կոպ. (ըստ տարվա եղանակի):[4] 1893թ. տվյալներով, Երևան-Աղստաֆա խճուղային ճանապարհով երթևեկել են 4267 ֆուրգոն, 350 սահնակ, 3443 սայլ, 3900 ուղտ. բոլորը միասին փոխադրել են (Երևանից) 516000 փութ բեռ, իսկ հակառակ ուղղությամբ՝ 4523 ֆուրգոն, 286 սահնակ, 1947 սայլ, 4490 ուղտ և որոնք փոխադրել են 628800 փութ:[5] Նշված փոխադրամիջոցների, հատկապես ֆուրգոնների ու սահնակների, մեծ մասը պատկանում էին Ղազախի և Ելիզավետպոլի գավառների ռուս բնակիչներին: Դարավերջին և 20-րդ դ. սկզբին այդ զբաղմունքը նկատելիորեն նվազեց, կապված Անդրկովկասում երկաթուղային ճանապարհների շահագործման հետ, բայց չվերացավ, քանի որ երկաթուղային ցանցը

---

[1] Ворошцов-Дашков И., նշվ. հաշվետվությունը, էջ 74:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.133, ց.1, գործ 329, թ.360-61:
[3] Сборник стат-их сведений о Кавказе, т. I, ст. 80.
[4] Առաքելյան Գ., Արևելյան Հայաստանի արդյունագործությունը 19-րդ դ. 2-րդ կեսին, Երևան, 1990, էջ 72-73:
[5] Район Тифлисско-Карско-Эриванской железной дороги…, ст. 450.

Անդրկովկասում անբավարար էր:[1] Նահանգի, մեծ թե փոքր, փոստային ուղիների վրա ծառայում էին ռուսները: Նրանք զբաղվում էին նաև արհեստագործությամբ. կառքերի, բեռնակառքերի, սայլերի, տակառների ու փայտամշակման այլ արտադրատեսակների հմուտ վարպետներ էին: Հատկապես կահույքագործությունը շատ մեծ սպառում ուներ ներքին ու արտաքին շուկաներում: Նրանք զբաղված էին նաև դարբնությամբ, գինեգործությամբ, կոշկակարությամբ և արդյունագործական այլ ճյուղերով. նշանավոր էին նրանց կաթնամշակման և գյուղատնտեսական այլ մթերքների արտադրանքները:[2]

Ընդհանուր գծերով այսպիսին էր ռուսական համայնքը Ելիզավետպոլի նահանգում:

---

[1] «Մուրճ» ամսագիր, 1901, թիվ 10, էջ 47:

[2] Шадинов Г., Промышленное значение молочного хозяйства в Закавказе, Тифлис, 1911, ст. 1-4.

## Գերմանացիներ

1818-1820-ական թվականներին Անդրկովկասում բնակություն հաստատեցին նաև գերմանացիները:

Դարասկզբին Գերմանիայի Վյուրտեմբերգյան թագավորության մեջ հայտնվեցին կրոնավոր աղանդավորներ, որոնք հավատում էին սուրբ հոգու հայտնվելուն և նրա հետ էին կապում աշխարհի և մարդկության փրկության հույսն ու ապավենը: Տեղի իշխանությունները և հատկապես կաթոլիկ եկեղեցին, անողոք պայքար սկսեցին նրանց դեմ, ընդհուպ մինչև երկրից վտարումը: Նրանցից շատերը գերադասեցին թողնել հայրենիքը, և շարժման առաջնորդները դիմեցին Ռուսաստանի կառավարությանը, որպեսզի նա հովանավորի և ապահովի իրենց կազմակերպված գաղթը ռուսական սահմաններ: Ստանալով դրական պատասխան, 1817թ. 1440 ընտանիք թողեց Վյուրտեմբերգի սահմանները: Դանուբ գետով հասան Մոլդովա և ցամաքով ուղևորվեցին դեպի Օդեսա քաղաքը: Այս ընթացքում չդիմանալով ճանապարհի դժվարություններին 1100 գերմանացի մահացավ: Մնացածներից 300 ընտանիք Խերսոնի նահանգում հիմնեցին իրենց առաջին գաղութը Ռուսաստանում: Իսկ թվով մոտ 500 ընտանիք 1818 թ. մեկնեց Կովկասի ուղղությամբ:[1] Գաղթի ընթացքում ռուսական կառավարությունը մշտապես հոգ էր տանում նրանց դժվարությունները (նյութական, ֆիզիկական, բարոյական) հաղթահարելու ուղղությամբ: Օգնության կարգով յուրաքանչյուր ընտանիքին տրվեց 145 ռուբ. 85,5 կոպ. արծաթ՝ ձեռք բերելու ձիեր, սայլեր, կառքեր. յուրաքանչյուրին (անձ) տրվում էր 11,5 կոպ. օրապահիկ, իսկ ընտանիքներին լրացուցիչ հատկացվեց օրական ևս 57-ական կոպ. արծաթ՝ ձիերի ու բեռնակառքերի առօրյա հոգսերը հոգալուն: Նրանց խմբերն ուղեկցվում էին պետական զինվորական և ոստիկանական հսկողությամբ:[2] Կառավարական որոշմամբ 40 ընտանիք (հիմնականում արհեստավորներ) մնացին Թիֆլիսին մոտ գյուղերից մեկում, որը կոչվեց Նոր Թիֆլիս:[3] Մնացածներն ուղևորվեցին Գանձակի և Շամխորի ուղղությամբ: Ճանապարհներին կրած ահռելի դժվարությունները, ճակատագրի անորոշությունն ու նման այլ հանգամանքներ վիատեցրել էին նրանց:[4] Այդ հուսահատության ու ծանր հոգեվիճակում սփոփիչ ազդեցություն

---

[1] СМОМПК, вып. XXIX, от. I, ч. II, ст. 1-3.
[2] АКАК т. VII, ст. 198-199.
[3] Նոր Թիֆլիսն աստիճանաբար միացավ քաղաքին և այդ տարածքը հետագայում վերածվեց «Միխայելովյան» կոչված պողոտայի:
[4] Обозрение Российских владений за Кавказом, ч. I, ст. 303-304.

ունեցավ տեղի (Գանձակ) հայ համայնքի կարեկցական վերաբերմունքը, նրանց տրամադրելով ժամանակավոր կացարաններ, սնունդ, կենցաղային իրեր և այլն: Նրանց մարդկային վարմունքն աննկատ չմնաց. Կովկասի կառավարիչ, ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ա.Պ. Երմոլովը 1819թ. փետրվարի 3-ի Վրաստանի նահանգապետ, գեներալ-մայոր Հավենից ստացած գրությունից տեղեկացավ, որ Ելիզաբետպոլի հայերը սիրով ու բարեկամաբար ընդունեցին Վյուրտեմբերգի աղանդավոր գերմանացիներին... «Եվ ես, - գրում է Երմոլովը, - այս գրության միջոցով շատ մեծ բավականությամբ Ելիզավետպոլի հայկական համայնքին հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը, նրանց կատարած մարդկային գովելի վարմունքի համար և հավատացած եմ, որ նրանք իրենց բարի վարքագծով և կատարվելիք նոր ու լավ գործերով, դեռ շատ անգամ կգրավեն վերին ատյանի ուշադրությունը»:[1]

Գերմանացի վերաբնակիչների 455 գերդաստանից 194-ը հաստատվեց Գանձակում (Ելիզավետպոլ):[2] Անդրկովկասում նրանց հիմնական գաղութների թիվը 7-ն էր, 5-ը՝ Թիֆլիսի նահանգում, 2-ը՝ Ելիզավետպոլի ու Շամխորի գավառներում: Վերջիններս մոտ էին միմյանց: Ռուսական կառավարությունը դրամական միջոցներ հատկացրեց նրանց բնակարաններ, եկեղեցիներ կառուցելու համար: Երկու տարի շարունակ նրանց հատկացվեց (1 մարդուն) 10-ական կոպեկ օրապահիկ. այդ ծախսերի ընդհանուր գումարը կազմել էր 211604 ռուբ. 98 կոպ.:[3] Տասը տարով նրանք ազատվեցին բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից:

Շամխոր գետի աջ ափին փռված հարթավայրային տարածքում հաստատված գերմանացիները իրենց բնակավայրը, ի պատիվ նիդերլանդների թագուհի Աննա Պավլովնայի, այն կոչեցին Աննենֆելդ, ուր սկզբնապես բնակություն հաստատեց 84 ընտանիք: Նույն 1819թ. Գանձակի կամ Ելիսավետպոլի գավառում, համանուն գետի (Գանձակ) աջ ափին Խանախլար կոչված վայրում հիմնվեց նրանց մյուս գաղութը. այն էլ ի պատիվ Մեկլենբուրգ-Շվերինայի Մեծ հերցոգուհու՝ Հելենե Պավլովնայի, կոչեցին Հելենեդորֆ (Ելենեդորֆ), ուր հիմնավորվեց 127 ընտանիք:[4] Չնայած նշված ուշադրությանն ու հոգատարությանը, գերմանացիները կրեցին ահավոր նեղություններ, ունեցան մարդկային ու նյութական շատ կորուստներ: 1820թ., դեռ հազիվ հիմնավորված Ելենեդորֆը ենթարկվեց տեղաբնակ հարևան թաթարների հարձակումներին: Գաղութը թալանվեց ու կողոպտվեց և հայտնվեց ծայրահեղ աղքատության ճիրաններում:

---

[1] ՀՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ.57, ց.2, գ.4, թ.1:
[2] «Ազգագրական հանդես», Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 232 /Եր. Լալայան, Գանձակի գավառ/ :
[3] СМОМПК, вып. XXIX,отд. I, ч. II, ст. 2 .
[4] АКАК, т. VII, ст. 197.

Կառավարության կողմից նշանակված ստուգող հանձնաժողովի տվյալներով, նյութական վնասը հասնում էր 80000 ռուբլու: Ռուսական կառավարությունը յուրաքանչյուր ընտանիքին նորից հատկացրեց 172 ռուբ.[1] նպաստ-օգնություն:

Ողբերգական եղավ պարսկական զորաբանակի՝ Աբբաս Միրզայի 1826 թ. արշավանքն այս տարածաշրջանում. «...առան Գանձակը, ավերեցին Ելենենդորֆ և Աննենֆելդ գաղութները», վերջիններիս բնակիչները փախչելով Թիֆլիս, փրկվեցին ֆիզիկական բնաջնջումից. «միայն գույքերը կորցրին», իսկ Ելենենդորֆի գերմանացիները կարողացան «ազատել իրենց կյանքը միայն հայերի օգնությամբ, թաքնվելով նրանց տներում, հենց Գանձակի մեջ»:[2]

Նշված դժբախտություններին հաջորդեց 1829թ. բռնկված սիբիրյան ախտ վարակիչ հիվանդությունը, իսկ մեկ տարի անց՝ ժանտախտի համաճարակը...[3] դժվար չէ պատկերացնել հետևանքները. ահավոր փորձությունների ենթարկվեց տարածաշրջանի ողջ բնակչությունը, այդ թվում նաև գերմանացի գաղթականները: 1819թ. հիմնավորված Աննենֆելդում 84 ընտանիքից 413 (197 արական. և 216 իգական) մարդ, մինչև 1829 թիվը 10 տարվա ընթացքում, ծնվել էր ընդամենը 115 մարդ (երկսեռ). այդ ընթացքում նոր բնակիչների թիվը կազմում էր 36 մարդ: Բոլորը միասին ստացվեց 564, որից 12-ը կամովին հեռացել էր գաղութից, մնացած 552-ից մահացել էր 408-ը և տաս տարի հետո՝ 1829 թ. դեկտեմբեր ամսին այնտեղ կար ընդամենը 144 մարդ,[4] իսկ 1880 թվին հիշյալ 84 ընտանիքից մնացել էր 48-ը:[5] Այս նվազումը բացատրվում էր նաև բնակլիմայական անբարենպաստ պայմաններից առաջացած հիվանդություններով: 1873թ. միայն հնարավոր եղավ Աննենֆելդի գաղութը տեղափոխել դեպի հյուսիս՝ 8 մղոն հեռավորության վրա գտնվող վայրը, որն ուներ առողջարար օդ, ջուր և մշակելի լավ հողեր: Նրանց դարձյալ տրամադրվեց 6000 ռուբ. նպաստ և շինանյութ, նոր Աննենֆելդում տներ կառուցելու, տնտեսություններ ստեղծելու համար: Եվ 1890թ. տվյալներով այստեղ արդեն կար 116 ծուխ՝ 97-ը գերմանացի (201 արական, 236 իգական), 16 հայ, 1 ռուս, 1 վրացի և 1 պարսիկ ընտանիքներ:[6]

Չնայած նշված դժվարություններին ու խոչընդոտներին, հիշյալ գաղութները կարողացան հաղթահարել այն և շնորհիվ իրենց աշխատասիրության ու քաղաքակրթության, ժամանակի ընթացքում «ծառաների վիճակից վերածվեցին

---

[1] СМОМПК, вып. XXIX,от. I, ч. II, ст. 3.
[2] Ալեքսանդր Դ. Երիցեանց, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա /1800-1832/, Թիֆլիս, 1894, էջ 236:
[3] СМОМПК, վերը նշված, էջ 4:
[4] Նույն տեղում:
[5] «Նոր դար», 1890, թիվ 119, էջ 2:
[6] «Ազգ. հանդես», գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 232:

հարուստ մենատնտեսների...»:[1] Գաղութների կյանքը աստիճանաբար մտավ իր հունի մեջ, այն հատկապես նկատելի էր Ելենենդորֆում, որն իր բարեկեցությամբ և արտաքին տեսքով առաջինն էր տարածաշրջանում: Ելենենդորֆը գտնվում էր Գանձակի գավառում, նույնանուն քաղաքից 7 մղոն հեռավորության վրա, քառանկյուն հարթ տարածքում, որի երկարությունը 450, իսկ լայնությունը 150 սաժեն՝ 37500 քառ. սաժ. ընդհանուր տարածությամբ: Այս գաղութ-քաղաքը բաղկացած էր ուղղահայաց հինգ փողոցից և մի քանի նրբանցքներից. «Ողղագիծ, լայն և շար ի շար են փողոցներն, որոնց աջ ու ձախ եզերքներով շինուած են բնակարաններն և շարակարգ տնկուած են կաղամախի, սօսի և բարտի ծառեր, որոնց գեղեցկութիւնն առանձին փայլ է տալիս գիւղաքաղաքին»:[2] Կենտրոնում հրապարակն էր մեկ քառ. դեսյատին (1 քառ. դես. = 1,09 հեկտար), որի մեջտեղում բարձրանում էր 1854 թ. կառուցված քաղաքային եկեղեցին: Նրա աշտարակի բարձրությունը մոտ 30 մետրէր, որի վրա տեղադրված էր հսկա մի ժամացույց, որը երեք կողմից տեսանելի էր: Սույն հրապարակը գաղութի հասարակության հոգևոր, վարչական և առևտրական կենտրոնն էր. այստեղ էին զետեղված հասարակական կառույցները՝ համայնքի վարչության շենքը, կրպակներ, ճաշարան, հացի փուռ, պահեստներ, ինչպես նաև եկեղեցուն ու համայնքին ծառայող ու սպասարկող անձանց բնակարանները, հիմնարկությունները և ուսումնարանը: Հրապարակին կից գործում էր հատուկ կառուցված ջրատարը, որով ջրում էին նաև հրապարակը զարդարող հսկայական, արծաթափայլ բարդիները և շրջակա բուսականությունը: Փողոցների երկու կողմերում կառուցված էին բնակելի քարաշեն՝ թվով 380 տուն, որից 15-ը երկհարկանի ... դրանց ներքին ու արտաքին հարդարանքն ու ձևավորումը կատարված էին եվրոպական ձևերով ու ճաշակով: Փողոցների երկու կողմերում աճեցնում էին տարբեր տեսակի դեկորատիվ ծառեր ու զարդաբույսեր: Քարհանքից բերված, տաշված քարերով երեսապատում էին փողոցների մայթերը և ասֆալտապատում ճանապարհները, որոնք միշտ բարեկարգ, մաքուր ու բարետես էին: Գերմանացիները իրենց ապրելաձևով, կենցաղով, տիպիկ եվրոպացիներ էին՝ կանացի պարզ ու գեղեցիկ հագուստներով և տղամարդիկ իրենց ավանդական կոստյումներով ... սիրում էին ազգային, դասական երաժշտություն, ունեին երաժշտական տարբեր գործիքներ: Ելենենդորֆում կար 10 դաշնամուր. ավելին, համայնքն ուներ նվագախումբ և երգչախումբ, որոնք գործում էին սիրողական հիմունքներով: Հաճախ կազմակերպվում էին թատերական երեկոներ՝

[1] Նույնի, էջ 233:
[2] Բարխուտարեանց Մ., Արցախ, Թիֆլիս, 1895, էջ 54-55:

ընթերցումներ, ասմունք և դիտում՝ փոքրիկ ներկայացումներ: Գործում էր օրինակելի ուսումնարան, որտեղ սովորում էին նաև ռուսաց լեզուն:[1]

Գաղութին վերաբերվող բոլոր հարցերով մտահոգվում ու զբաղվում էր համայնքի կողմից ընտրված ժողովը, որի անդամների թիվն անցնում էր 50-ից. այստեղ քննարկվում, ընդունվում էին համայնքին վերաբերող համապատասխան որոշումներ: Ընտրության միջոցով, ձայների մեծամասնությամբ, երկու տարի ժամանակով ընտրվում էր գաղութի ավագը, որին «շուլց» էին կոչում: Նույն կարգով ընտրվում էին նրա երկու օգնականները: Եղած վեճերը և բողոքները լսվում ու վճռվում էին տեղում, միայն ծայրահեղ դեպքում դիմում էին դատարան: Համայնքի բյուջեն առաջանում էր անդամավճարներից, մշտական օգուտներից, վարձակալության վճարումներից և այլն:[2] Ժողովին կից գործում էր 300 հատոր գրքից բաղկացած գրադարան: Ստանում էին 12 անուն թերթ, ամսագիր գերմաներեն ու ռուսերեն լեզուներով: Բացի դրանից, 1870 թվից այստեղ գործում էր նաև հասարակական գրադարան, որից օգտվողները տարեկան վճարում էին 50 կոպ. անդամավճար (հօգուտ ընդհանուր բյուջեի): 1888 թվից այստեղ գործում էր դեղատուն, իսկ 1890-ից՝ փոստ-հեռագրատուն: Հավատքով լութերական-բողոքականներ էին, խստորեն հետևում էին իրենց ծեսերին ու սովորություններին:[3] 1887 թվից այստեղ էր տեղակայված ռուսական կազակային գունդը իր շտաբով: Ելիզավետպոլի նահանգ գործուղված ռուս աստիճանավոր Ե. Նաումենկոն նշում էր. «Ռուսական բանակի տեղավորման համար առավել նպաստավոր պայմաններով աչքի են ընկնում գերմանական և ռուսական գյուղերը, հատկապես գերմանականը, որոնք կարծես գողտրիկ փոքրիկ քաղաքներ են»:[4] Իսկ մեկ այլ հեղինակի մոտ կարդում ենք. «Երբեմնի քրիստոնյա այս երկիրը վերածվելով մահմեդականի, շատ բան փոխվեց, դեպի վատը ... և աղանդավորների հիմնած այս բնակավայրերը կարծես ծաղկուն օազիսներ են անապատում»:[5]

Ելենենդորֆի գաղութն իր տրամադրության տակ ուներ 7934 դես. 325 քառ. սաժեն, որից մշակելին 4906 դես. 1539 քառ. սաժեն էր, իսկ խոպան-անհարմար հողերը՝ 2982 դես. 1213 քառ. սաժեն, տներին կից հողամասերի ընդհանուր քանակը՝ 30 դեսյատին:[6] Բնակիչները, հիմնականում, զբաղված էին խաղողագործությամբ, գինեգործությամբ, աճեցնում էին 6 տեսակի խաղող: Տեղի

---

[1] СМОМПК, вып. XXIX,от. I, ч. II, ст. 15.
[2] Նույնի, էջ 16:
[3] Նույնի, էջ 17-19:
[4] Науменко Е., նշվ. աշխ., էջ 286:
[5] "Кавказ", за 1863-65 годы, ст. 42 (Мевес, очерки, Елис-ого уезда).
[6] СМОМПК, вып. XXIX,от. I, ч. II, ст. 15. (1 դեսյատինը = 1,09 հեկտարի, իսկ սաժենը 2,134 մետրի

մյուս բնակիչների համեմատությամբ, ավելի վաղ սկսեցին կիրառել խաղողի ճզմիչ մեխանիկական սարքեր. ստացված գինին պահեստավորում էին իրենց տների ներքնահարկում կառուցված հարմարավետ նկուղ-մառաններում: Յուրաքանչյուր մենատնտես տարեկան ստանում էր 1500, իսկ ոմանք նաև՝ 2000-5000 դույլ և ավելի գինի: Խաղողի մնացորդներից ստանում էին օղի, սպիրտ:

19-րդ դ. վերջում գերմանացի երկու ձեռներեցներ զբաղված էին նաև կոնյակի արտադրությամբ. գործում էին գարեջրի՝ տարեկան 20 հազար դույլ, արհեստական ու հանքային ջրերի 60000 շիշ արտադրող գործարաններ:[1]

Մեծ հռչակ ուներ ֆորերի ոգելից խմիչքների արտադրանքները, որոնք հաջողությամբ սպառվում էին նաև Թիֆլիսում, Ս. Պետերբուրգում, Լեհաստանում և այլուր:[2]

Բացի խաղողի այգիներից, «... գերմանացիներն ունեն առանձին խնամքով մշակված այգի, կարգ ու սարքով ցանուած բանջարանոց, կով, եզն, ձի, հնդկահաւ, սագ, բադ, հաւ և աղաւնի: Այս պատճառաւ Գանձակն համարեայ թէ տարուան ամեն եղանակներում ունենում է թարմ կանաչի, կաթ, կարագ, սեր և իւղ»:[3] Նրանք նաև հմուտ արհեստավորներ էին՝ դարբին, հյուսն, դերձակ, կոշկակար և այլն: Սակայն առանձնահատուկ հմտությամբ աչքի էին ընկնում կահույքագործության, կառքերի ու բեռնակառքերի (ֆուրգոն) արդյունագործության մեջ. այդ արտադրանքները մեծ պահանջարկ ունեին արտաքին ու ներքին շուկաներում: Նշանավոր էր նրանց պատրաստած ուտեստները. աշնանը հայերից գնում էին մեծ քանակությամբ խոզեր, խոճկորներ, որոնց մսից նրանց պատրաստած որակյալ երշիկները, ապխտած խոզի ազդրերը (окорок, ветчина), հաջողությամբ սպառվում էին Ելիսավետպոլ, Թիֆլիս, Բաքու քաղաքներում և այլ վայրերում:[4]

Երկրագործության, շինարարության և ծանր այլ աշխատանքներում գերմանացի մասնագետներն օգտագործում էին վարձու աշխատանքը. վարձվում էին պանդուխտ պարսիկներ, լեզգիներ, հայեր՝ Գանձակ քաղաքից և շրջակա գյուղերից. «Այստեղ կան Գանձակից և Ոսկանապատ, Գետաշեն, Սուլակ, Միրզիկ, Հարցիանգիստ (Չավդառ), Բանանց և Բրաջուր գիւղերից թէ ընտանեօք և թէ սոսկական (անհաւ, միայնակ - Գ.Ա.) հայեր, որ զբաղվում են վաճառականութեամբ և տեսակ տեսակ արուեստներով: Ընտանեօք հայերն բաղկացած են 30

---

[1] "Вестник виноделия", СПБ, 1895, N1 ("Из Елисаветполя"), ст. 54.
[2] Նույնի, թիվ 9, էջ 567:
[3] Բարխուտարեանց Ս., նշվ. աշխ., էջ 55:
[4] "Кавказское сельское хозяйство", 1903, N503, ст. 1343-44.

գերդաստանից, իսկ սոսկական 30 անձից».[1] վերջին 30 միայնակ անձիք, հավանական է, հենց վարձու բանվորներ, ծառաներ, ռանչպարներ էին:

Սիայն Ելենենդորֆ գաղութն ուներ 8 ջրաղաց, դրանցից մեկը մեխանիկական շարժիչով աշխատեցնում էր 3 ջրաղացքար, իսկ մյուսն էլ ավելի կատարելագործված, ուներ 14 ջրաղացքար և դինամոմեքենա, այն գործադրվում էր էլեկտրական հոսանքով:[2]

1850-ական թվականներին, Ռուսաստանի Տավրիկյան նահանգից թվով 70 գերմանացի գաղութաբնակներ (մոտ 8-10 ընտանիք) տեղափոխվեցին Անդրկովկաս՝ Կասպյան մարզ և բնակություն հաստատեցին Ելիզավետպոլի գավառի հարևանությամբ:[3] Իսկ 1887 թվին Աննենֆելդ գաղութի մոտ հիմնադրվեց ևս մեկ այլ՝ Գեորգաֆելդ գաղութը: Սկզբնապես նրա բնակիչների թիվը եղել է 750 (երկսեռ) մարդ:[4] Սա ևս իր արտաքին տեսքով ու ապրելաձևով նման էր վերը նկարագրված գերմանական բնակավայրերին:

1850-ական թվականներին գերմանացիների թիվը Թիֆլիսի նահանգում կազմում էր 538 ընտանիք՝ 2742 (երկսեռ) մարդ, որից 351 ընտանիք 1340 մարդ ապրում էր Թիֆլիսի, իսկ 187 ընտանիք 1402 մարդ Ելիզավետպոլի գավառներում:[5] Հատկապես վերջին թվերը պետք է ընդունել մոտավոր, քանի որ Ելիսավետպոլի համար նշված ընտանիքների քանակի համեմատությամբ, մարդկանց թվաքանակը բավականին գերակշռող է ... 1886թ. մարդահամարի տվյալներով Ելիսավետպոլի նահանգի նույնանուն գավառում եղել է երկու գերմանական բնակավայր, ուր ապրում էին 955 արական և 973 իգական սեռի թվով 1928[6] մարդ, իսկ 1890թ. 347 ծուխ, 940 արական. և 962 իգական, ընդամենը 1902 մարդ:[7]

1897 թ. համառուսական հայտնի մարդահամարի տվյալներով, նահանգում (Ելիզավետպոլի) նրանց թիվը կազմում էր 3194 մարդ, որից 3086-ը բնակվում էր ~~նահանգի այլ վայրերում~~.[8] Ելենենդորֆում ապրում էին նաև այլազգիներ, որոնց թիվը քիչ էր՝ 30 հայ, 10 թաթար և 5 ռուս ընտանիքներ:[9]

Ամփոփելով նշենք, որ այս գաղթականներին Ռուսաստան և Անդրկովկաս հասցնելու և նրանց գաղութները հիմնելու գործում, ինչպես նկատեցինք ակտիվ

---

[1] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 55-56:
[2] СМОМПК, вып. XXIX,от. I, ч. II, ст. 10.
[3] АКАК, т. IX, ст. 680.
[4] «Տարազ», Թիֆլիս, 1912, թիվ 11, էջ 192:
[5] АКАК, т. X, ст. 109-110 (Отчет экспедиции государственных имуществ при гл-ом управ-ии Закавказского края за 1854 г.).
[6] Свод статис-их данных…населения Кавказа, за 1886г., Тифлис, 1888, ст. 440-41.
[7] Свод статис-их данных о населении Кавказ-го края, Тифлис, 1893, ст. VI-VII.
[8] Первая всеобщая перепись…1897г. (Елис-ая губ-ия), Тифлис, 1904, ст. 2-3.
[9] СМОМПК, вып. XXIX,от. I, ч. II, ст. 10.

դեր կատարեց և նյութական միջոցներ տրամադրեց ցարական կառավարությունը. դա միայն բարի, մարդկային վերաբերմունք չէր, այլ նաև պաշտոնական ծրագրված քաղաքականություն. «... որպեսզի գերմանացի վերաբնակիչները, հատկապես մահմեդականներին, աշխատասիրության, եվրոպական քաղաքակիրթ նիստ ու կացի օրինակ ծառայեին, ինչպես նաև երկրագործության, գինեգործության և այլ արտադրությունների գծով մասնագետների ապահովումը»:[1]

Սակայն այդ ձգտումները չիրականացան, քանի որ գերմանացի վերաբնակիչներն ապրում էին ներփակ, շրջապատից կտրված, մեկուսի կյանքով: Բնիկներին վերաբերվում էին արհամարհանքով, որպես ստորին, սև աշխատանքներ կատարող վարձկանների:

1829թ., երբ նշվեց Աննենֆելդ, Ելենենդորֆ գաղութների հիմնադրման 10 տարին, իմի բերելով նրանց մասին եղած տվյալները, նշվեց նաև հետևյալը. «Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս երկու գաղութների բնակիչներն այժմ գիտեն այն, ինչ որ գիտեին մինչև իրենց հայրենիքից հեռանալու ժամանակները. նրանք այստեղ նոր ոչինչ չարեցին և տեղացիներից էլ ոչ մի բան չընդունեցին...»:[2] Նրանք այդպես շարունակեցին նաև հետագայում: Այնպես որ ռուսական կառավարության ծրագրերը, ձգտումները և ջանքերը չարդարացան: Նման իրավիճակում հայտնվեցին նաև Ելիզավետպոլի նահանգի մյուս ազգերն ու ազգությունները. դա հատկապես երևաց 1870 թ. մայիսի 26-ի Անդրկովկասում իրագործվող գյուղացիական ռեֆորմի գործադրման ժամանակ: Նախ իշխանություններն այն կիրառելիս բախվեցին մի շատ կարևոր իրողության՝ մահմեդական ազգաբնակչության աշխատասիրության բացակայության հետ, որը և խանգարիչ խոչընդոտ էր հողային կայուն հարաբերությունների և արդյունաբերության կազմակերպման ու ստեղծման գործընթացներում:[3] Անհնար էր դառնում գյուղատնտեսության մեջ կիրառել աշխատանքի արդյունավետ մեթոդներ, քանի որ «հետամնաց, տգետ բնակչությունը թշնամաբար է տրամադրված աշխատանքին ու զարգացող տնտեսությանը, որովհետև սեփական կարիքները նա բավարարում է գողությամբ, թալանով, ավազակությամբ: Եվ պատահական չէ, որ Անդրկովկասի արևելյան հատվածը, որի մեջ մտնում է նաև Ելիզավետպոլի նահանգը, շատ հետ է մնում երկրամասի (Անդրկովկասի) արևմտյան հատվածներից»:[4] Բացառություն էին նախալեռներում ապրող հայ և

---

[1] МИЭБГКЗК, т. I, Тифлис, 1885, ч. II, ст. 105-106 (Никифоров Н.К., Экономический быт немецких колонистов в Закавказском крае).
[2] МИЭБГКЗК, т. I, ч. II, ст. 106. Տես նաև «Ազգագրական հանդես» Զ գիրք, էջ 232:
[3] Նույնի, ч. III, ст. 459 (Положение 1870 года).
[4] Воронцов Дашков И., նշվ. հաշվետվությունը, ст. 86-87.

ռուս քրիստոնյա բնակիչները, որոնք անգամ հողագործության ամենավատ պայմաններում, իրենց ապրուստը ձեռք էին բերում խաղաղ, ստեղծարար աշխատանքով[1] ... 1870 թ. ռեֆորմի իրականացման ընթացքը ցույց տվեց, որ Ելիզավետպոլի նահանգում հիշյալ ռեֆորմն այն արդյունքը չտվեց, ինչ որ սպասվում էր:[2] Սա ցույց է տալիս, որ նահանգում բնակվող հիշյալ ազգություններից յուրաքանչյուրն ապրում, աշխատում և ստեղծում է իր սովորություններին ու էությանը համապատասխան, յուրովի:

[1] МИЭБГКЗК, т. I, ч. II, ст. 459.
[2] Նույն տեղում, էջ 470:

# Հրեաներ

Հրեաները, ըստ Մ. Խորենացու՝ Անդրկովկասում հայտնվել են մոտավորապես 8-7-րդ դարերում մ.թ.ա. «Սա հրաչեայ կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ: Առ սովաւ ասեն կեցեալ զՆաբուգոդոնոսոր արքայ Բաբելայւոց, որ գերեաց զՀրեայս: Եւ սորա ասեն զմի ի գլխաւորաց Եբրայեցւոցն գերելոց խնդրեալ ի Նաբուգոդոնոսորայ՝ Շամբուք անուն, ածեալ բնակեցոյց յերկրիս մերում մեծաւ պատուով.»:[1] Իսկ Փ. Բուզանդի վկայությամբ՝ մ.թ.ա. I դարում Տիգրան Մեծը իր արշավանքների ժամանակ մեծ թվով հրեաների գերեվարելով տարել և բնակեցրել է Հայաստանի զանազան քաղաքներում:[2]

19-րդ դ. նրանց սերունդների փոքրաթիվ համայնքները հաստատված էին Վրաստանում, Հայաստանում և թաթարական ուղեմասերում: Աչքի էր ընկնում Նուխի գավառի Վարդաշեն գյուղաքաղաքը, «ուր 200 տարի առաջ հաստատվել էր հրեական 60 ընտանիք, որոնք իրենց թվաքանակով գերազանցում էին մյուս ազգերին. խոսում էին պարսկերեն, նրանց թաղամասը խիտ էր բնակեցված (կես քառ. մղոնի վրա 304 ծուխ)»:[3] Հետագայում այդ թաղամասը վերածվեց առանձին գյուղի, որը կոչվեց Ջհուդլար կամ Ջուգուշլար, Վարդաշենի հարևանությամբ: Տեղաբնակ թաթարները մշտապես հալածում էին հրեաներին. շատ դեպքերում առանց առիթի նրանց ծեծում, գանահարում ու մնում էին անպատիժ: Ժամանակակիցներից մեկի վկայությամբ. «Արևելքում հրեան շրջապատված լինելով մահմեդական ամբոխով, ենթարկվում էր նրանց ատելությանը, արհամարհանքին և ստորացուցիչ հալածական գործողություններին: Նա այստեղ չէր կարող մտահոգվել իր անձի վերահաստատմամբ ու գնահատմամբ. գոհ և ուրախ կլիներ, եթե նրան միայն հաջողվեր զերծ մնալ նրանց հարձակումներից ու անպատվաբեր վերաբերմունքներից»:[4]

Հրեաների հիմնական զբաղմունքները մանր առևտուրն էր և ծխախոտագործությունը. վերջինս գավառում նրանց մենաշնորհն էր: Ծխախոտը մշակում էին կալվածատիրական հողերի վրա. նրանք հող չունեին: Ստացված ծխախոտի փոխարեն հողատեր կալվածատերերը ծխախոտագործ հրեային վճարում

---

[1] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, գիրք I, գլ ԻԲ, էջ 68:
[2] Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 34,112, տես՝ Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս.Պետերբուրգ, 1883, Դ., Խե:
[3] СМОМПК, вып. XVIII,от. III, ст. 111 ("Евреи в селе Вардашен").
[4] Особые приваления к "Кавказу" 1868г., выпуск первый (Сливицкий И., "Кавказские евреи"), Тифлис, 1868, ст. 22-23.

էին ցորենով, բրնձով և դրամով, կամ ծխախոտի բերքը կիսվում էր երկու մասի: Հրեաների մոտ շատ ընդունված էր փոխանակային առևտուրը. իր բաժին ծխախոտը փոխանակում էր ցորենով, բոժոժով և այլն: Առևտրական ցանկացած գործարք շահավետ էր լինում հրեային. օրինակ, մեկ ֆունտ բոժոժի (40 կոպ. արժեքով) փոխարեն նա տալիս էր 1-2 կտոր օճառ, 8-10 կոպ. արժողությամբ:[1] Հրեա կանայք հմուտ մանրավաճառներ էին. հարևան բնակիչներին բերում էին բուրավետ քթախոտ (ծխախոտ), մանր-մունր տնտեսական ապրանքներ, առարկաներ, որոնք վաճառվում էին բավականաչափ թանկ գներով: Բացի դրանից, տնտեսուհիների պահանջով ու հանձնարարությամբ, կատարում էին տարբեր տեսակի տնային աշխատանքներ ու ծառայություններ, որոնց համար լավ վարձատրվում էին: Նա տուն էր վերադառնում դրամով, բազմազան ուտելիքներով և իրերով բեռնավորված: Նրանց մասին տարածված էր ասացվածք. «Հրեան ուր որ գնա, ձեռնունայն չի վերադառնա»: Չնայած հող չունեին, բայց նյութապես միշտ ապահով էին. ունեին այնքան դրամ, որ վարդաշենցի իրենց հարևաններին տալիս էին տոկոսով:[2]

Հրեաները շատ օգնում էին միմյանց. ունևորը պարտավոր էր իր ունեցածից բաժին հատկացնել յուր մերձավոր և հարևան հայրենակիցներին (օրինակելի վարքագիծ): Նրանք ապրում էին իրենց նահապետական նիստ ու կացով. հյուրասիրությամբ, մաքրությամբ (ի տարբերություն գերմանացիների), խիզախությամբ ու քաջությամբ աչքի չէին ընկնում: Շատ անփույթ ու փնթի էին կենցաղում. նրանց թաղամասերը անբարեկարգ՝ կեղտոտ ու ցեխոտ էին, հակասանիտարական, անմխիթար այս ապրելաձևը պատճառ էր դառնում վարակիչ հիվանդությունների առաջացման ու տարածման համար:[3]

Հրեաների թիվը Նուխի գավառում 1885-1886 թթ. տվյալներով կազմում էր 240 ծուխ, 1203 արական և 1079 իգական սեռերի թվով 2282 մարդ, որը կազմում էր Նուխի գավառի պետական գյուղացիության 3%-ը:[4] 1897թ. մարդահամարի տվյալներով, նրանց ընդհանուր թիվը նահանգում կազմում էր 2031 մարդ, որից 175-ը՝ քաղաքաբնակ:[5] Տվյալները ցույց են տալիս, որ գնալով նրանց թիվը Նուխի գավառում և ընդհանրապես նահանգում նվազում էր:

---

[1] СМОМПК, վերը նշված, 112:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] МИЭБГКЗК, т. VI, ч. II, ст. 18.
[5] Перепись… 1897 г. (Елис-ая губ-я) ст. VIII.

## Ամփոփում

Գանձակ-Ելիզավետպոլ նահանգի XIXդ. տարածքը դա հնամենի Արցախ, Ուտիք, Գարդմանք, Սյունիք և այլն հայկական պատմական երկրամասերն էին, իսկ տեղաբնիկները՝ հայերն և ուտիները: Մնացած ազգություններն այս երկրամաս էին ներթափանցել հետագա դարերում:

Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի բազմազգ բնակչության հիշյալ կազմը պահպանվեց XIXդ. ամբողջ ընթացքում և հետագայում նույնպես: Պաշտոնական վիճակագրության տվյալները վկայում են, որ ներգաղթի (հատկապես հայերի) և բնական աճի շնորհիվ մեծանում էր բնակչության թվաքանակը: Որպես օրինակ վերցնենք 1873 և 1886 թվերի ընտանեկան ցուցակների տվյալները[1] և համադրենք՝

| 1873 | | | 1886 | |
|---|---|---|---|---|
| Գավառները քաղաքների հետ միասին | Օխերի քանակը | Բնակչության (երկսեռ) թիվը | Օխերի քանակը | Բնակչության (երկսեռ) թիվը |
| 1. Ելիզավետպոլի | 14476 | 100050 | 20540 | 122888 |
| 2. Արեշի | 6763 | 37657 | 9619 | 51845 |
| 3. Ջեբրաիլի | 6742 | 41032 | 8663 | 46402 |
| 4. Ջևանշիրի | 8025 | 48233 | 9694 | 54950 |
| 5. Զանգեզուրի | 15191 | 87948 | 19447 | 123997 |
| 6. Ղազախի | 9933 | 74852 | 11524 | 84888 |
| 7. Նուխիի | 16577 | 94375 | 21637 | 117013 |
| 8. Շուշիի | 15839 | 102703 | 22715 | 126268 |
| Ընդամենը | 93546 | 587450 | 123839 | 728251 |

Ստացվում է, որ 1886թ. 1873 թվի համեմատությամբ (13 տարվա ընթացքում) օխերի թիվը աճել էր 32,3%-ով, իսկ բնակչության թիվը 23,9՝ մոտ 24%:

[1] Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа, Тифлис, 1888, ст. I

## Բովանդակություն


1. Երկու խոսք.....3
2. Գանձակը (գավառ, նահանգ) Անդրկովկասի վարչատարածքային համակարգում (XIXդ.)..... 4
3. Գանձակ-Ելիզավետպոլի պատմաաշխարհագրական դիրքը.....13
4. Գանձակը Անդրկովկասի XIX դարի վարչաժողովրդագրական համակարգում.....17
5. Հայեր.....20
6. Ուտիներ.....55
7. Մահմեդական էքնիկ տարրերի մուտքը այս տարածաշրջան.....63
8. Քրդեր.....69
9. Ռուսներ.....87
10. Գերմանացիներ.....98
11. Հրեաներ.....107
12. Ամփոփում.....109

A II 30702